

# ԷՋՄԻԱԾԻՆ

1973

ԺԱ

Լ

ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Նոյեմբեր

1973

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Խաղաղությունը Աստծո պարգևն է և մարդկության կամքը . 3

Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովը Մոսկվայում . . . . . . 6

ՆԵՐՍԵՍ Ծ. ՎՐԴ. ՊՈԶԱՊԱԼՅԱՆ—Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնական կոմիտեի 25-րդ գումարումը Ժնևի կենտրոնատեղիի մեջ . . . 19

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նամակը Ամերիկայի Միացյալ Նահանգաց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանին՝ ԱՄՆ-ի հայոց առաջնորդարանի և հայ ավետարանական համայնքների ներկայացուցիչների միջև Նյու-Յորքում կայացած հանդիպումների մասին . . . . . . 25

Հայտարարություն . . . . . . . . . . . . . 30

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ . . . . . . . . . . . . . 31

Ն. ՏՈԿԱՐՍԿԻ—Անիի ստորգետնյա եկեղեցիները . . . . . . . 34

ՍԶՆԻԿ ԱՐԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Մովսես Երզնկացու «Համառոտ մեկնութեան սրբոյ պատարագին, որ յառաջագոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարցն» աշխատությունը . . . . . . . . . . . 49

Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի . . . . . . . . . 49

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Ռումինահայ թեմի պատգամավորական ժողովը . . . . . . . 65

Փարիզի՝ Սերի Սամվել Մուրադյան հայկական վարժարանի նոր շենքի բացումը 66

Ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված հանդիսություն Վենետիկի ս. Ղազար վանքում . . . . . . . . . . 66



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Redaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 6/XI 1978 թ.: Ստորագրված է տպագրության 11/XII 1978 թ.:

Տպագրական 4 մամուլ+1 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 762:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1978 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԷՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

 

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՈՒԾՈ ՊԱՐԳԵՎՆ Է ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԿԱՄՔԸ

Հոկտեմբերի 25-31 օրերին Մոսկվայում, Կրեմլի համագումարների դահլիճում, գումարվեց Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովը՝ հանուն միջազգային անվտանգության և զինաթափման, հանուն ազգային անկախության, համագործակցության և խաղաղության։

«Էջմիածին» ամսագրի սույն համարի հաջորդ էջերում հանգամանորեն խոսվում է Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովի աշխատանքների մասին։

Համաժողովին մասնակցում էին աշխարհի 144 տարբեր երկրների հասարակական, գիտական, մշակութային, աշխատավորական, կանանց, երիտասարդական կազմակերպությունների 3200 պատգամավորներ և ավելի քան 1500 դիտորդներ, հյուրեր, որոնք ներկայացուցիչներն էին աշխարհի բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց, և իրենց ելույթներում արտահայտում էին երկրագնդի բոլոր խաղաղասեր ուժերի ամենանվիրական խոհերն ու զգացմունքները, հույսերն ու իղձերը և միահամուռ պահանջում էին խաղաղություն ու բարօրություն աշխարհին և բովանդակ մարդկությանը։

Սույն համաժողովին իրենց լայն մասնակցությունն էին բերել նաև քրիստոնեական եկեղեցիները՝ իրենց հոգևոր պետերով և բարձրաստիճան ներկայացուցիչներով, ինչպես նաև այլ կրոնների բազում պատգամավորներ։

Խաղաղասեր ուժերի Մոսկվայի սույն համաժողովին հրավիրվել էր նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցին։ Մեր եկեղեցու պատգամավորությունը գլխավորում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ տանելով անձամբ Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Հայաստանյայց առաքելական եկեղեցու ողջույնն ու օրհնությունը խաղաղության այդ վեհաժողովին։

Տասը հոգուց բաղկացած մի այլ պատվիրակություն ներկայացնում էր համաժողովին Սովետական Հայաստանը։

Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովը պատմական ու նշանակալից իրադարձություն էր՝ մեր օրերին ժողովուրդների՝ հանուն խաղաղության մղած պայքարի պատմության մեջ։

Սույն համաժողովը ամենաշատ ներկայացուցիչներ ունեցող համախմբումն էր, քան խաղաղության պաշտպանությանը նվիրված և մինչև այժմ եղած նախկին խաղաղության համաժողովները։ Այս հանգամանքը կարելի է համարել համաժողովի անվիճելի նվաճումը։

Այժմ ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ լայն տեղ է գրավել այն համոզմունքը, թե անհրաժեշտ է և հնարավոր միջազգային համաժողովների մեջ ամրապնդել խաղաղ գոյակցության սկզբունքը։

Խաղաղասեր ուժերի համաժողովը այսպիսի աննախընթաց ներկայացուցչական

քնույթով և իր օրակարգի վրա դրված կարևորագույն հարցերի ընդգրկումով հնարավոր դարձավ ողջ աշխարհում վերջերս հասարակական-քաղաքական կլիմայի նպաստավոր փոփոխության, միջազգային լարվածության թուլացման շնորհիվ՝ հօգուտ խաղաղության։

Այսօր, ավելի քան երբեք, մխիթարական է և հուսադրիչ արձանագրել, որ ողջ աշխարհում ընդհանուր խաղաղության պահպանման հեռանկարները ավելի իրական են ու շոշափելի, ավելի հուսալի, քան երբևէ։ Ահա՛ թե ինչու այնքան համոզի՛չ, իրա՛վ ու ջերմագի՛ն էին հնչում համաժողովի բարձր բեմից խոսքեր և ելույթներ՝ որպես կոչեր՝ ամրապնդելու խաղաղությունը, որ Աստուծո պարգևն է աշխարհին, երազանքը՝ մարդկության, կոչեր՝ պայքարելու հանուն մարդկանց երջանկության, բարօրության, հանուն սոցիալական հառաջադիմության։

Աշխարհում խաղաղության հասնելու, ժողովուրդների անվտանգությունը ապահովելու, լարվածության մթնոլորտը թուլացնելու, ռազմական գերածախսերի դեմ պայքարելու, սպառազինությունները կրճատելու համար, որոնք ծանր բեռի նման ընկել են աշխատավոր ժողովուրդների ուսերի վրա, անհրաժեշտ են կոլեկտիվ ջանքեր, հետևողական աշխատանք, կորով ու վճռականություն։

«Բռունցք յափշտակեսցեն զխաղաղութիւն»։

Մխիթարական է արձանագրել, որ որոշակի հուսադրող և քաջալերիչ արդյունքներ կան միջազգային դրության կարգավորման բնագավառում, դեպի ընդհանուր խաղաղությունն ու անվտանգությունը։ Բայց, միաժամանակ, դեռևս գոյություն ունեն միջազգային հարաբերություններում սուր և փշոտ հարցեր և դրանց հետ կապված վտանգներ։

Վե՛րջ պատերազմին։ Հասել է պահը վրճռական շրջադարձ կատարելու և կոլեկտիվ աշխատանքներով փակելու պատերազմ տանող բոլոր ճանապարհները։

Խաղաղությունը ստեղծագործություն է, կառուցում է, աշխատանք ու աղոթք է, պարգևը Աստուծո և կամքը մարդկության։

Պատերազմը ոճիր է Աստուծո դեմ, երկընքի դեմ, քաղաքակրթության և մարդկության դեմ, վեհ ու ազնիվ իդեալների դեմ։

Ահա թե ինչու խաղաղության համաժողովներում միշտ ու ամենուրեք հնչել է նաև քրիստոնեական եկեղեցու ձայնը, Ավետարանի խաղաղասիրական, համամարդկային սկզբունքների վեհ դրոշի ներքո։

«Եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։

Խաղաղասեր ուժերի համաժողովում դարձյալ հնչեց վճռական ու միահամուռ կերպով քրիստոնեական եկեղեցու և բոլոր կրոնների ներկայացուցիչների արդար և աստվածահաճո ձայնը՝ ի նպաստ արդարության և խաղաղության։

Այստեղ մասնավոր կարևորությամբ պետք է նշել հոկտեմբերի 27-ին, երեկոյան ժամը 21-ին, Մոսկվայի ռուսաց ս. Այլակերպություն տաճարում տեղի ունեցած էկումենիկ մասնավոր աղոթքը, որին մասնակցում էին՝ Խաղաղասեր ուժերի Մոսկվայի համաժողովի հոգևորական պատգամավորները՝ եկեղեցու հոգևոր պետերը և այլ կրոնական ներկայացուցիչները։ Էկումենիկ սույն աղոթքի հիմնական նյութն էր՝ «Եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» Ավետարանի խաղաղության պատգամը՝ որպես պարգևը Աստուծո։

Հուզիչ էր արձանագրել, որ տաճարի կամարների տակ, տարբեր լեզուներով, բայց միահամուռ կամքով հնչում էր խաղաղություն բառը։

Հոկտեմբերի 29-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, նախապես կազմված ծրագրի համաձայն, Զագորսկի Տրոիցկի-Սերգիևյան ռուսական մայրավանքում տեղի ունեցավ համաժողովի մասնակից հոգևորականության պաշտոնական հանդիպում կամ մեկօրյա հավաքույթ՝ նվիրված խաղաղության պաշտպանության՝ մասնակցությամբ եկեղեցիների և կրոնական տարբեր դավանությունների հոգևորական ավելի քան 900 պատգամավորների։

Սույն հանդիպման ժամանակ «Ժամանակակից միջազգային դրության դրական հաշվեկշռի մեջ մենք՝ խաղաղության կողմնակիցների շարժման կրոնական գործիչներս, անկասկած ունենք մեր մասնակցությունը», ասաց Իր ելույթում ռուսաց Ամեն. Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը, «և մենք պետք է մտածենք նաև կրոնական գործիչների և բարի կամեցողության տեր բոլոր մարդկանց ջանքերի միավորման ուղիների և միջոցների մասին, միատեղ, միակամ և սերտորեն համագործակցելու ամբողջ մարդկության լավագույն ապագայի համար»։

Համաժողովի մասնակից հոգևորականության սույն հանդիպման ժամանակ ողջույնի գեղեցիկ և բովանդակալից ճառով հանդես եկավ նաև Ամենայն Հայոց Հայրապետը՝ Իր հեղինակավոր ձայնը ասելու հանուն հայ եկեղեցու և արտահայտելու «հանուն անցյալում երկար դարեր տառապած, բայց

այսօր վերածնված հայ ժողովրդի» խաղաղության տենչանքն ու խաղաղասիրական ձգտումները:

«Թեև մեր աշխարհը տակավին հեռու է տևական խաղաղության մի գոյավիճակից, սակայն մենք բոլորս՝ այստեղ հավաքվածներս, հավատում ենք անսասան կերպով, թե Աստուծո հաճելի է մեր նպատակը և մեր գործը: Մենք նույն չափով հավատում ենք նաև, թե բոլոր ժողովուրդների լայն զանգվածները վճռապես կամենում են ապրել ու աշխատել մի խաղաղ աշխարհի մեջ...

...Մեր երկրագնդի բոլոր ժողովուրդները հետզհետե արթնանում են և իրենց կենսական, իրական շահերի լույսի տակ տեսնում, թե իրենց կյանքի բարօրությունը, իրենց զավակների երջանկությունը հնարավոր է ապահովել ոչ թե ազգամիջյան թշնամություններով, ոչ թե պատերազմներով, այլ ժողովուրդների բարեկամությամբ, պետությունների տնտեսական, գիտական ու մշակութային գործակցությամբ, խաղաղ գոյակցության պայմաններում...»:

Հաճելի է արձանագրել, որ հոգևորականաց այս հանդիպմանը տարբեր կրոնների ներկայացուցիչների կողմից տիրական շեշտով, միասնական կամքով և վճռականությամբ հնչեց խաղաղության ձայնը, մարդասիրական վեհ իդեալների և համամարդկային եղբայրության համար:

Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովի կոչերը, պատգամները ու ընդունված բանաձևերը կհանդիսանան բարոյական մի նոր խթան ժողովուրդների ազնիվ պայքարի ճանապարհին՝ հանուն եղբայրության, սիրո և միջազգային խաղաղության և անվտանգության:

Այո՛, խաղաղությունը կհաղթանակի, խաղաղությունը կապրի և կապրեցնի աշխարհի և մարդկանց մտքի ստեղծած հոգևոր, մշակութային, նյութական հոյակապ արժեքները, ողջ քաղաքակրթությունը, որովհետև խաղաղությունը Աստուծո կամքն է և պահանջը մարդկության:

Խաղաղությունը մարդկության պայծառ ապագան է:

Մարդկությունը կարող է ապրել առանց պատերազմի: Անզեն աշխարհը մեծ բարիք է համայն մարդկության համար: Կան աշխարհում հզոր ուժեր, որոնք կարող են վճռականորեն փակել նոր պատերազմների արյունոտ ճանապարհները և մարդկությունը փրկել ահավոր վտանգներից:

Հոկտեմբերի 31-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, փակվեց Խաղաղասեր ուժերի Մոսկվայի համաժողովը՝ Բեթհովենի իններորդ սիմֆոնիայի վերջաբանի հանդիսավոր և հաղթական հնչյունների ներքո, աշխարհում կայուն և տևական խաղաղության հաղթանակի, ժողովուրդների համագործակցության և մարդկության պայծառ ապագայի նկատմամբ լավատեսության հույսերով և անկոտրում հավատքով:

Թող չքանան պատերազմի մահաբեր ամպերը և մարդկության վերև միշտ պայծառ ու ջինջ մնա խաղաղության երկնակամարը:





# ԽԱՂԱՂԱՍԵՐ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

1973 թ. հոկտեմբերի 25—31 օրերին Մոսկվայում, Կրեմլի համագումարների պալատի հանդիսության շքեղ դահլիճում, գումարվեց Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովը՝ հանուն միջազգային անվտանգության և զինաթափման, հանուն ազգային անկախության, համագործակցության և խաղաղության:

Սույն համաժողովին հրավիրվել էր նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցին: Հայ եկեղեցու պատվիրակությունը գլխավորում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, որին ընկերակցում էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Ռուսաստանի ու Հյուսիսային Կովկասի հայոց թեմի առաջնորդ տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը և տ. Հակոբ քահանա Գյոկչյանը՝ որպես գավազանակիր Վեհափառ Հայրապետի:

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՄՈՍԿՎԱ

Հոկտեմբերի 23-ին, երեքշաբթի օրը, Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետին դեպի Մոսկվա ճանապարհեցին տ. Հուսիկ և տ. Արսեն եպիսկոպոսները, տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը, տ. Մուշեղ և տ. Աղան վարդապետները, Մայր Աթոռի պատասխանատու աշխատողներն ու պաշտոնեությունը:

Հայոց Հայրապետին ճանապարհեցին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Սուրեն Հովհաննիսյանը:

Հայոց Հայրապետին ողջունելու համար օդանավակայան էին ժամանել ռուս պրավոսլավ եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Պիմենը՝ շրջապատված Յուվենալի, Սերաֆիմ միտրոպոլիտներով, ռուս եկեղեցու բարձրաստիճան այլ հոգևորականներով և պատրիարքարանի պատասխանատու աշխատողներով:

Երկու քույր եկեղեցիների հոգևոր պետերը ջերմորեն ողջագուրվեցին: Դոմոդեդովոյի օդանավակայանում երկու հովվապետների և նրանց շքախմբի անդամների միջև տեղի ունեցավ եղբայրական ջերմ զրույց:

Մոսկվայի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի հայոց առաջնորդ տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը, Մոսկվայի հայ եկեղեցական խորհրդի անդամները, ինչպես նաև հայ հավատացյալներ:

Հայոց Հայրապետի ժամանումը Մոսկվա ողջունեց նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևը:

Այնուհետև Հայոց Հայրապետը առաջնորդվեց «Մոսկվա» հյուրանոց:

## ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՈՒՄԸ

Հոկտեմբերի 25-ին, հինգշաբթի օրը, ժամը 16-ին, Մոսկվայում, Համագումարների պալատի մեծ դահլիճում հանդիսավոր իրադրության մեջ և խանդավառ մթնոլորտում բացվեց Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովը: Հինգհազարանոց ընդարձակ դահլիճը լեփ-լեցուն էր աշխարհի 144 տարբեր երկրներ ներկայացնող հասարակական, գիտական, մշակութային, աշխատավորական, երիտասարդական, կանանց ավելի քան 3200 պատգամավորներով և ավելի քան 1500 հյուրերով: Համաժողովին մասնակցում էին ՄԱԿ-ի շրջանակի մեջ մտնող և 117 միջազգային և տեղականշրջանային կազմակերպություններ:

Սույն համաժողովին իրենց լայն մասնակցությունը բերել էին նաև վերոհիշյալ երկրների քրիստոնեական եկեղեցիները, իրենց հոգևոր պետերով կամ բարձրաստիճան ներկայացուցիչներով, ինչպես նաև այլ կրոնների բազում ներկայացուցիչներ:

Համաժողովին մասնակցում էր նաև Սովետական Միությունը՝ եղբայրական հանրապետությունների, մշակութային-հասարակական կազմակերպությունների 220 հոգուց բաղկացած պատվիրակությամբ, որի կազմում էր մեր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի 10 հոգուց բաղկացած պատվիրակությունը:

Համաժողովը ներածական ճառով բաց արեց այն նախապատրաստող կոմիտեի անունից Միջազգային խաղաղության բյուրոյի նախագահ Շոն Մակբրայդը: Համաժողովի նախագահ ընտրվեց հնդիկ հասարակական հայտնի գործիչ, Խաղաղության համաշխարհային համաժողովի միջազգային նախապատրաստական կոմիտեի գործադիր կոմիտեի նախագահ Ռոմեշ Չանդրան, որը ձեռնհասորեն ղեկավարեց համաժողովի աշխատանքները:

Համաժողովի այս առաջին լիագումար նիստում ընթերցվեցին զանազան երկրների պետական ղեկավարներից և հասարակական մի շարք անվանի գործիչներից ու գիտնականներից ստացված ողջույնի բազում հեռագրեր և ուղերձներ, այդ թվում նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կուրտ Վալդհայմի, Յունեսկո-ի գլխավոր դիրեկտոր Ռընե Մայոյի և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար Ֆիլիպ Փոթըրի անունից ուղարկված ուղերձները:

Հոկտեմբերի 26-ին, ուրբաթ օրը, ժամը 15.30-ին, տեղի ունեցավ համաժողովի երկրորդ լիագումար նիստը, ուր հանուն սովետական կառավարության ու ժողովրդի ընդարձակ և բովանդակալից ճառով հանդես եկավ

Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը՝ ջերմորեն ողջունելով համաժողովի բոլոր պատգամավորներին և սրտագին հաջողություններ մաղթելով հանուն խաղաղության, հանուն զինաթափման, հանուն միջազգային անվտանգության և հանուն ազգային անկախության ու համագործակցության համաժողովի աշխատանքներին:

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

Համաժողովի օրակարգում դրված էին ժամանակակից աշխարհն ու մարդկությունը հուզող արդիական հրատապ հարցեր, որոնք մանրամասնորեն ուսումնասիրվեցին ու քննարկվեցին համաժողովին առընթեր կազմըված 14 հանձնաժողովներում՝ ըստ հետևյալների.

1. Խաղաղ գոյակցություն և միջազգային անվտանգություն.
2. Հնդկաչինի հարց.
3. Մերձավոր Արևելքի հարց.
4. Անվտանգությունն ու համագործակցությունը Եվրոպայում.
5. Ասիայի խաղաղությունն ու անվտանգությունը.
6. Զինաթափում.
7. Ազգային-ազատագրական պայքարը գաղութատիրության և ռասիզմի դեմ.
8. Զարգացում և տնտեսական անկախություն.
9. Համագործակցություն շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում.
10. Համագործակցություն կրթության և մշակույթի բնագավառում.
11. Տնտեսական և գիտա-տեխնիկական համագործակցություն.
12. Սոցիալական հարցերը և մարդու իրավունքները.
13. Միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների համագործակցություն.
14. Չիլիի հարց:

Հայ եկեղեցին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, մասնակցում էր Մերձավոր Արևելքի հարցը քննող հանձնաժողովի աշխատանքներին:

Վերիհիշյալ 14 հանձնաժողովներում մի շարք նիստերի ընթացքում հանգամանորեն քննության առնվեցին համաժողովի օրակարգում դրված սույն հարցերը և մտքերի լայն փոխանակությունից հետո ընդունվեցին համապատասխան որոշումներ, որոնք այնուհետև գրավոր կերպով ներկայացվեցին համաժողովի եզրափակիչ լիագումար նիստին:

## ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ

Հոկտեմբերի 27-ին, երեկոյան ժամը 21-ին, Մոսկվայի ռուսաց ս. Այլակերպություն տաճարում, տեղի ունեցավ էկումենիկ աղոթք, որին ներկա եղան համաժողովի հոգևորական պատգամավորներ, ռուսաց Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը՝ ռուս բարձրաստիճան հոգևորականներով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ իր եպիսկոպոսներով, Բուլղարիայի Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքը, վրաց Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը, Ռումինիայի Ժուստինիան միտրոպոլիտը, Հունգարիայի կաթոլիկ արքեպիսկոպոսը, կաթոլիկ, անգլիկան եպիսկոպոսներ, ավետարանականներ և այլ դավանանքի հոգևոր բազում ներկայացուցիչներ:



ԽԱՂԱՂԱՍԵՐ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԶԱԳՈՐՍԿԻ ՎԱՆՔՈՒՄ

Հուզիչ է արձանագրել, որ բոլորի աղոթքի հիմնական նյութը «Եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» Ավետարանի խաղաղության պատգամն էր։ Տարբեր լեզուներով, բայց միահամուռ կամքով հնչում էր խաղաղություն բառը։

Տաճարի երգեցիկ խումբը մեծ վայելչությամբ հնչեցրեց խաղաղության նվիրված հոգևոր մեղեդիներ։ Տարբեր լեզուներով ընթերցվեցին Ավետարաններից և առաքելական թղթերից քաղված և խաղաղությանը նվիրված զմայլելի էջեր։ Բոլոր ներկաների մտածումների և զգացումների արտահայտիչը հանդիսացավ Արևմտյան Գերմանիայի պատգամավոր վերապատվելի Հերբերտ Մոխալսկին, որը խաղաղության և քրիստոնեական համագործակցության ոգով քարոզեց «Խաղաղությունը մեր Տեր Աստուծո պարգևն է» բնաբանով։

## Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ ՌՈՒՍԱՑ ԵԼՈԽՈՎՍԿԱՅԱ ՏԱՃԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 28-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, ռուսաց Ելոխովսկայա տաճարում ս. պատարագ մատուցեց Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը։

Ս. պատարագին մասնակցում էին վրաց Դավիթ Ե Սրբազան Պատրիարք-կաթողիկոսը, Բուլղարիայի Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքը և 8 ռուս միտրոպոլիտներ և արքեպիսկոպոսներ։

Մասնավոր հրավերով ս. պատարագին ներկա էր նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ ընկերակցությամբ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի։

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը տ. Կոմիտաս սրբազանի հետ մասնակցեց ռուսաց պատրիարքարանում կազմակերպված մասնավոր ճաշկերույթին, որը իսկապես վերածվեց քրիստոնեական սիրո ճաշի։

## ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԶԱԳՈՐՍԿԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՅՐԱՎԱՆՔՈՒՄ

Հոկտեմբերի 29-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, Զագորսկի Տրոիցկի-Սերգեևյան մայրավանքում տեղի ունեցավ հատուկ ծրագրով նախատեսված և կազմակերպված մեկօրյա հավաքույթ՝ մասնակցությամբ եկեղեցիների և կրոնական տարբեր դավանությունների հոգևորական 300 պատգամավորների։

Սույն մասնավոր հանդիպումը բաց արեց Նորին Սրբություն ռուսաց Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը հետևյալ բովանդակությամբ ողջույնի խոսքով.

«Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովի հարգարժան մասնակիցնե՛ր, տարբեր կրոնների հետևորդնե՛ր, մեր թանկագին հյուրե՛ր, սիրեցյալ եղբայրնե՛ր և քույրե՛ր.

Մենք համոզված ենք, որ մարդկության պատմության ընթացքը կարող է իսկապես խաղաղ և արդյունավետ լինել միմիայն ազգային և միջազգային հասարակայնության ամենալայն շրջանների, ինչպիսիք են քաղաքական կուսակցությունները, արհեստակցական միությունները, կրոնական կազմակերպությունները, պառլամենտական շրջանակները, գիտության և մշակույթի

գործիչները, կանայք և երիտասարդությունը,—համատեղ խաղաղասիրական գործունեության շնորհիվ։ Մոսկվայի սույն համաժողովը կարող է շատ բան անել այդ ուղղությամբ, որովհետև այն հանդիսանում է թվով ամենաշատ ներկայացուցիչներ ունեցող համաժողով, քան խաղաղության պաշտպանությանը նվիրված մինչ այժմ եղած համաշխարհային նախկին համաժողովները։ Այս հանգամանքը մենք համարում ենք սույն համաժողովի անլիճելի նվաճումը և ջերմորեն շնորհավորում ենք այն։ Մենք խորին գոհունակությամբ ենք նշում նաև այն, որ այս համաժողովին են ժամանել աշխարհի տարբեր կրոնների մեծ թվով ներկայացուցիչներ։ Դա շատ նշանակալից երևույթ է։

Մենք հավատացած ենք, որ ներկայումս յուրաքանչյուր երկրի խաղաղասեր հասարակայնության առաջնահերթ խնդիրն է համախմբել ջանքերը միջազգային կայուն և արդարացի խաղաղության հասնելու համար։ Մոսկըվայի համաժողովը հիանալի հնարավորություններ է ընձեռում այդ ուղղությամբ։

Մենք հավատացած ենք նաև, որ ներկա պահը ավելի բարենպաստ է նման ներկայացուցչական կարևոր ժողով անցկացնելու համար՝ նույնքան կարևոր խնդիրներով։

Մեր օրերը նշանակալից են նրանով, որ պետական ու հասարակական գործիչների, գիտության և մշակույթի մարդկանց, կրոնական ղեկավարների, ժողովրդական լայն զանգվածների գիտակցության մեջ ավելի ու ավելի թափանցում է այն համոզումը, որ անհրաժեշտ է միջազգային հարաբերությունների մեջ ամրապնդել խաղաղ գոյակցության սկզբունքը, հասնել ատոմային և ջրածնային զենքի լրիվ արգելմանը, ազատել գաղութարարությունից, նոր գաղութարարությունից և ցեղային խտրականությունից տառապող բազմաթիվ ժողովուրդների, սահմանել ու զարգացնել բոլոր պետությունների համագործակցությունը տնտեսական, մշակութային, գիտական և այլ բնագավառներում և ապահովել շրջակա միջավայրը աղտոտումից։

Ինչպես ռուս ուղղափառ եկեղեցու, այնպես էլ մեր երկրի մյուս եկեղեցական և կրոնական համայնքների գործունեության մեջ մեծ տեղ է գրավում խաղաղասիրական ծառայությունը։ Ես չեմ ուզում այդ մասին մանրամասն հաշվետվություն տալ այստեղ։ Ես կամենում եմ նշել, որ խաղաղության կողմնակիցների միջազգային շարժման ծագումից (1949 թվականի փետրվար) սկսած ռուս ուղղափառ եկեղեցին մշտապես իր ամենագործոն մասնակցությունն է բերում այդ շարժմանը։

Ես հատկապես ուզում եմ նշել մեր գործոն մասնակցությունը Խաղաղության սովետական ֆոնդին, որը դրամական նվիրատվություններ է հավաքում ֆինանսավորելու համար մեր հասարակական կազմակերպություններին, որոնք զբաղվում են միջազգային խաղաղության և համագործակցության հարցերով։

Ժողովուրդների միջև խաղաղության հաստատման գործին մենք մեր զգալի նպաստն ենք բերում միջեկեղեցական հարաբերությունների և էկումենիկ շփումների գծով։

Ես կարծում եմ, որ մեր աշխատանքների համար խիստ օգտակար կլինի ժամանակակից միջազգային կյանքի առավել էական երևույթների վերլուծությունը, որով, վստահ եմ, հանդես պիտի գան աշխարհի այն շրջաններից ժամանած մեր եղբայրները, ուր տեղի են ունենում այդ իրադարձությունները։

Պատերազմի դադարեցումը Վիետնամում, որը անվիճելի հաղթանակն

է այդ երկրի հերոսական ժողովրդի, միևնույն ժամանակ հաղթանակն է նաև խաղաղության բոլոր ուժերի: Մեզ բոլորիս քաջ հայտնի է աշխարհի՝ բառացիորեն բոլոր երկրների եկեղեցիների, կրոնական համայնքների և կազմակերպությունների ամենօրյա եռանդուն մասնակցությունը ի նպաստ Վիետնամի հայրենասերների արդար պայքարի:

Վերցնենք Եվրոպայի իրադարձությունները: Աշխարհի այս մայր ցամաքում դեպքերի բարենպաստ զարգացումը, որին մենք վկա ենք, նույնպես տեղի է ունենում Եվրոպայի խաղաղասեր հասարակայնության գործոն մասնակցությամբ:

Նույնը մենք կարող ենք ասել բազմաթիվ եկեղեցիների ու կրոնական շրջանակների դերի մասին՝ զինաթափման խիստ բարդ խնդիրների լուծման համար բարենպաստ, պայմաններ ստեղծելու գործում: Մենք բոլորս՝ իբրև համաշխարհային նշանակություն ունեցող զինաթափման գործի հաջողության համար աշխատողներս, ներկայիս կարող ենք գոհունակության զգացում տածել այն որոշակի առաջադիմության համար, որը նկատվում է այդ դժվարին ճանապարհին:

Այսպիսով, ժամանակակից միջազգային դրության դրական հաշվեկշռի մեջ մենք՝ խաղաղության կողմնակիցների շարժման կրոնական գործիչներս, անկասկած ունենք մեր մասնակցությունը: Դա պետք է մեզ ավելի շատ եռանդ ներշնչի ապագա գործունեության համար:

Սակայն խորը ցավով պետք է ասել, որ ժամանակակից միջազգային դրության մեջ քիչ բան կարող է մեզ ուրախացնել: Դրությունը Մերձավոր Արևելքում շարունակում է մնալ ծայր աստիճան վտանգավոր: Ձեզ քաջ հայտնի է, որ համաշխարհային հասարակայնության հետ միասին, եկեղեցական և կրոնական զանազան համայնքների կողմից շատ ու շատ բան է արված մերձավորարևելյան ճգնաժամի ուղղությամբ, այդ ճգնաժամը Անվտանգության խորհրդի 1967 թ. նոյեմբերի 22-ի հայտնի որոշման հիման վրա լուծելու ուղղությամբ: Մնում է ցավել, որ հաջողության ձեռք չբերվեց, հարկավ, ոչ խաղաղասեր ուժերի մեղքով:

Ողբերգական դեպքերը Չիլիում կրոնական շատ շրջանակների ստիպեցին հանդես բերել արագ և վճռական վերաբերմունք: Ես կնշեմ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրի հայտարարությունը՝ ի պաշտպանություն Չիլիում գտնվող լատինաամերիկյան տարագիրների մեծ ճամբարի, ինչպես նաև Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի աշխատանքային կոմիտեի հայտարարությունը Չիլիում տեղի ունեցած զինվորական հեղաշրջման մասին, որի մեջ կոչ է արվում բոլոր քրիստոնյաներին և բարի կամքի տեր մարդկանց ձգտել վերականգնելու այդ երկրում արդարությունը և մարդկային իրավունքները:

Մեր աղոթքները, մեր համակրանքը և աջակցությունը ուղղված են մեր եղբայրներին՝ Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի քաջարի մարտիկներին, որոնք պայքարում են իրենց ժողովուրդների ազգային անկախության և սոցիալական առաջադիմության համար:

Մենք գիտենք, ինչքան էլ որ մեզանից յուրաքանչյուրը գործոն և նպատակասլաց կերպով պայքարելու լինի խաղաղության համար, այդ պայքարը հաջողություն կունենա միմիայն մեր խաղաղասիրական ջանքերի համախմբման պայմաններում:

Մենք պետք է մտածենք նաև կրոնական գործիչների և բարի կամեցողության տեր բոլոր մարդկանց ջանքերի միավորման ուղիների և միջոցների

մասին՝ միասին, միակամ և սերտորեն համագործակցելու ամբողջ մարդկության լավագույն ապագայի համար։ Մենք միասնաբար ենք նրանց հետ՝ հասնելու համար այնպիսի մի աշխարհի ստեղծմանը, ուր չեն լինի պատերազմներ, մի աշխարհ, ուր ամեն մարդ կունենա բոլոր անհրաժեշտ միջոցները իր անձի ազատ զարգացման համար, աշխարհ, որի մեջ ներդաշնակորեն կզուգակցվեն անհատի շահերը հասարակայնության շահերի հետ։

Բարու և ճշմարտության վերջնական հաղթանակի հավատով լեցուն, վերուստ քաշխվող օրհնությամբ, անցենք, թանկագին եղբայրներ ու քույրեր, մեր աշխատանքներին»։

Սույն հանդիպմանը հանդես եկավ նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ֆրանսերեն լեզվով արտասանված հետևյալ ճառով։

«Սիրեցյալ եղբայրներ Մեր,

Աստուծո ողորմությամբ Մենք վերստին ենք հավաքվել այստեղ, ռուս ժողովրդի պրավոսլավ հավատքի պատմական կենտրոն այս սուրբ վանքի կամարների ներքո, ներշնչված ավետարանական սիրո և խաղաղության ոգով։

Թեև մեր աշխարհը տակավին հեռու է տևական խաղաղության մի գոյավիճակից, սակայն մենք բոլորս՝ այստեղ հավաքվածներս, հավատում ենք անսասան կերպով, թե Աստուծո հաճելի է մեր նպատակը և մեր գործը։ Մենք նույն չափով հավատում ենք նաև, թե բոլոր ժողովուրդների լայն զանգվածները վճռապես կամենում են ապրել ու աշխատել մի խաղաղ աշխարհի մեջ։

Արդ, եթե խաղաղության գաղափարը, խաղաղության պայքարը աստվածահաճո են, և ժողովուրդները բոլոր տենչում են աշխարհում իրականացած տեսնել խաղաղ գոյավիճակ, ապա ուրեմն Մենք ինչո՞ւ հուսալքվենք, ինչո՞ւ տկարանանք, խաղաղության դատի պաշտպանության ճանապարհի վրա։ Մանավանդ որ վկաներն ենք այն իրողության, թե խաղաղության ուժերը մեր օրերում հետզհետե ծավալվում են ու ամրապնդվում։ Մեր երկրագնդի բոլոր ժողովուրդները հետզհետե արթնանում են և իրենց կենսական, իրական շահերի լույսի տակ տեսնում, թե իրենց կյանքի բարօրությունը, իրենց զավակների երջանկությունը հնարավոր է ապահովել ոչ թե ազգամիջյան թշնամություններով, ոչ թե պատերազմներով, այլ ժողովուրդների բարեկամությամբ, պետությունների տնտեսական, գիտական ու մշակութային գործակցությամբ, խաղաղ գոյակցության պայմաններում։

Ժողովուրդների լայն զանգվածները հետզհետե հստակ տեսնում են ու գիտակցում, թե ինչո՞ւ են պատերազմները լինում, թե ովքե՞ր են պատերազմ հրահրողները և ի՞նչ շահերից ելնելով։

Այո, պետք է գիտենանք տեսնել ու գտնել արմատները պատերազմ կոչվող դարավոր չարիքի, որ անեծքի նման կախված է մարդկության կյանքի, ճակատագրի վերև, մերթ ընդ մերթ հրդեհելով այս կամ այն երկրի աշխատավոր խաղաղ բնակչությունը։

Եվ ահավասիկ, տակավին Վիետնամի կրակը հազիվ դադարած, բռնկվեց Մերձավոր Արևելքը, այնքան մտատանջելով մեզ բոլորիս, աշխարհի բոլոր ժողովուրդներին։

Այս պահին, երբ հավաքված ենք այստեղ աղոթելու և Մեր խոսքը ասելու վասն խաղաղության աշխարհի, ամենից առաջ, կարծում ենք, պետք է հանդես գանք վճռական կոչով, որ շուտափույթ կերպով վերջ տրվի նոր սկիզբ առած այդ արյունահեղությանը, աշխարհի բոլոր պետությունների

համատեղ ազդու միջամտությամբ, Միացյալ ազգերի կազմակերպության արդար որոշումների հիման վրա: Պետք է վճռապես պահանջել, որ միջազգային կյանքում անշեղ կերպով հարգվի ուժը օրենքի և իրավունքի:

Ամեն խախտում այս սկզբունքի. վտանգ է աշխարհի բոլոր ժողովուրդների համար: Պետք է սրբությամբ պահպանել ու կենսագործել ժողովուրդների կյանքի անվտանգության անքաժանելիության գաղափարը: Թող դիմակալերծ լինեն ազգությունների միջև ատելություն և թշնամություն սերմանողները, և նրանց թակարդներից ձերբազատված ժողովուրդները լույս աշխարհ գան ու եղբայրանան, ձեռք-ձեռքի տված գործակցեն՝ կառուցելու համար մի նոր աշխարհ, արդար և խաղաղ գոյակցության մի աշխարհ:

Եվ քանի որ խոսում ենք ազգությունների խաղաղ գոյակցության մասին, այսօրվա խռովահույզ մարդկության ինչո՞ւ չտանք օրինակը մեր սովետական աշխարհի կյանքի:

Մենք հրավիրում ենք ձեզ, սիրելի եղբայրներ, որ ձեր հայացքը ուղղեք դեպի լայնածավալ Սովետական Միությունը, ուր ապրում են մի քանի տասնյակ ազգություններ, խաղաղ գոյակցության, համերաշխ ու համատեղ գործակցության, բարի դրացիության ու ազնիվ եղբայրության հոգեկան մթնոլորտի պայմաններում:

Ի տես այս պայծառ, իրական գոյավիճակի, Մենք առավել լավատես ենք դառնում դեպի մեր երկրագնդի ապագան: Ուրեմն հնարավոր է, որ ժողովուրդները, նույնիսկ եթե անցյալում թշնամիներ են եղել, այսօր եղբայրանան, օգնեն իրար, գնահատեն մեկը մյուսին, միատեղ աշխատեն և միասին օգտվեն բնության ու աշխատանքի բարիքներից: Ուրեմն հնարավոր է բարեկամությունը և գործակցությունը ազգությունների ու պետությունների միջև: Ուրեմն հնարավոր է պահպանումը և ամրապնդումը խաղաղության: Եվ ուրեմն հնարավոր է, որ երկրի վրա Աստուծո կամքը կատարվի:

Եվ Մենք հավատում ենք նաև, թե ընկերային, քաղաքական տարբեր վարչակարգեր, կրոնական տարբեր դավանանքներ, տարբեր աշխարհայեցքներ կարող են կողք-կողքի ապրել, փոխադարձ հարգանքով ապրել, խաղաղ գոյակցության մեջ ապրել, մարդկորեն ապրել:

Հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և հանուն անցյալում երկար դարեր տառապած, բայց այսօր վերածնված հայ ժողովրդի, Մենք ողջունում ենք խաղաղության սուրբ դատին նվիրված այս համագումարը և աղոթում, որ Տերը Իր շնորհներով է՛լ ավելի զորացնի մեր բոլորիս սրտերը և է՛լ ավելի լուսավորի մեր ճանապարհը, որպեսզի մեզանից ամեն մեկը իր պարտքը կատարի Աստուծո և մարդկության և իր սեփական ժողովրդի հանդեպ:

«Խաղաղութիւն հեռաւորաց և մերձաւորաց, խաղաղութիւն ամենեցուն». ամեն»:

Հաճելի է արձանագրել, որ հոգևորականաց այս հանդիպմանը տարբեր կրոնների ներկայացուցիչների կողմից տիրական շեշտով, միասնական կամքով ու վճռականությամբ հնչեց խաղաղության ձայնը, մարդասիրական վեհ իդեալների և համամարդկային եղբայրության համար:

Սույն հանդիպման մասնակիցները լայնորեն քննարկեցին իրենց առաջ դրված հարցերը և մտքերի աշխույժ փոխանակությունից հետո առանձին մի հայտարարությամբ արձանագրեցին իրենց վերաբերմունքը խաղաղության, համագործակցության, զինաթափման, աշխարհի անվտանգության և ազգերի իրավահավասարության հարցերում:

# ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՓԱԿՈՒՄԸ

Հոկտեմբերի 31-ին, չորեքշաբթի օրը, Մոսկվայում իր աշխատանքները ավարտեց Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովը, որը համոզիչ կերպով ցույց տվեց խաղաղության, դեմոկրատիայի, ազատության և անկախության ուժերի միասնականությունն ու հզորությունը։

Համաժողովի բարձր բեմից հնչեցին ավելի քան 900 մասնակիցների ելույթները։

Սույն օրվա եզրափակիչ նիստում զեկուցումներով հանդես եկավ համաժողովի 14 հանձնաժողովների նախագահները՝ ներկայացնելով հանձնաժողովներում մշակված և ընդունված փաստաթղթերը, որոնք համաժողովի պատգամավորների կողմից արժանացան միահամուռ հավանության։

Այնուհետև համաժողովն ընդունեց «Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովի կոչը» վերնագրով հետևյալ կարևոր փաստաթուղթը.

«Մենք՝ Խաղաղասեր ուժերի համաշխարհային կոնգրեսի մասնակիցներս, որ հավաքվել ենք Մոսկվայում, դիմում ենք երկրագնդի բոլոր մարդկանց, կոչ անելով միավորել ջանքերը բովանդակ աշխարհում արդարացի և կայուն խաղաղություն ապահովելու համար։

Մեր դիմումը կայուն խաղաղության ուղիների մասին մտորումների և բանավեճերի արգասիք է։ Կյանքի նկատմամբ մեր հայացքները շատ բանով միանման չեն։ Սակայն մենք բոլորս համաձայն ենք գլխավոր խնդրում. անհրաժեշտ է մարդկային հասարակության կյանքից վերացնել պատերազմը, յուրաքանչյուր ժողովրդի համար ապահովել իր ուղին ինքնուրույնաբար ընտրելու և գիտության ու տեխնիկայի մեծ նվաճումները սոցիալական առաջադիմությանն ի սպաս դնելու իրավունքը։

Վերջին ժամանակներս խաղաղության ուժերի հաջողության շնորհիվ միջազգային քաղաքական կլիման սկսել է բարելավվել։ Թանկ նստող և ծանր բեռ հանդիսացող «սառը պատերազմը» սկսում է հեռանալ անցյալի գիրկը։ Այժմ ռեալ հույս է երևան եկել, որ ներկա և գալիք սերունդները կարող են զերծ մնալ միջուկային աղետի մղձավանջից։ Միջազգային հարաբերություններում անողոքությունն ու առճակատումը աստիճանաբար տեղը զիջում են պետությունների խաղաղ, փոխշահավետ համագործակցությանն ու առավել փոխվստահությանը։

Արդեն այժմ շատ բան է արված։ Բայց արված է բնավ ոչ ամեն ինչ։ Աշխարհում դեռևս գոյություն ունեն շրջաններ, որտեղ լարվածությունը նույնքան մեծ է, որքան որ առաջ, որտեղ դեռևս չեն վերացված ագրեսիայի օջախները, որոնք վտանգով են հղի ողջ մարդկության համար։ Այն ժամանակ, երբ դրվում են տարբեր սոցիալական սիստեմներին պատկանող պետությունների խաղաղ գոյակցության հարաբերությունների հիմքեր, տակավին զենքը ցած չեն դրել նրանք, ովքեր ձգտում են ավերել արդեն կառուցվածը և աշխարհը ետ շպրտել դեպի «սառը պատերազմի» ժամանակները։ Սպառազինությունների մրցավազքը չի դադարեցված։ Միջուկային ռումբերը չեն ոչնչացված։ Շատ երկրների ռազմական բյուջեները շարունակում են աճել։ Ռազմական դաշինքները չեն ցրված։

Իմպերիալիզմի, ագրեսիայի և ռեակցիայի ուժերը դեռևս պահպանում են գաղութատիրության վերջին հենակետերը։ Նրանք ֆաշիստական խռովություններ են կազմակերպում։ Նրանք պառակտման և թշնամանքի որոմ են ցանում ժողովուրդների միջև։ Քանի դեռ մնում է թեկուզ և մի թիզ հող, որտեղ արյուն է հեղվում և ագրեսիաներ են կատարվում, քանի դեռ թեկուզ

և մեկ ժողովրդի մերժում են իր բախտը ինքնուրույնաբար տնօրինելու իրավունքը և քանի դեռ գոյություն ունեն ֆաշիստական ու ռասիստական վարչակարգեր, որոնք ճնշում են ժողովրդի դեմոկրատական կամքը, մարդկության խիղճը չի կարող հանգիստ լինել, խաղաղության շենքը հուսալի հիմք չի ունենա:

Աշխարհի ժողովուրդները այլևս չպետք է հաշտվեն այն բանի հետ, որ երկրագնդի ռեսուրսների զգալի մասը վատնվում է պատերազմի նախապատրաստության վրա: Նրանք չպետք է հաշտվեն ռազմական բնաջնջման մշտական սպառնալիքի հետ: Պատերազմը անխուսափելի չէ, սակայն խաղաղությունը սպառնալիքի տակ կդրվի, եթե մենք չկարողանանք վերացնել այն անարդարությունը, երբ երկրի բնակչության 40 տոկոսը դատապարտված է ապրելու սովի և տնտեսական անկման եզրին: Ամբողջ աշխարհում ռազմական ծախսերը երկուսուկես անգամ գերազանցում են առողջապահության և մեկուկես անգամ՝ կրթության ծախսերին:

Ռասսայական խտրականությունը, գաղութատիրությունն ու նեոգաղութատիրությունը Աֆրիկայի և այլ աշխարհամասերի ընդարձակ շրջաններում մարդկանց իջեցնում են ստրուկների դրության: Դեմոկրատական ճանապարհով ընտրված կառավարությունները տապալվում են կամ շանտաժի ենթարկվում, բազմազգ կորպորացիաները սպառնում են թույլ պետությունների տնտեսական անկախությանը և խոչընդոտում նրանց զարգացումը:

Շատ երկրներում անտեսվում են մարդու իրավունքները. մարդիկ զրկված են քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և կուլտուրական իրավունքներից. թեև խոսքով ընդունվում է կանանց հավասար դրությունը, նրանք հաճախ զրկված են տղամարդկանց հետ իրավահավասարության հասնելու ռեալ հնարավորությունից, բանվորների իրավունքները հաճախ անբավարար են պաշտպանվում օրենքի կողմից: Անհրաժեշտ է արդյունավետ մեխանիզմ ստեղծել միջազգային մասշտաբով մարդու իրավունքների պաշտպանությունը բարելավելու համար և ջանքեր գործադրել հասնելու մարդու իրավունքների պակտերի վավերացմանն ու կենսագործմանը:

Վերջին տարիներս, և նույնիսկ վերջին շաբաթներս, ահավոր ոճրագործություններ են կատարվել մարդկության դեմ, որոնք ծանր քարի պես ընկած են մարդկության խղճի վրա: Կատարվել են ագրեսիայի գործողություններ և սարսափազդու արյունոտ հաշվեհարդարներ. դրանք առ այսօր էլ շարունակվում են: Ցեղասպանությունը, էկոցիդը, կալանավորների խոշտանգումները և այնպիսի զինատեսակների կիրառումը, ինչպիսիք են նապալմը, թակարդականները, որոնք խոցում են անխտիր բոլորին և յուրաքանչյուրին, ցավոք, սովորական են դարձել աշխարհի որոշ շրջաններում: Ամեն ոք բավականաչափ լավ գիտի դրա ամենաաղաղակող օրինակների մասին: Մենք չենք կարող թույլ տալ, որ այդ հանցագործությունները սովորական երևույթներ դառնան, որ բթանա այդ գործողությունների առաջացրած սարսափի և վրդովմունքի զգացումը: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունները պետք է ճշտիվ պարզվեն և դատապարտվեն իբրև այդպիսիք:

Խաղաղասեր ուժերի համաշխարհային կոնգրեսը աշխարհի հասարակ մարդկանց պատասխանն է գոյություն ունեցող սպառնալիքներին և անարդարությանը: Նա կոչ է անում նոր ջանքեր գործադրել, որպեսզի մարդկության գիտելիքները, աշխատանքն ու հարստությունները նպատակամղվեն ի բարօրություն մարդկանց և ոչ թե ավերածության ու մարդու ստրկացման:

## ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ՝

— Ընդունել և կենսագործել խաղաղ գոյակցության սկզբունքները, որոնք հիմնված են միջազգային անվտանգության և բոլոր բնագավառներում երկրների փոխշահավետ համագործակցության վրա, բոլոր պետությունների տերիտորիալ ամբողջականությունը, ազգային անկախությունը, սուվերենությունը, իրավահավասարությունը հարգելու, ներքին գործերին չմիջամտելու և ուժի սպառնալիքից կամ այն կիրառելուց հրաժարվելու վրա:

— Վերացնել ռասիզմը, գաղութատիրությունն ու նեոգաղութատիրությունը դրանց բոլոր դրսևորումներով:

— Ընդհանուր և լիակատար զինաթափում. վերացնել բոլոր ռազմական բազաներն ու դուրս բերել օտարերկրյա զորքերը. վերացնել բոլոր ռազմական դաշինքները:

— Ընդունել միջուկային զենքի օգտագործումը, նրա արտադրությունը, փորձարկումն ու կուտակումն արգելող միջազգային կոնվենցիա:

— Դադարեցնել ագրեսիան՝ նրա բոլոր ձևերով և կասեցնել մյուս պետությունների ուժով տերիտորիաներ զավթելու ամեն մի փորձ:

— Ներկայումս ռազմական նպատակներով օգտագործվող ռեսուրսները օգտագործել աղքատությունը, անգրագիտությունն ու հիվանդությունները արմատախիլ անելու համար, կրթությունը, առողջապահությունն ու սոցիալական ապահովությունը բարելավելու համար:

— Վերացնել անարդարությունը, ավելի արդյունավետորեն պաշտպանել մարդու իրավունքները:

— Բոլոր ժողովուրդներին իրավունքներ վերապահել տիրելու և տնօրինելու իրենց ազգային ռեսուրսներն ու սոցիալական և տնտեսական վերափոխումներ իրականացնելու ըստ իրենց հայեցողության:

— Կատարել ՄԱԿ-ի որոշումները, որպես խաղաղության, անվտանգության և արդարության ապահովման անհրաժեշտ պայման:

Այս պահանջները համապատասխանում են ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին, Բանդունգի կոնֆերանսի, միացած պետությունների կոնֆերանսի սկզբունքներին, ինչպես նաև այն սկզբունքներին, որոնք հռչակված են տարբեր սոցիալական սիստեմների պատկանող պետությունների ղեկավարների վերջերս ստորագրած զանազան համաձայնագրերում և խաղաղության պահպանման դեկլարացիաներում:

Այդ նպատակով ազգային և միջազգային կազմակերպությունները պետք է կոորդինացնեն համաշխարհային հասարակական կարծիքը իբրև խաղաղության արդյունավետ գործիք մոբիլիզացնելու իրենց ջանքերը: Դրան հասնելու համար անհրաժեշտ է պատշաճ կողմնորոշում տալ լուսավորության բնագավառի քաղաքականությանը:

Մենք ողջ միջազգային հասարակայնությանը կոչ ենք անում թոթափել «սառը պատերազմի» ժամանակների հայացքները և, խոսելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության բառերով, «հանդուրժողականություն ցուցաբերել և ապրել միասին, միմյանց հետ հաշտ ու խաղաղ իբրև բարի դրացիներ»: Մենք լի ենք վճռականությամբ մեր և ապագա սերունդներին զերծ պահելու պատերազմի արհավիրքներից և մենք կրկին հավաստում ենք մեր հավատը մարդու իրավունքների և ընդհանուր առաջադիմության նկատմամբ: Միայն այս հիմքի վրա հնարավոր կլինի կառուցել խաղաղության շենքը բոլոր մարդկանց ընդհանուր ջանքերով:

Մենք դիմում ենք բոլոր նրանց, ում համար թանկ է խաղաղությունը, երկրագնդի վրա պետք է հաղթանակեն բանականությունն ու վստահությունը: Նրանք կարող են հաղթանակել: Դա կախված է մեզանից յուրաքանչյուրից»:

Համաժողովն այնուհետև միաձայնությամբ ընդունեց 14 հանձնաժողովների կողմից համաժողովին ներկայացված զեկուցագրերի հիման վրա կազմված «Հանուն միջազգային անվտանգության, զինաթափման, հանուն ազգային անկախության, համագործակցության և խաղաղության» հաղորդագրությունը:

Համաժողովի սույն եզրափակիչ նիստում փակման ճառով հանդես եկավ համաժողովի նախագահ Ռոմեշ Չանդրան, որից հետո Բեթհովենի իններորդ սիմֆոնիայի վերջաբանի հանդիսավոր և հաղթական հնչյունների ներքո փակվեց Խաղաղասեր ուժերի համաշխարհային վեհաժողովը, աշխարհում կայուն և տևական խաղաղության հաղթանակի, ժողովուրդների համագործակցության և մարդկության պայծառ ապագայի նկատմամբ լավատեսության հույսերով:

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համաժողովի օրերին Վեհափառ Հայրապետը, Իր ազատ ժամերին, հանդիպումներ և տեսակցություններ ունեցավ համաժողովի մասնակից Հարավային Ամերիկայի, Արևմտյան Գերմանիայի, Հունգարիայի, անգլիկան եկեղեցու, ինչպես նաև Պարսկաստանի և այլ երկրների հոգևորական և աշխարհական պատգամավորների հետ:

Հոկտեմբերի 29-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 9-ին, «Մոսկվա» հյուրանոցում Վեհափառ Հայրապետը տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի հետ ներկա եղավ Սովետական Հայաստանի պատգամավորության կողմից Ռումինիայի պատվիրակության պատվին տրված պաշտոնական ճաշկերույթին, ուր Հայոց Հայրապետը, խոսք առնելով, շեշտեց սովետական եղբայրական ժողովուրդների և սոցիալիստական երկրների ժողովուրդների միջև եղբայրական կապերը առավել ընդլայնելու և ամրապնդելու անհրաժեշտությունը:

Մոսկվայում գտնվելու օրերին Վեհափառ Հայրապետը ջերմ և սիրալիր մթնոլորտում մասնավոր տեսակցություն և զրույց ունեցավ ռուսաց Պատրիարք Նորին Սրբություն Պիմենի և ռուս բարձրաստիճան հոգևորականների հետ երկու քույր եկեղեցիների հարաբերությունները շոշափող մի շարք հարցերի շուրջ:

Այս առթիվ ռուսաց Ամենապատիվ Սրբազան Պատրիարքը Հայոց Հայրապետին հրավիրեց այցելելու Մոսկվա 1974 թվականի ամռանը որպես իր թանկագին հյուրը:

Ռուսաց Պատրիարքի եղբայրական այս հրավերը շնորհակալությամբ ընդունեց Հայոց Հայրապետը:

## ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Նոյեմբերի 3-ին, շաբաթ օրը, ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի ընկերակցությամբ, վերադարձավ Մայր Աթոռ:

Մոսկվայի Դոմոդեդովոյի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը և Մոսկվայի հայ եկեղեցու եկեղեցական խորհրդի անդամները:

Հանուն ռուսաց Ամենապատիվ Տ. Պիմեն Պատրիարքի Հայոց Հայրապետին ճանապարհեցին Մոսկվայի ռուսաց պատրիարքարանի արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Յուվենալի միտրոպոլիտը, Կրուտիցկիի և Կոլոմենսկի տ. Սերաֆիմ միտրոպոլիտը, Մոսկվայի պատրիարքարանի պաշտոնաթերթի խմբագրապետ Պիտիրիմ արքեպիսկոպոսը:

Հայոց Հայրապետին ճանապարհեցին նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևը և այլ պաշտոնական անձինք:

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին տ. Հուսիկ և տ. Արսեն եպիսկոպոսները, տ. Մուշեղ, տ. Արիս, տ. Աղան վարդապետները, վանքի պատասխանատու աշխատողներն ու պաշտոնեությունը և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը:

Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեցին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

## ՀԱՎԱՔՈՒՅԹ ՎԵՀԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆՑ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Նոյեմբերի 13-ին, երեքշաբթի օրը, ժամը 15-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ հավաքույթ՝ նվիրված Մոսկվայում հոկտեմբերի 25-31 օրերին Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովի գումարմանը:

Հավաքույթին ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, մայրավանքի պաշտոնեությունը, աշխատողները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, ինչպես նաև Արարատյան թեմի քահանայից դասը, թեմական և եկեղեցական խորհրդի անդամները և պաշտոնյաները՝ շուրջ 300 հոգի:

Հավաքույթը բաց արեց Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը՝ շեշտելով հավաքույթի նպատակը: Այնուհետև Մոսկվայում Խաղաղասեր ուժերի համաշխարհային համաժողովի գումարման և օրակարգի հարցերի, եկեղեցիների մասնակցության, այդ թվում Հայոց Հայրապետի գլխավորությամբ հայ եկեղեցու պատվիրակության աշխատանքների և համաժողովի պատմական նշանակության ու կարևորության մասին բովանդակալից և ամբողջական զեկուցումով հանդես եկավ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը:

Սույն հավաքույթը փակվեց Հայոց Հայրապետի օրհնության խոսքով և խաղաղության հաղթանակին ի նպաստ կատարված սրտագին մաղթանքներով:



# ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 25-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ԺՆԵՎԻ ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻԻ ՄԵՋ

Սույն թվի օգոստոսի 22—29 օրերին Ե. Հ. Խ.-ի կենտրոնական կոմիտեի 25-րդ գումարումը տեղի ունեցավ Շվեյցարիայի Ժնև քաղաքի կենտրոնատեղիի մեջ՝ ներկայությամբ կենտրոնական կոմիտեի ավելի քան 120 անդամների, քվեարկելու իրավունք չունեցող պատգամավորների, երիտասարդության ներկայացուցիչների, խորհրդականների, հյուրերի և Ե. Հ. Խ.-ի պատասխանատու պաշտոնյաների՝ ընդամենը շուրջ 500 հոգի:

Ժողովի բացման արարողությունը կատարվեց հավաքական աղոթքով, որը տեղի ունեցավ կենտրոնատեղիի մատռան մեջ: Կոմիտեի պատվո նախագահության անդամներից Հանս Լիլիեն՝ Արևմտյան Գերմանիայի Հանովեր քաղաքի եպիսկոպոսը, ժողովի բացման առթիվ մի քարոզ խոսեց՝ վեր հանելով կոմիտեի 25-ամյա գործունեության նշանակալից դերը և եկեղեցիների միության ու փոխըմբռնման կարևորությունը էկումենիկ կյանքում:

Ժամը 9.45-ին նիստերի դահլիճում պաշտոնապես բացվեց կենտրոնական կոմիտեի 25-րդ նստաշրջանը: Ե. Հ. Խ.-ի կենտրոնական կոմիտեի առաջին նստաշրջանը տեղի է ունեցել 1948 թվականին Ամստերդամում: Այս առթիվ Շվեյցարիայի կոնֆեդերացիոն կառավարության խորհրդական Հ. Պ. Թշուդին և Ժնևի կանտոնի բողոքական-կալվինական եկեղեցու ներկայացուցիչները բարիգալստյան ջերմ խոսք ասացին 25-րդ տարեդարձի առթիվ գումարված այս ժողովի գործերին լիակատար հաջողություն մաղթելով: Ե. Հ. Խ.-ի և ներկաների անունից էկումենիկ շարժման վետերան և Ե. Հ. Խ.-ի պատվո նախագահ դոկտ. Վիսըրտ Հուֆթը շնորհակալության խոսք ասաց տեղի կառավարությանը և եկեղեցիների ներկայացուցիչներին:

Այնուհետև ժողովում ընթերցվեցին Ե. Հ. Խ.-ի 25-ամյակի առթիվ ուղարկված շնորհավորական հեռագրերն ու ողջույնի խոսքերը: Ժողովականների կողմից առանձին գոհունակությամբ ընդունվեցին այս առթիվ Կ. Պոլսի տիեզերական Պատրիարք Ն. Ս. Դիմիտրիոսի և համայն ռուսաց Պատրիարք Ն. Ս. Պիմենի անունից ժողովին առաքված պատգամները, որոնք խթանող օրինակներ հանդիսացան Ե. Հ. Խ.-ի անդամ եկեղեցիների համար նրանց հետագա գործունեության ճանապարհին:

Այս առթիվ Ե. Հ. Խ.-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆ. Փոթըրին ողջույնի և շնորհավորական հեռագիր էր ուղարկել նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ողջույնի և բարեմաղթության խոսքերից հետո ժողովի ծրագիրը հաստատվեց, ապա՝ հաշվետու զեկուցումով հանդես եկավ կենտրոնական կոմիտեի գործադիր մարմնի ատենապետ դոկտ. Մ. Մ. Թոմասը:

Իր զեկուցման մեջ դոկտ. Թոմասն արեց հետևյալ խորհրդածությունները. Ե. Հ. Խ.-ն կանգնած է աստվածաբանական երկու դժվարին հարցերի առաջ, առաջինը՝ հավատո և կարգի, կյանքի և գործքի, աշխարհի փրկագործության առաքելության ասպարեզում, որտեղ պակասում է ներդաշնակությունը ընդհանուր նպատակների

իրագործման վերաբերյալ, իսկ երկրորդը՝ արդյունքն է կրոնական ավանդությունների, մշակույթի, բարքերի և գաղափարաբանական հոսանքների այն հսկայական զանազանության, որոնք գոյություն ունեն Ե. Հ. Խ.-ին անդամ եկեղեցիների ծոցում:

Ե. Հ. Խ.-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրը հանգամանալից և խնամքով ներկայացրած իր առաջին զեկուցագրով վստահություն ներշնչեց կենտրոնական կոմիտեի բոլոր անդամներին, թե ինքը իր ստանձնած նոր պաշտոնին համապատասխան արժանիքներով օժտված, իր գործին ամբողջապես նվիրված անձ է: Իր զեկուցման մեջ դոկտ. Փոթըրը կանգ առավ Ե. Հ. Խ.-ն հուզող երեք հիմնական հարցերի վրա: Համաձայն դոկտ. Փոթըրի գնահատման, էկումենիկ շարժման առջև ծառացած երեք կարևոր նպատակներ կան իրագործվելիք: Դրանք են.



Մի պահ հոբիլյանական ժողովից

ա. Ամենագործնական և շոշափելի ծառայությունը, որ էկումենիկ շարժումը և անդամ եկեղեցիները կարող են բերել արդի պառակտված աշխարհին, այն է, որ նրանք որպես քրիստոնյաներ, կարողանան ապրել գործնական ընկերակցության մեջ՝ ժողովուրդների և ազգերի միջև պառակտումները ու պայքարները դիմագրավելու համար միասնաբար:

«Մենք,—նշեց գլխավոր քարտուղարը—միայն մեկ խարիսխ ունենք, որի վրա կարող ենք իրագործել այս միությունը և հաշտությունը: Այդ խարիսխը Քրիստոսն է, որ պառակտված մարդկությունը հաշտեցրեց իր չարչարանքների և մահվան գնով միջնորդաբար: Մեր միությունը՝ Քրիստոսով մեկ լինելու մեջ է խտացած. «Ուր Քրիստոսն է, այնտեղ է եկեղեցին»—«Ubi Christusibi ecclesia»: Այս իրավ միությունը կարող է դառնալ աղբյուր անսպառ հարըստության, քաջալերանք և միջոց՝ է՛լ ավելի լավ ըմբռնելու համար Աստուծո նպատակը»:

բ. Անդրադառնալով աստվածաբանության առավել անհրաժեշտությանը էկումենիկ շարժման ծոցում և նկատի ունենալով այն բոլոր քննադատությունները, որ այդ ուղղությամբ արել են Ե. Հ. Խ.-ի հասցեին, դոկտ. Փոթըրը հետևյալն ասաց.

«Ցարդ չենք կարողացել իրականացնել և

զարգացնել հոգեկան հաղորդականությունը մեր միջև, որպեսզի կարողանայինք հստակորեն տեսնել և գնահատել աստվածաբանական բոլոր տարբեր մտածելակերպերը: Մեր ուշադրությունից վրիպել է նաև այն պարագան, որ մեր աստվածաբանական մտահանգումները հիմնված են մի շարք գաղափարախոսական կանխակալ ենթադրությունների վրա, որոնք հաճախ արգելք են հանդիսանում մեզ իրար ավելի լավ ըմբռնելու մեր ճիգերի մեջ»:

գ. Ըստ դոկտ. Փոթըրի վերլուծության, Ե. Հ. Խ.-ն մեկ գլխավոր դժվարության առաջ է կանգնած այսօր, դա հաղորդակցության հարցն է, որ ամուր հիմքերի վրա չէ դրված: Անդամ եկեղեցիները բավարար չափով չեն կարողանում միմյանց հետ փոխանակել իրենց փորձառությունները: «Մենք պետք է անմիջական կերպով լուրջ ուշադրության առարկա դարձնենք սույն հարցը՝ մեր հաղորդակցման միջոցները կատարելագործելու համար, որով միայն Ե. Հ. Խ.-ն կդառնա իսկական հաղորդակցության մի օրգան եկեղեցիների միջև», շեշտում է գլխավոր քարտուղարը:

Կենտրոնական կոմիտեի անդամները և ժողովականները առանձին ուշադրությամբ լսեցին եկեղեցիների միության վերաբերյալ դոկտ. Լուկաս Վիշերի կողմից ներկայացված զեկուցագիրը, որը մի շարք նոր և կարևոր խնդիրներ էր առաջադրում:

Դոկտ. Վիշերը շեշտեց, որ միության խնդիրը պետք է քննարկվի տարբեր ցամաքամասերում գործող եկեղեցիների միջև և միություն ստեղծվի նախ ամեն մեկ ցամաքամասի եկեղեցիներում. և ապա պետք է ձգտել ընդհանուրին:

Անդրադառնալով եկեղեցիների միության հարցին, դոկտ. Վիշերն ասաց. «Միությունը կարող է իրականանալ, եթե այն փընտըրվի: Եվ դրա բանալին եկեղեցիների համառության հաղթահարումն է: Յուրաքանչյուր անդամ եկեղեցի կառչել է իր ինքնուրույնությանը: Եթե միայն եկեղեցիներն անդրադառնային, թե միությունը կարող է ծածկել իր մեջ սեփական ինքնուրույնությունները համապարփակ մի ինքնուրույնությամբ, միության խնդրի լուծումն ինքնին մեր ձեռքում կլիներ»:

Հաջորդ զեկուցումով ներկայացվեց Ե. Հ. Խ.-ի ֆինանսական դրությունը: Զեկուցողը նշեց, թե կյանքի արդի պայմաններում, երբ գրեթե բոլոր կարևոր երկրների փողերը ենթարկվում են արժեքազրկման կամ անկայուն արժեքի են վերածվում, ի՞նչ միջոցներ պետք է ձեռք առնի Ե. Հ. Խ.-ն իր տնտեսական դրությունը կայուն վիճակում պահելու համար:

Վերոհիշյալ չորս կարևոր զեկուցումները լսելուց հետո ժողովականները զանազան խմբերի բաժանվեցին հանգամանորեն քննարկելու համար օրակարգում դրված հարցերը:

**Միություն.**

Այս հարցը բոլոր հարցերից կարևորագույնն է: Անհրաժեշտ է, որ անդամ եկեղեցիները վերստին հարց տան միմյանց, թե ի՞նչ է բնույթը և նկարագիրը այն միության, որին ձգտում է Ե. Հ. Խ.-ն: Եկեղեցիների միջև գոյություն ունեցող այլազանությունները ծածկելու ոչ մեկ փորձ չպետք է արվի: Ընդհակառակը՝ անհրաժեշտ է, որ եկեղեցիները գտնեն հասարակաց աստվածաբանական մի հասկացություն, որի մեջ այլազանությունները միանան և հաստատեն ամբողջությունը: Էականը գտնելն է միության տեսիլքն ու ըմբռնողությունը, որոնք հիմքն են կազմում Ե. Հ. Խ.-ի կոչման: Այդ ձևով միայն ներկա օրերի եկեղեցիները կարող են իրար հանդիպել: Այս ըմբռնողությունը պետք է միաժամանակ իր մեջ խտացնի այն ճշմարտությունը, թե եկեղեցիների միության գաղափարը անքակտելիորեն առնչված է համամարդկային միության գաղափարի հետ. այս ձևով է, որ լարվածությունը և ձգվածությունը «Հյուսիսի» և «Հարավի», «արևելքի» և «արևմուտքի» միջև կթուլանա:

Այս հարցի մասին գնահատելի լուսաբանություն բերեց դոկտ. Լուկաս Վիշերի տեղեկագիրը «Եկեղեցու միությունը» բնաբանով, ուր թարմ մտածումներով բացատրվում էին եկեղեցիների միության բնույթը և հնարավորության կերպերը:

**Աստվածաբանության կարևորությունը.**

Ե. Հ. Խ.-ի գլխավոր քարտուղարը իր տեղեկագրում համարձակորեն խոստովանեց, որ Ե. Հ. Խ.-ն դեռևս հարմար նոր կերպեր չի գտել եկեղեցիների աստվածաբանությամբ զբաղվելու: Ե. Հ. Խ.-ն նոր է, որ անդրադառնում է սրա կարևորությանը և ջանք թափում հետևյալ հարցերը լուսաբանելու գործում.

ա. Ի՞նչ է աղերսը պատմական ավանդության արժեքի և ս. Հոգու դերի մասին մեր արդի ըմբռնողության միջև:

բ. Ինչպե՞ս հնարավոր է աստվածաբանությամբ զբաղվել արդի մտայնությամբ տղամարդկանց և կանանց հետ, երբ բոլորս հավասարապես գտնում ենք նոր պայքարների և կացությունների առաջ:

գ. Ինչպե՞ս հնարավոր է մեր հավատքի տիեզերականության մասին արտահայտվել՝

նկատի ունենալով մեր մշակութային և գաղափարական տարբերությունները։ Աստվածաբանական հարցերով զբաղվելը առանձնապես առնչվում է Ե. Հ. Խ.-ի ամբողջ ծրագրի հետ։

**Հաղորդակցություն.**

Ժողովի ընթացքում կենտրոնական կոմիտեի անդամները կրկին անգամ շեշտեցին հաղորդակցության անհրաժեշտությունը Ե. Հ. Խ.-ի ընդհանուր գործունեության մեջ։ Հաղորդակցության անհրաժեշտությունը շեշտեց առավելապես անդամ եկեղեցիների և Ե. Հ. Խ.-ի կենտրոնի միջև։ Երբ եկեղեցիների փոխադարձ հարաբերությունները զգալիորեն բարելավվեն, այն ժամանակ հաղորդակցության բաժանմունքը կարող կլինի իր գործունեությունը բարելավել առավելագույն չափով։

Ժողովում որոշվեց առավել սերտ հաղորդակցություն ստեղծել Ե. Հ. Խ.-ի և անդամ եկեղեցիների միջև, որպեսզի այդպիսով ժողովրդի մեջ լսելի դառնա Ե. Հ. Խ.-ի խոսքը, և փոխադարձաբար էկումենիկ կենտրոնատեղին տեղեկանա անդամ եկեղեցիների կարևոր իրադարձություններին։ Այսպիսով է, որ եկեղեցիները ավելի լայն չափով կմասնակցեն էկումենիկ շարժմանը, և Ե. Հ. Խ.-ն կդառնա հաղորդակցության գործոն մի օրգան եկեղեցիների միջև։

**Ֆինանսական դրություն.**

Էկումենիկ ոգու կարևոր հատկանիշներից մեկն է նյութական օժանդակության միջոցով նպաստել հասարակաց գործին։ Եղբայրական գործակցության ոգին իրականություն լինելուց կդադարի այն պահին, երբ եկեղեցիները դադարեն իրար նեցուկ լինելուց։ Դժբախտաբար, բոլոր անդամ եկեղեցիները չէ, որ կատարել են այն, ինչ որ կարող էին անել նյութական իմաստով։ Անհրաժեշտ է, որ անդամ եկեղեցիները տեղեկանան, տնտեսական այն տագնապի մասին, որի առաջ է կանգնած Ե. Հ. Խ-ն ներկայումս, և ձգտեն իրենց նյութական օժանդակությունն ավելացնել, հատկապես նկատի ունենալով առաջիկա 5-րդ համագումարի նախապատրաստման և անցկացման համար պահանջվող մեծ ծախսերը։ Նոր միջոցներ և կերպեր պետք է կիրառվեն, որպեսզի բոլոր անդամ եկեղեցիները անխտիր օժանդակեն ընդհանուր բյուջեին, ինչպես նաև իրագործվեն մասնավոր օգտակար ծրագրեր։

Ժողովում որոշվեց խնդրել անդամ եկեղեցիներին, որ իրենց անդամակցության գումարը բարձրացնեն՝ հավատացյալների շրջանակում առանձին հանգանակություններ կազմակերպելու միջոցով, ինչ որ բնականաբար կարոտ է հատուկ աշխատանքի։ Այսպիսով Ե. Հ. Խ.-ին ի նպաստ տրված գումարը կլինի ժողովրդի աղոթքով և ցանկությամբ տրված մի օգնություն։

* * *

Ե. Հ. Խ.-ի ներքին կազմակերպչական, աստվածաբանական, տնտեսական և այլ կարգի հարցերից բացի, ժողովում մանրամասնորեն քննարկման և խորհրդակցության նյութ դարձան արդի աշխարհի խաղաղությունը վրդովող քաղաքական, ընկերային, ցեղային ու հասարակական հարցերը։

Ժողովը իր 8-օրյա նստաշրջանում հատկապես անդրադարձավ ներկա քաղաքական տագնապալի հարցերին և իր որոշումները արձանագրեց հետևյալ բնագավառներում.

1. Մերձավոր Արևելքի շարունակվող տագնապի քննարկումից հետո, որոշում կայացվեց, որ ամեն ջանք ի գործ դրվի Մերձավոր Արևելքում գտնվող երկրների միջև խաղաղությունը վերահաստատելու համար։ Շեշտվեց, որ Ե. Հ. Խ.-ի անունից տրվող նյութական օժանդակությունը բավարար չէ խաղաղությունը վերահաստատելու համար, այլ կողմերը հաշտեցնելու նոր աշխատանք հարկավոր է տանել։

2. Երկրորդ քաղաքական տագնապը, որով զբաղվեց ժողովը, Ռոդեզիայի իրադարձություններն էին։ Ռոդեզիայում նույն ցեղին պատկանող մարդիկ իրար են փորձում բնաջնջել երկրի իշխանությանը տիրանալու համար։ Ե. Հ. Խ.-ն այս առթիվ որոշեց խնդրել աֆրիկյան երկրներին, որ օգնեն հաշտեցման և խաղաղության վերահաստատման գործին։ Բացի այդ, Ե. Հ. Խ.-ի պատասխանատու պաշտոնյաներին հրահանգվեց, որ անհապաղ աֆրիկյան երկրների քրիստոնյաների մի համագումար կազմակերպեն, որպեսզի նրանց միջոցով ևս փորձվի աղետը դարմանել։

3. Ժողովը առանձին ուշադրությամբ քննության առավ պորտուգալացի գաղթականաց հարցը։ Հարյուր հազարավոր պորտուգալացի գաղթականներ կամ իրենց հայրենիքը լքողներ, տնտեսական ու քաղաքական պատճառներով, ապրում են Արևմտյան Եվրոպայի տարբեր երկրներում և հատկապես Ֆրանսիայում, որի Փարիզ քաղաքը համարվում է աշխարհի մեծագույն պորտուգալական քաղաքը, այն պատճառով, որ Փարիզի պորտուգալացի բնակիչների թիվն ավելի մեծ է, քան Պոր-

տուգալիայի որևէ քաղաքի բնակչության թիվը:

Պորտուգալացի գաղթականների մեծ մասը պորտուգալական գաղութներից զինվորական ծառայությունից փախած մարդիկ են, որոնք բոլորն էլ զրկված են իրենց հայրենի երկիրը վերադառնալու իրավունքից:

Կենտրոնական կոմիտեի ժողովը միաձայնությամբ որոշում ընդունեց դիմել պորտուգալական կառավարությանը վերոհիշյալ խնդրի բարվոք լուծման համար: Որոշում կայացվեց նաև, ժխտական վերաբերմունքի դեպքում, դիմել Միացյալ ազգերի կազմակերպությանն ու ՆԱՏՕ-ի դաշնակից երկրներին, որպեսզի նրանց միջոցով ճընշում գործադրվի պորտուգալական իշխանությունների վրա պորտուգալացի գաղթականների հարցի դրական լուծման համար:

4. Ե. Հ. Խ.-ի կենտրոնական կոմիտեի ժողովի օրերին էր, որ ահռելի ջրհեղեղի դեպքը պատահեց Պակիստանում և Հընդկաստանի մեկ մասում: Այս առթիվ որոշում ընդունեց անմիջական կերպով նյութական օժանդակություն հասցնել պատուհասված վայրերը և կոչ անել անդամ եկեղեցիներին՝ իրենց մասնակցությունը բերելու աղետյալների օգտին կազմակերպված նվիրատվությանց:

### Հանդիսավոր արարողություն ս. Պետրոս Մայր եկեղեցում

Ե. Հ. Խ.-ի կենտրոնական կոմիտեի տարեկան ժողովի ընթացքում, օգոստոսի 26-ին, Ժնևի ս. Պետրոս կալվինական Մայր եկեղեցում հանդիսավոր կերպով տոնվեց 25-րդ տարեդարձը կենտ. կոմիտեի ժողովների:

### Ե. Հ. Խ.-ին նոր անդամագրված եկեղեցիներ

1948 թվականին Ե. Հ. Խ.-ի կենտրոնական կոմիտեի առաջին նստաշրջանում մասնակցում էին միայն 147 անդամ եկեղեցիներ 48 տարբեր երկրներից: Այսօր, քսանհինգ տարի հետո, անդամ եկեղեցիների թիվը աճել ու դարձել է 263: Այդ եկեղեցիները ներկայացնում են ավելի քան 90 տարբեր երկրներ:

Կենտ. կոմիտեի դռնփակ նիստում եղան նոր առաջարկություններ զանազան ցամաքամասերի եկեղեցիները Ե. Հ. Խ.-ին անդամագրվելու վերաբերյալ:

Գրեթե միաձայնությամբ Ե. Հ. Խ.-ին անդամագրվեցին հետևյալ եկեղեցիները.

ա. Ջաիրի Քրիստոսի եկեղեցին՝ «Լույսի համայնքը», որն ունի 100,000 անդամ:

բ. Ջաիրի Քրիստոսի եկեղեցու «Մեննոնիդ համայնքը», որը հաշվում է 25,317 անդամ:

գ. Ինդոնեզիայի Կերեյա Քրիսթին բողոքական եկեղեցին, որը հաշվում է 110,000 անդամ:

դ. Ճապոնական օրթոդոքս եկեղեցին, որն ունի 25,000 անդամ, 30 քահանա և 40 համայնքներ:

Այս առթիվ Ե. Հ. Խ.-ի կազմում որպես գործակից-անդամ ընդունվեց նաև Ջաիրի Քրիստոսի եկեղեցու մկրտչական-եպիսկոպոսական համայնքը, որը հաշվում է 12,000 անդամ:

Այսպիսով Ե. Հ. Խ.-ին անդամագրված եկեղեցիների թիվը բարձրացավ 268-ի:

### Ե. Հ. Խ.-ի կենտրոնատեղիի պաշտոնյաների փոփոխություններ

Ե. Հ. Խ.-ի գլխավոր քարտուղարի օգնականներ ընտրվեցին դոկտ. Ալան Ա. Բրաշը (երիցական եկեղեցու հովիվ, Նոր Զելանդիայից) և դոկտ. Կոնրադ Ռեյզերը (Արևմըտյան Գերմանիայի լութերական եկեղեցուց): Օգնական գլխավոր քարտուղարների պաշտոնները 3 տարվա համար են: Նախորդ օգնականներն էին հոգշ. Ջեյմս Ջ. Թոմսոնը և հոգշ. Կլեման Բարբեյը:

Հաջորդ կարևոր փոփոխությունը էկումենիկ ինստիտուտի նոր տնօրենի ընտրությունն է: Նախորդ տնօրենը՝ դոկտ. Նիկոս Նիսիոտիսը, որն ավելի քան 15 տարի ծառայել էր էկումենիկ կրթարանին, հոգնածության պատճառով հրաժարված լինելով իր պաշտոնից, նոր տնօրեն ընտրվեց դոկտ. Ջոն Ա. Մբիթին՝ երեք տարվա համար: Նոր տնօրենը քենիացի է, անգլիկան համայնքից, 42 տարեկան:

Քրիստոնեական գրականության զարգացման նոր բաժնի վարիչ նշանակվեց հոգշ. Ալբերտ Մանվելը, 48 տարեկան, բողոքական եկեղեցու զավակ, ազգությամբ հնդիկ:

### Ե. Հ. Խ.-ի 5-րդ համագումարի նախապատրաստություններ

Արդեն իսկ նախապատրաստական աշխատանքներ են տարվում 1975 թվականի օգոստոսին կայանալիք 5-րդ համագումարի բարեհաջող անցկացման համար:

Ե համագումարի նշանաբանն է լինելու «Հիսուս Քրիստոս ազատագրում է և միացնում» («Jésus Christ frees and unites»):

Մայր Աթոռ ս. Էջմիածնի կողմից համագումարին մասնակցող ներկայացուցիչների թիվը լինելու է 7:

### Հաջորդ կենտրոնական կոմիտեի ժողովը

Կենտրոնական կոմիտեի 26-րդ ժողովը տեղի է ունենալու 1974 թվականի օգոստոսի 8—18 օրերին Արևմտյան Բեռլինում՝ տեղի բողոքական եկեղեցու պաշտոնական մարմինների հրավերով:

Ժողովը իր դռնփակ նիստում շնորհակալությամբ իր համաձայնությունը տվեց սույն հրավերին և նշեց, որ քաղաքական ոչ նպաստավոր պայմանների առկայության դեպքում ժողովի վայրը կարող է փոփոխվել, ինչպես այդ պատահեց այս տարի, և ներկա ժողովը գումարվեց Ժնևում, փոխանակ Հելսինկիի:

### Փակում կենտրոնական կոմիտեի 25-րդ ժողովի

Օգոստոսի 28-ին, երեկոյան ժամը 18.45-ին, կենտրոնական կոմիտեի ժողովը, ավարտած լինելով իր պարտականությունները, հայտարարվեց փակված:

Ե. Հ. Խ.-ի կենտրոնի մատռան մեջ հավաքված բոլոր ժողովականները իրենց գոհաբանական վերջին աղոթքը մատուցեցին առ Աստված: Միաբանաբար աղոթեցին և միաբանաբար երգեցին «A toi la gloire» («Քոնն է փառքը») մաղթերգը խանդավառությամբ և ներշնչումով: Ապա փոխադարձ սիրո ողջույն տալուց հետո, ժողովականները բաժանվեցին միմյանցից վերստին հանդիպելու համար հաջորդ տարի:

ՆԵՐՍԵՍ Ծ. ՎՐԴ. ՊՈԶԱՊԱԼՅԱՆ





# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՆՅՈՒ-ՅՈՐՔՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Էկումենիկ շարժման հետևանքով ստեղծված մթնոլորտի մեջ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմում 1970—1971 թվականներին տեղի են ունեցել ոչ պաշտոնական բնույթ կրող մի շարք հանդիպումներ՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցու և հայ ավետարանական համայնքների ներկայացուցիչների միջև՝ քննարկելու և ճշտակեցնելու համար հնարավորությունները հայ ավետարանական համայնքների առավել մերձեցման և գործակցության և եթե հնար է՝ միության, հայ առաքելական Մայր եկեղեցու հետ:

Սույն հանդիպմանը մասնակցել են՝

**ԱՄՆ-ի հայոց առաջնորդարանի կողմից՝**

Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը,
Տ. Առնակ քհն. Գասպարյանը,
Տ. Մամբրե քհն. Գուզույանը,
Տ. Տաճատ քհն. Դավթյանը,
Դոկտ. Հակոբ Էթմեճյանը,
Տիար Պետրոս Նորհատը:

**ԱՄՆ-ի հայ ավետարանական համայնքների անունից՝**

Վեր. Ս. Գ. Սյուլահյանը,
Վեր. Կիրակոս Զոփուրյանը,
Տիար Հովհ. Քեյիշյանը,
Վեր. դոկտ. Տիգրան Քասունին,
Վեր. Վահան Թութիկյանը,
Տիար Ծորճ Փիլիպպոսյանը,
Տիար Ստեփան Մարտիկյանը:

Սույն հանդիպման մասնակիցները 1972 թվականի փետրվար 15 թվակիր գրությամբ իրենց գործունեության 11 էջերից բաղկացած մեքենագրված Տեղեկագիրն են կազմել և ուղարկել ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանին, որը հարկ է համարել իր հերթին, որպես Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչ, սույն Տեղեկագիրը ուղարկել Մայր Աթոռ՝ Նորին Ս. Օծության՝ ի գիտություն:

Ամենայն Հայոց Հայրապետը, հանգամանորեն ծանոթանալով այդ Տեղեկագրի բովանդակությանը, տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի գրած 1972 թվականի դեկտեմբեր 30 թվակիր նամակով Իր մտածումներն է հայտնում, որ **«Տեղեկագիրը պետք է հասկնալ էկումենիկ հարաբերությանց լույսին տակ, առանց տպավորությունը թողնելու թե համաձայնություն մը կկնքվի և կամ հարաբերությանց հատուկ կարգ մը կհաստատվի ավետարանական եկեղեցվո հետ»:**

Վեհափառ Հայրապետն Իր սույն նամակում թելադրում է նաև, որ այդ Տեղեկագիրը առայժմ չհրատարակվի՝ դուռ չբանալու համար սխալ մեկնությունների, թյուրիմացությունների և չնախատեսված բարդությունների, բայց միաժամանակ Իր բարեհաճ համաձայնությունն էր հայտնում, որ 30 դեկտեմբեր թվակիր Իր նամակի բովանդակությունը հանձնվի հանդիպման մասնակիցների և այդ Տեղեկագիրը պատրաստող անձնավորությունների ուշադրությանը:

Խմբագրությունս, սակայն, վերջերս տեղյակ լինելով, որ ԱՄՆ-ի հայ մամուլում այնուամենայնիվ հրատարակվել է ԱՄՆ-ի հայոց առաջնորդարանի և ԱՄՆ-ի հայ ավետարանական համայնքի ներկայացուցիչների հանդիպման ընթացքում պատրաստված 1972 թվականի փետրվար 15 թվակիր վերոհիշյալ Տեղեկագիրը, անհրաժեշտ է գտնում հրապարակումը նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 1972 թվականի դեկտեմբեր 30 թվակիր՝ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանին ուղղված սույն նամակի՝ ի լուսաբանումն հայ եկեղեցու հոգևոր դասի և հավատացյալ մեր ժողովրդի:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԻՒՍԻՍ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

**Նիւ Եորք**

Սիրելի սրբազան,

Այսու Մեր գրով կը հաստատենք թէ ստացած ենք Ձեր 24 ապրիլ 1972 թուակիր նամակը, ցաւօք սրտի մեծ ուշացումով, այսինքն անցեալ սեպտեմբերին, որու պատճառաւ ուշացաւ նաև Մեր պատասխանը: Ձեր այս գրութեամբ Մեզի ուղարկած էիք Տեղեկագիր անուան տակ նախագիծ մը, «Հայ առաքելական և հայ աւետարանական եկեղեցիներու մերձեցման Ամերիկայի յանձնաժողովի» կողմէ:

Ծանօթանալով Տեղեկագրի բովանդակութեան, անհրաժեշտ կը նկատենք Ձեզի յայտնել Մեր եզրակացութիւնները որոնք հետևեալներն են՝

1. Պէտք է նկատել թէ Տեղեկագիրը խմբագրուած է հոգևոր ու ազգային գովելի մտահոգութիւններով, սակայն իր բովանդակութեամբ՝ բաւարար չափով չի համապատասխաներ Եպիսկոպոսաց ժողովի և Մեր անմիջական ա-

ռաջադրանքին։ Յիրաւի, մեր առաջ դրուած հիմնական հարցն էր՝ ճշդել թէ ի՞նչ հնարաւորութիւններ կան հայ աւետարանական եկեղեցւոյ կողմէ մերձեցման և միութեան առաջարկը կենսագործելու։ Բնականաբար, հնարաւորութիւններ ըսելով կը խորհինք թէ պէտք է հասկնանք այժմէն իսկ ճշդումը՝ թէ աւետարանական մեր եղբայրները ի՞նչ չափով և ինչ կերպի տրամադիր պիտի ըլլան ընդունելու հայ առաքելական եկեղեցւոյ հիմնական հաւատալիքները, դաւանաբանական կեցուածքը, նուիրապետական կարգն ու կառոյցը, սուրբերու պաշտամունքը և ծէսերը։ Քանի որ մեր եղբայրները իրապէս գովելի իղձը ունին մերձենալու և կը խորհին վերադառնալու Մայր եկեղեցւոյ գիրկը, շատ բնական է և անհրաժեշտ, որ այժմէն դրուին այս հարցերը գէթ սկզբունքային ձևի տակ՝ յստակելու համար տրամադրութիւնները և հնարաւորութիւնները։ Թէև յանձնաժողովը իր օրակարգի մէջ կը նախատեսէ այդ հարցը Զ կէտին տակ, սակայն Տեղեկագիրը այս հիմնական սկզբունքային հարցի նկատառումը թողու հեռաւոր, անորոշ ապագայի մը և կը զբաղի միմիայն գործնական մերձեցման և գործակցութեան հարցերով։

2. Տեղեկագրի գործնական առաջադրանքները կարելի է հասկնալ միայն իբրև դրսևորում ժամանակակից էկումենիկ ոգիի, և որպէս այդպիսին մերժելի չէ անշուշտ, քանի որ մեր եկեղեցին ևս կը մասնակցի էկումենիկ շարժումին, փոխադարձ եղբայրական սիրոյ, փոխադարձ մերձեցման ու հնարաւոր չափով գործակցութեան յարաբերութիւններ մշակելու իղձով բոլոր քոյր եկեղեցիներու հետ, այսպիսով հետզհետէ առաւել ուժգնութեամբ վկայութիւնը արտայայտելու համար քրիստոնէական տիեզերական եղբայրութեան։

Մեր կարծիքով ուրեմն, Տեղեկագիրը պէտք է հասկնալ էկումենիկ յարաբերութեանց լոյսին ներքև, առանց տպաւորութիւնը թողելու թէ համաձայնութիւն մը կը կնքուի, և կամ յարաբերութեանց յատուկ կարգ մը կը հաստատուի աւետարանական եկեղեցւոյ հետ։ Նման տպաւորութիւն պէտք չէ թողուի, նոյնիսկ ի շահ մերձեցման գործին։ Շատեր կրնան սխալ մեկնութիւններ տալ, կրնան թիւրիմացութիւններ ստեղծուիլ և նոյնիսկ չնախատեսուած բարդութիւններ։ Նման Տեղեկագիր կամ գործակցութեան ծրագիր լաւ է որ պաշտօնական բնոյթ չստանայ և ոչ ալ հրապարակուի։

Ձեր թեմի յատուկ պայմաններու մէջ, հնարաւոր կը գտնենք որ ներքին կարգադրութիւններով երկու կողմերու միջև եղբայրական սիրոյ յարաբերութիւններու զարգացում և գործակցութիւն տեղի ունենան էկումենիկ ոգիով, բացառիկ առիթներով և թեմակալ առաջնորդի հաւանութեամբ, միատեղ աղօթքի հանդիպումներու, կրօնական-մշակութային և դաստիարակչական նիւթերու սերտման համար ասուլիսներու, համազգային բնոյթ կրող մշակութային-հայրենասիրական հանդիսութիւններու համատեղ կազմակերպմամբ։

3. Մասնաւոր գնահատանքի արժանի կը գտնենք և ուսանելի՝ Տեղեկագրի ներածական մասը և յատկապէս «մէկ հայ ժողովուրդ, մէկ հայ եկեղեցի» գաղափարի բանաձևումը, ըստ որում «ազգ մը բնական, ուստի և Աստուծոյ կամքին համաձայն ընկերային միաւոր մըն է» և հետևաբար «առաջին հերթին կարևոր է որ մէկ եկեղեցիի մէջ միանան ազգային նոյն ընտանիքին պատկանող քրիստոնեայ հաւատացեալները»։ Ընդունելի կը գտնենք նաև մեկնութիւնը որ կը տրուի 1846-ին Կ. Պոլսոյ Տ. Մատթէոս Պատրիարքի ծանօթ բանադրանքին, որպէս «տեղւոյն և ժամանակին» վերաբերող պարագայ։

4. Անկեղծօրէն զգացուած ըլլալով և խոստումնալից նկատելով աւետարանական մեր եղբայրներու վերջին տարիներու ընթացքին բազմիցս և պաշ-

տօնապէս արտայայտած տրամադրութիւնները, հովանիին տակ գալու և միանալու հայոց Մայր եկեղեցիին, Մենք պիտի թելադրէինք որ գոյութիւն առած յանձնախումբը փորձէր ճշդել այն ինչ որ ընդգծեցինք վերոյիշեալ թիւ 1 կէտին մէջ և ինչ որ գլխաւոր առաջադրանքն ու սպասումն է Մեր և եպիսկոպոսաց ժողովի։

Մենք, յուսացեալ սրտով, հայ քրիստոնեայի ոգիով և հայրաբար կը փափաքինք միութեան հրաւէր կարդալ մեր աւետարանական զաւակներուն և անոնց բարի ուշադրութեան յանձնել՝

ա. Որ մեր ժամանակներու էկումենիկ ոգին ցոյց կու տայ մեզի միութեան ճանապարհը մինոյն ազգին պատկանող բաժանեալ զաւակներուն, որ սքանչելի կերպով բանաձեւուած է արդէն Տեղեկագրին մէջ։

բ. Որ մեր օրերուն երբ կրօնական հաւատքը կ՛անցնի տագնապի շրջան մը, պարտինք միացեալ ուժերով կազմակերպել պաշտպանութիւնը մեր հայրերու լոյս հաւատքին։

գ. Որ այդ նպատակին առաւել արդիւնաւէտութեամբ հասնելու համար, պէտք է առաւել ամուր կերպով կառչինք մեր Մայր եկեղեցւոյ կանոնական ու աւանդական, պատմութեան փորձով նուիրագործուած ու սրբացած սկզբունքներուն, հասկացողութիւններուն և նուիրապետական կառոյցին, որովհետև միմիայն անոնք կը հանդիսանան գերագոյն գրաւականները հայ քրիստոնէութեան ինքնուրոյն գոյատեւման, հայ եկեղեցւոյ մէկութեան և ինքնագլխութեան և հայ հաւատացեալ ժողովուրդի հոգևոր, մշակութային և ազգային միասնութեան։ Այլապէս հայ եկեղեցին կարճ ժամանակի ընթացքին փշուր փշուր կրնայ ըլլալ և կորսնցնել իր ուրոյն գոյութեան իմաստն ու հնարաւորութիւնը։ Հայ քրիստոնեայի խղճի պարտքը պէտք է նկատենք հաստատել թէ հայ բողոքականութեան մէկ ու կէս դարու պատմութիւնը և մանաւանդ արդի վիճակը ապացոյց է մեր մտահոգութեանց ճշմարտութեան, տրուած ըլլալով որ քանի մը տասնեակ հազարի հասնող հայ բողոքականութեան զանգուածը ինքն իր մէջ բաժնուած է տարբեր յարանուանութիւններու, առաւել կամ նուազ չափով ենթակայութեան ներքև գտնուելով բողոքական այլազգի մեծ կազմակերպութիւններու կամ միութիւններու։

դ. Որ հայոց պատմութեան այս ժամանակաշրջանին երբ մեր ժողովուրդի կէսէն աւելին կը գտնուի մայր երկրի սահմաններէն դուրս, աւելի քան երբեք հրամայական կը դառնայ ամրապնդել և անխորտակելի միաձոյլ ժայռի մը վերածել հայ քրիստոնէութիւնը իր մէկ ու անբաժան Մայր եկեղեցիով, որ առաւել արդիւնաւէտութեամբ պիտի կարողանայ շարունակել հոգևոր շինութեան և ազգապահպանման իր պատմական առաքելութիւնը։

ե. Որ խոր տագնապի մէջ է այսօր կրօնական հաւատքը գրեթէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի մէջ, տագնապի մէջ է Հայաստանեայց եկեղեցին նաև ներքին պատճառներով, վտանգի տակ է հայութեան գոյութիւնն իսկ սփիւռքի տարածքի վրայ։ Այս պայմաններու մէջ անարդար պիտի ըլլար մեղադրել մեր Մայր եկեղեցին ազգայնականութեան մէջ։ Հայ ազգը ինք ևս, այս արևին տակ իրաւունքը և պարտականութիւնը ունի ապրելու այնպէս ինչպէս Աստուած է զայն ստեղծած և պատմութիւնն է զայն կերտած՝ իբրև ինքնատիպ և ինքնակամ ազգութիւն, իբրև քրիստոնէական հաւատքը ստեղծագործ կերպով բիւրեղացուցած ժողովուրդ, իբրև ինքնագլուխ ուղղափառ եկեղեցի, մէկ ու անբաժան։

Հայ ժողովուրդի պատմութեան այս ճակատագրական պահուն հարց կը

դրուի թէ Մեր բաժանեալ զաւակները՝ կաթողիկէ թէ բողոքական, պատրա՞ստ են լսելու սիրոյ հրաւէրը հայոց Մայր եկեղեցւոյ:

Հայաստանեայց Մայր եկեղեցիին մերձենալու՝ Ամերիկայի աւետարանական համայնքներու պատուածահանց առաջադրանքները, մղեցին Մեզ սոյն խոհերն ու իղձերը այս թուղթին յանձնել ու յղել Ձեզի և Ձեր միջոցաւ Մեր աւետարանական եղբայրներուն:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ծրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով եղիցի» (Ա Կորնթ. ԺԶ 14):

Միշտ նոյն սիրով և գնահատանքով, մնամք աղօթող Ձեր հոգեշէն գործոց լիակատար յաջողութեան և Ձեր արևշատութեան համար:

Հայրական օրհնութեամբ

ՎԱԶԳԷՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

30-ը դեկտեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին



# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանուն Ամենայն Հայոց կաթողիկոսի, դիվանս լիազորված է հաստատելու և մեր եկեղեցու սպասավորների ու հավատացյալ ժողովրդի ուշադրությանը հանձնելու, թե Անթիլիասի Տանն Կիլիկիո դիվանի վերջերս հրապարակած անթվակիր շարադրանքը, ի մասին «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսի գործածության, փարիսեցիաբար խմբագրված մի փաստաթուղթ է, որ մի անգամ ևս քողազերծում է այդ Աթոռի այժմու պառակտիչ ոգին, ընդդեմ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի։

Պատմությունից հայտնի է, թե վերոհիշյալ շարադրանքի մեջ հիշատակված մի քանի ապօրինությունները մեր եկեղեցու կողմից մերժված և դատապարտված արարքներ են եղել, արարքներ, որով լոկ տեղական իրավասություններ ունեցող կիլիկյան գահակալներից ոմանք, մղված ստորակայության բարդույթներից, փորձել են երբեմն օգտագործել «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսը, հակադրվելով Հայոց Ընդհանրական Հայրապետության, որ ի ս. Էջմիածին, երբեմն էլ ս. Երուսաղեմի ու Կ. Պոլսի պատրիարքություններին։

Շատ ուշագրավ և ինքնին պերճախոս է, որ Անթիլիասի շարադրանքի մեջ հիշատակված կիլիկյան վեց գահակալների օգտագործած տիտղոսներից ոչ մեկը մյուսին չի նմանվում, տիտղոսներ, որոնք չեն օգտագործվել կիլիկյան մյուս կաթողիկոսների կողմից։

Հարց կարելի է տալ, թե Անթիլիասի ներկա գահակալը ինչո՞ւ է հետևում մի քանի օրինազանց կիլիկյան կաթողիկոսների օրինակին և չի հետևում՝ նույն Աթոռի օրինապահ կաթողիկոսների օրինակին, որոնք ճնշող մեծամասնություն են կազմում։

Անցյալում կատարված մի քանի անկարգություններ երբեք չեն կարող արդարացնել նոր անկարգություններ։

Անթիլիասական շարադրանքի մեջ սպրդած է, սակայն, մի ճշմարիտ դատողություն, այն է՝ «...յուրաքանչյուրը իր պատմական տեղը և իր ծառայության կալվածը և դերը ունի»։ Այո՛, այդպես էլ պե՛տք է լինի։ Որով, Մայր Աթոռս հրավիրում է կիլիկյան Աթոռը, որ հարգի այս սկզբունքը, թե՛ կաթողիկոսական տիտղոսի օգտագործման և թե՛ իրավասությանց սահմանների տեսակետից, ի սեր վերականգնման մեր Մայր եկեղեցու միության և ներքին խաղաղության։

Այլապես նրա խոսքը, առանց գործի, մնում է կեղծ ու մեռյալ։

Անթիլիասի հրապարակած նոր այս շարադրանքը գալիս է մի անգամ ևս ապացուցելու, թե ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության հանդեպ նա։ անշեղ կերպով մնում է հակաթոռի դիրքերի վրա։

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

30-ը նոյեմբերի 1979 թ.,
Ս. Էջմիածին




## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**Նոյեմբերի 4-ին, կիրակի.—Ը կիրակի զկնի ս. Խաչի.**

Այսօր Մայր տաճարում իր անդրանիկ եպիսկոպոսական պատարագն է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ աշխարհում կայուն խաղաղություն հաստատելու անհրաժեշտության մասին, Ավետարանի պատգամների լույսի տակ:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

**Նոյեմբերի 11-ին, կիրակի.—Թ կիրակի զկնի ս. Խաչի.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում տ. Մասիս աբղ. Գալստյանը՝ ս. Խաչի խորհրդի և նշանակության մասին հավատացյալների կյանքում:

* * *

**Նոյեմբերի 16-ին, ուրբաթ.**—Այսօր Մայր Աթոռ է ժամանում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

Հանուն Հայոց Հայրապետի սրբազան հորը օդանավակայանում դիմավորում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ ընկերակցությամբ Սարգիս արկ. Սարգսյանի:

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքն անելուց հետո, տ. Տիրայր եպիսկոպոսը Վեհարանում աջահամբույրով ստանում է Հայոց Հայրապետի օրհնությունը: Ն. Սրբությունը ողջունում և բարի գալուստ է մաղթում տ. Տիրայր եպիսկոպոսին:

* * *

**Նոյեմբերի 17-ին, շաբաթ.**—Այսօր Մայր Աթոռ է ժամանում Երիտասարդ քաղաքական գործիչների ամերիկյան խորհրդի պատվիրակությունը՝ նույն կազմակերպության ղեկավարներ Սպենսեր Օլիվերի և Հարրի Ֆլեմինգի գլխավորությամբ:

Պատվիրակության կազմում էին ԱՄՆ-ի պրեզիդենտի օգնական Պեմ Պաուելը, Երիտասարդ դեմոկրատների նախկին պրեզիդենտ Ռոբերտ Ալենը և ԱՄՆ-ի երիտասարդ քաղաքական այլ գործիչներ:

Հյուրերը ծանոթանում են ս. Էջմիածնի համառոտ պատմությանը, դիտում եկեղեցական արվեստի թանգարանը և Հին Վեհարանը:

Այնուհետև հյուրերին բարեհաճում է ընդունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հայրապետի և հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

*
* *

**Նոյեմբերի 18-ին, կիրակի.—Ժ կիրակի զկնի ս. Խաչի.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում տ. Աղան վրդ. Բալիոզյանը՝ «Արիւն ճաճապատակաց սերմն եկեղեցւոյ» բնաբանով:

Ս. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հոգեհանգստյան կարգ՝ վերջերս Երևանում վախճանված երաժշտագետ Միհրան Թումաճանի հիշատակին:

Միհրան Թումաճանը Կոմիտաս վարդապետի «հինգ սաներից» մեկն էր:

1923 թվականին կոմիտասյան հինգ սաները ցրվում են տարբեր երկրներ: Միհրան Թումաճանը մեկնում է ԱՄՆ և ամերիկահայ գաղութում ծավալում գզալի երաժշտական գործունեություն: Խմբավարական աշխատանքին զուգընթաց նա զբաղվում է Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից հրաշքով փրկված ու Ամերիկա ապաստանած հայերից ժողովրդական երաժշտության նմուշներ հավաքելով և ձայնագրելով:

Իր կյանքի վերջին տարիները Միհրան Թումաճանը անցկացրեց մայր հայրենիքում, ուր և 1972 թվականին տպագրվեց իր «Հայրենի երգ ու բան» հավաքածուն (Ա հատոր):

*
* *

**Նոյեմբերի 21-ին, չորեքշաբթի.**—Այսօր Երևանի պետական համալսարանի դահլիճում տեղի է ունենում ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված հանդիսություն՝ համալսարանի «Շիրակացի» ակումբի նախաձեռնությամբ:

Հանդիսությանը ներկա են լինում համալսարանի դասախոսներ, ուսանողություն, մտավորականներ, արվեստագետներ:

Հանդիսությունը բաց է անում «Շիրակացի» ակումբի նախագահ Ստեփան Մուրադյանը՝ ջերմորեն ոգեկոչելով Շնորհալու խնկելի անունն ու նվիրական հիշատակը:

Ապա ս. Ներսես Շնորհալու կյանքին, գործունեությանը, մատենագրական և, մանավանդ, երաժշտական ժառանգությանը նվիրված բովանդակալից զեկուցումով հանդես է գալիս արվեստագիտության թեկնածու Նիկողոս Թահմիզյանը: Զեկուցման թեման էր «Շնորհալին իբրև երգասաց»:

Գեղարվեստական բաժնում Շնորհալու գրվածքների արտասանությամբ և երգեցողությամբ ելույթ են ունենում համալսարանի ուսանողները, սիրված երգչուհի Գոհար Գասպարյանը, երգիչ Գևորգ Եղիազարյանը և Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախումբը՝ գեղարվեստական ղեկավարությամբ արվեստի վաստակավոր գործիչ Էմմա Ծատուրյանի:

Սույն հանդիսությանը ներկա են լինում Մայր Աթոռի միաբանները և հոգևոր ճեմարանի ուսանող սարկավագները:

*
* *

**Նոյեմբերի 22-ին, հինգշաբթի.**—Այսօր, Վեհափառ Հայրապետի հրավերով, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդական տեղապահ տ. Զավեն եպս. Չինչինյանը:

Հանուն Հայոց Հայրապետի օդանավակայանում սրբազան հորը դիմավորում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ ընկերակցությամբ Աղվան կիսասարկավագ Գասպարյանի:

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, տ. Զավեն եպիսկոպոսը Վեհարանում ներկայանում է Հայոց Հայրապետին և աջահամբույրով ստանում նրա օրհնությունը: Ն. Սրբությունը ողջունում և բարի գալուստ է մաղթում Տ. Զավեն եպիսկոպոսին:

*
* *

**Նոյեմբերի 23-ին, ուրբաթ.**—Վեհափառ Հայրապետի հրավերով, Երևան ժամանեցին անգլիկան քույր եկեղեցու արտաքին հարաբերությանց բաժնի վարիչ և Քենթրբերիի Արքեպիսկոպոսի քարտուղար Հայր Մայքլ Մուրը՝ Լոնդոնից, և Մոսկվայում Միացյալ Նահանգների դեսպանատան աշխատողների հոգևոր մատակարար հայր Ռեյմոնդ Օպենհայմը՝ իր տիկնոջ հետ՝ Մոսկվայից:

Նոյեմբերի 24-ին մեծարգո հյուրերը այցելեցին ս. Էջմիածին և ընդունվեցին Ամենայն Հայոց Հայրապետի կողմից: Նրանք եղան Մայր տաճարում, եկեղեցական արվեստի թանգարանում:

Կիրակի օրը, նոյեմբերի 25-ին, Մայր Աթոռի հյուրերը ներկա եղան Մայր տաճարում մատուցված ս. պատարագին, որից հետո Վեհարանում նրանց պատվին ճաշկերույթ տրվեց Վեհափառ Հայրապետի կողմից:

Նույն օրը, կեսօրից հետո, հյուրերն այցելեցին ս. Գայանե և ս. Հռիփսիմե վանքերը, ապա Զվարթնոց տաճարի ավերակները: Երեկոյան նրանք ներկա եղան Երևանի հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում ս. Ներսես

Շնորհալի Հայրապետի մահվան 800-ամյակին նվիրված համերգին։

Հաջորդ օրը հարգարժան հյուրերն այցելեցին հայ նահատակաց հուշարձան՝ Ծիծեռնակաբերդում, Երևանի ս. Սարգիս եկեղեցի և ս. Գեղարդ վանք։

Երեկոյան հոգևոր ճեմարանի հանդիսասրահում հյուրերը ներկա եղան իրենց պատվին կազմակերպված ուսանողական հավաքույթին և ողջույնի խոսքեր ուղղեցին ճեմարանի սաներին։

Նոյեմբերի 27-ին գերապատիվ հայրերը այցելեցին ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պատմության թանգարան, ապա ս. Էջմիածնում հանդիպում ունեցան Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակիցների հետ։ Այնուհետև Վեհարանում Վեհափառ Հայրապետն ընդունեց հայր Մայքլ Մուրին։ Հայոց Հայրապետի և Քենթըրբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցչի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, որի ընթացքում շոշափվեցին որոշ հարցեր՝ երկու քույր եկեղեցիների ապագա առավել սերտ գործակցության վերաբերյալ։

Նոյեմբերի 28-ին Մայր Աթոռի հյուրերը այցելեցին Էրեբունի ամրոց և ապա ինքնաթիռով մեկնեցին Մոսկվա։

Մայր Աթոռում և Երևանում գտնվելու օրերին հյուրերին մշտապես ուղեկցում էր հոգևոր ճեմարանի ավագ վերակացու Սարգիս սրկ. Սարգսյանը։

* * *

**Նոյեմբերի 23-ին, ուրբաթ.**—Այսօր Մայր Աթոռ է այցելում Արևմտյան Բեռլինի ավետարանական եկեղեցու վերապատվելի Վանս Դոր Հարմուդը, որը հոկտեմբերի 25—31 օրերին Մոսկվայում մասնակցել էր Խաղաղասեր ուժերի խաղաղության համաժողովին։

Հարգարժան հյուրին Վեհարանում ընդունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և զրույց ունենում նրա հետ։

* * *

**Նոյեմբերի 25-ին, կիրակի.—Ա կիրակի Յիսնակաց.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող եգիպտահայոց առաջնորդական տեղապահ տ. Զավեն եպս. Չինչինյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Յամաքեցաւ խոտն, եւ թօթափեցաւ ծաղիկն. եւ բան Տեառն մնայ յաւիտեան» (Եսայի Խ 8) բնաբանով։

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը։



Ն. ՏՈԿԱՐՍԿԻ

# ԱՆԻԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Հեռավոր անցյալում հարուստ կերպով կառուցապատված և բազմահազար բնակչություն ունեցող Անին այժմ ներկայացնում է ամայի և անմարդաբնակ ավերակներ՝ փռված Ախուրյան գետի աջափնյա սարահարթի վրա, Լենինականից 35—40 կմ հեռավորությամբ դեպի հարավ։

Քաղաքատեղը զբաղեցնում է մի հրվանդան, որը գտնվում է Ախուրյանի և նրա աջ վտակը հանդիսացող ու Ծաղկունյաց ձորով (Ծաղկոցաձորով) հոսող Անիի գետակի միախառնման մոտ։ Կողքի երկու ձորակները՝ Գայլիձորը և Իգիձորը, որոնք համապատասխանաբար դուրս են գալիս դեպի Ախուրյանի կիրճը և Ծաղկոցաձոր, հրվանդանում կտրում-առանձնացնում են մի եռանկյունաձև տարածություն, որի վրա սփռված են ժամանակի ու մարդկանց «ջանքերով» կիսավեր դարձած ամրություններ և առանձին շենքեր՝ գլխավորապես եկեղեցական։

Հիշատակված ավերակների հետ միասին ուշադրություն են գրավում արհեստական այրերը՝ փռված քաղաքատարածությունը սահմանափակող կիրճերի զառիթափ ափերին։ Անին հիշյալ կիրճերով երկու կողմից բնականորեն պաշտպանված էր և միայն երրորդ՝ հյուսիսային ծայրամասում կարիք ուներ համատարած պաշտպանական կառուցվածքների։ Քաղաքի նկատմամբ հարավային կողմից իշխում է մի բլուր, որի գագաթին էր գտնվում երբեմնի միջնաբերդը։ Նրա կազմի մեջ էր մտնում Կամսարականների ամրոցը։ Այստեղ պեղումների ժամանակ բացվել են տասներորդ և հաջորդ դարերի պալատական համալիրի մնացորդները։

Անիի առաջին քաղաքապարիսպները, որոնք պաշտպանության տակ էին վերցնում միջնաբերդից դեպի հյուսիս ընկած հրրվանդանի նեղ մասը, կառուցվել են 964 թ. Աշոտ Գ թագավորի ժամանակ։ Սակայն քաղաքը արագորեն աճում էր՝ 25 տարի անց զբաղեցնելով հրվանդանի այն ամբողջ հողատարածությունը, որն ընկած էր Գայլիձորի և Իգիձորի միջև։ Ուստի Աշոտի որդի Սմբատ Բ-ը ստիպված եղավ կառուցել տալու քաղաքապարիսպների երկրորդ գիծը (բազմաթիվ բուրգերով, քաղաքադարպասներով ու դռներով), որը հետագայում մի շարք անգամներ լրացվել և ամրացվել է։ Հիշյալ պարիսպներից դուրս, սարահարթի վրա, տարածվում էին ընդարձակ արվարձանները։

Քաղաքի բնակչության այսպիսի արագ աճը չէր կարող տեղի ունենալ միայն ի

հաշիվ թագավորական տանը մոտ կանգնած ֆեոդալական ավագանու, որն այստեղ գտնում էր իր գործունեության համար նպաստավոր պայմաններ: Չտեսնված թափով ծավալված քաղաքացիական և եկեղեցական շենքերի շինարարությունը աճեցնում էր Անիի բնակչությունը հազարավոր աշխատավորներով և նրանց սպասարկող արհեստավորներով ու մանր առևտրականներով: Ահա այդ հողազուրկ, միջոցներից սակավ մարդիկ, չունենալով քաղաքում տներ կառուցելու հնարավորություն, հավանաբար սկսեցին 10-րդ դարում մասսայաբար բնակվել ստորգետնյա բնակարաններում Անիի կիրճերի ժայռոտ ափերին: Մեր ենթադրությունը ճշտվում է նրանով, որ ընտանիքների ճնշող մեծամասնությունը բավարարվել է այստեղ միասենյակ բնակարանով: 1915 թ. Դ. Դիփշիձեի և 1916 թ. հոդվածիս հեղինակի կողմից ուսումնասիրված 823 բնակելի այրերից 693-ը միասենյակ էին[1]:

Անիի սարահարթի կտրվածքը բաղկացած է ժայռային երեք շերտերից՝ երկու ամուր (ներքևի և վերևի շերտերը) և մեկ փուխր (միջին շերտը) կազմված հրաբխային տուֆից: Ահա վերջինս էլ, շնորհիվ իր «մատչելիության», նախասիրեցին անեցիները: Տուֆի քառասուն մետրանոց շերտը հնարավորություն տվեց այրերը տեղավորել մի քանի հարկաշարքերով, որոնց թիվը առանձին հատվածներում հասնում է հինգի, գուցե և վեցի: Ներկայումս տեսանելի են գլխավորապես վերին հարկաշարքերը, որովհետև այրերի մոտ տուֆերը առանձնապես ուժեղ հողմնահարվել ու քայքայվել են, փուլքերի տակ ծածկելով ներքին հարկաշարքերը:

Ձորերում ստորգետնյա քաղաքի հարկաշարքերը տեղավորված են տարբեր ձևով, կապված ձորերի ափերի բնույթից: Մեկում, ինչպես օրինակ Ախուրյանի քաղաքային ափում, նրանք ձգված են անընդմեջ շարքով, իսկ ուրիշներում կազմում են խմբեր: Առանձնապես խիտ բնակեցված Ծաղկոցաձորում, ուր հանդիպակաց ափերը հըրվանդանաձև դուրս շեշտված տուֆային ժայռեր են, առանձին ձորակներով բաժանված միմյանցից, ժայռափոր բնակարանները կազմավորվում էին յուրօրինակ «թաղամասեր»: Դրանցից յուրաքանչյուրում, բացառությամբ տասնչորսից երկուսի, կային առնվազն մեկական եկեղեցի: Զգալի երկարության և բնակչության մեծ թվի դեպքում «թաղամասերը» ունեին մի քանի եկեղեցիներ, ըստ ծխերի թվի, քանի որ ժայռափոր եկեղեցիների փոքր չափերը և նրանցից մեծամասնության առջևում հարմար հարթակների բացակայությունը հնարավորություն չէր տալիս մեծաթիվ հավատացյալների կուտակման: Ծաղկոցաձորում հետազոտված 422 ժայռափոր բնակարանների միջև կային 19 ժայռափոր ծխային եկեղեցիներ, բացի տնային, վանքային և դամբարաններին կից չորս եկեղեցիներից:

Այլ էր դրությունը ստորգետնյա քաղաքի Ախուրյանի մասում: Այստեղ «թաղամասերը» բաժանված չէին ըստ բնական պայմանների: Չկային նաև եկեղեցիներ: Հավանաբար այստեղի այրաբնակները օգտվում էին քաղաքի վերգետնյա եկեղեցիներից: Դա միանգամայն հնարավոր էր, քանի որ հիշատակված այրերը ընդգրկված էին մայրաքաղաքի պաշտպանական պատերով, ու այդ պատճառով բնակիչները կարող էին մուտք ունենալ քաղաք: Նույնը չի կարելի ասել Ծաղկոցաձորի և Անիի մյուս ձորերի (քաղաքապարիսպների սահմաններից դուրս գտնվող) այրաբնակների մասին, որոնք տարբեր առիթներով կարող էին կտրվել քաղաքից ու այնտեղ գտնվող եկեղեցիներից: Ուստի կարելի է ենթադրել, որ Իգիձորը և Գայլիձորը ունեին երկու ինքնուրույն ծխեր ու իրենց ժայռոտ ափերից փորված ստորգետնյա եկեղեցիներ: Այրաբնակ բագնայրցիները, որոնք ունեին Անիի ամենատարողունակ ստորգետնյա եկեղեցին ու մի մատուռ, կարող էին սահմանափակվել մեկ ծխով: Նույնպիսի դրության մեջ էր և Ախուրյանի աջ ափի միայնակ ժայռափոր թաղը, որը քաղաքից դուրս էր, Անիի վտակից ցածր: Դատելով բնակարանների քանակից, նրա բնակչությունը թվով մեծ չէր և կարող էր բավարարվել մեկ եկեղեցիով:

«Ստորգետնյա Անիում» տարբեր վիճակում մեզ են հասել 35 եկեղեցիներ: Դրանցից մեկը տնային, մեկը վանքային, 7-ը դամբարաններին կից և 26-ը ծխական: Ենթադրում ենք, որ Անիի ծաղկման ժամանակաշրջանում, երբ անվթար էին ձորերի ժայռափորների բոլոր հարկաշարքերը,

[1] *Д. А. Кипшидзе*, Пещеры Ани (Материалы XIV Анийской археологической комиссии 1915 года. Обработка материалов, чертежи, предисловие и комментарии Н. М. Токарского), Ереван, 1972. Այս թվերը թույլ են տալիս գաղափար կազմելու Անիի այրաբնակների քանակի մասին: Ենթադրելով, որ հողով լցված բնակարանների թիվը մոտավորապես նույն չափ է, ու յուրաքանչյուր ընտանիքի կազմը կարող էր բաղկացած լինել 4—5 հոգուց, ապա կստացվի, որ այրաբնակ անեցիների թիվը կազմում էր շուրջ յոթ հազար:

ստորգետնյա եկեղեցիների թիվն է՛լ ավելի շատ էր։

* * *

Անիի ստորգետնյա եկեղեցիները մեծ չէին իրենց չափերով և ճարտարապետական հորինվածքներով մեծամասամբ պարզ էին։ Այսպես, դրանցից երկու ամենամեծերը՝ Բագնայրի ձորում և Ծաղկոցաձորում, Գագիկ Ա-ի կառուցած եկեղեցու մոտ, չհաշված ավագ խորանները, ունեն ընդամենը 30 և 27 քմ մակերես։ Իրենց ճարտարապետությամբ ուշագրավ անխորան եկեղեցիները՝ Տիգրան Հոնենցի դամբարանային համալիրում և Գայլիձորում, ունեն 18-ական քմ մակերես։



1. Ծաղկոցաձոր. Ձախ ափ. եկեղեցի

Բոլոր ստորգետնյա եկեղեցիները, բացի երկուսից, բաղկացած են տարբեր երկարության ուղղանկյուն թաղածածկ նավից, որը հատկացվում էր աղոթողներին, և ավագ խորանից, որը հարում էր նավի արևելյան ծայրին։

Ծաղկոցաձորի հիշատակված մեծ եկեղեցին կարող է այդ պարզագույն տիպի օրինակը հանդիսանալ։ Արևմտյան կողմից եկեղեցու առաջ նախկինում եղել է նույնպես ստորգետնյա մաս (նախամուտք կամ գավիթ), ավերված ժայռի փուլքի ժամանակ։ Հիմա եկեղեցին զրկված արևմտյան պատից, թողնում է խորքում աբսիդով մեծ քարանձավի տպավորություն (նկ. 1), բացվելով ձորի կողմը գետից մոտավորապես 20 մ բարձրությամբ։

Համարյա բոլոր ստորգետնյա եկեղեցիներում ավագ խորանը ունի թաղակապ կիսաշրջան աբսիդի տեսք։ Միայն երեք եկեղեցիներում նրանք ուղղանկյուն են։ Երկու



2. Քաղաքային եկեղեցի ժայռում (ըստ M. Brosset -ի)

դեպքում ավագ խորանից բացի, կիսաշրջանաձև են նաև նավի արևմտյան ծայրամասերը։ Ավագ խորնի մակերեսը մեծացնելու նպատակով, համարյա բոլոր դեպքերում նրա կիսաշրջան պատը խորացված է այնպես, որ նրա սկիզբը չի համընկնում անկյունների հետ (նկ. 1)։ Ավագ խորանի բեմը, ինչպես ամենուրեք անում էին Բագրատունյաց շրջանի վերգետնյա եկեղեցիներում, զգալի չափով (մինչև 1 մ) բարձր է աղոթասրահի հատակից։ Մինչ այդ, ինչպես տեսնում ենք Իգիձորի եկեղեցի-դամբարաններում, բեմի բարձրությունը մեծ չէր։ Ավագ խորաններում հանդիպում ենք սեղանների՝ ուղղանկյուն վեմ քարի ձևով կերտված աբսիդի խորքում միևնույն ժայռից (նկ. 10)։ Աղոթասրահի նավի երկար լինելու դեպքում, նրա երկայնական պատերը մեջտեղում ունեն պիլյաստրաձև ելուստներ, որոնք «կրում» էին կամ թաղակիր կամարները, կամ նույն թաղերի անկյունից անկյուն ձգված ջլակամարները (նկ. 2)։ Ինքն ըստ ինքյան հասկանալի է, որ հիշատակված պիլյաստրաձև ելուստներն ու կամարները ժայռափոր կառուցվածքներում չունեին որևիցե կոնստրուկտիվ նշանակություն և հանդիսանում էին վերգետնյա ճարտարապետության ձևերի և կառուցվածքների լոկ դեկորատիվ նմանակումը։

Մի քանի եկեղեցիների հարդարման մեջ օգտագործված են կիսասյուներ՝ տեղադրված արսիդի և նավի անկյուններում, ինչպես նաև տարբեր համակցությամբ (զույգ կամ փնջաձև) փոխարինող ելուստներ երկայնական պատերի վրա։ Նման հարդարում ունեն երկու, իրենց ճարտարապետական լուծվածքով միմյանց շատ նման եկեղեցիներ։ Դրանցից մեկը գտնվում է



3. Գայլիձոր. Եկեղեցի

Ծաղկոցաձորի վերին հոսանքում, նրա ձախ ափի ժայռերի մեջ։ Մյուսը՝ այսպես կոչված «կարմիր» եկեղեցին է (նկ. 11) քաղաքամիջում, «Պաղունի պալատ»-ի մոտ։ Վերջինս միայն պայմանականորեն կարելի է կոչել ստորգետնյա, որովհետև այն փորված է գետնի վրա ու քաղաքի կառուցվածքների միջև գտնվող մի կարմրագույն ժայռազանգվածի մեջ (նկ. 2)։ Ձգված նավաղոթարաններ ունեցող երկու եկեղեցիներում էլ երկայնական պատերի նկատմամբ դուրս են շեշտված սյունափնջեր, որոնք «սյանում են» թաղակիր կամարը և ջլակամարները։ Ավագ խորանների աբսիդների անկյուններին նույնպես տրված են սյուների ձև։ Գայլիձորի եկեղեցում, որը պատկանում է աղոթարանի արևելյան և արևմտյան կողմերից կիսաշրջան աբսիդ ունեցողների թվին, կիսասյունիկներն ստացել են այլ՝ դեկորատիվ նշանակություն (նկ. 3)։ Այստեղ ավագ խորանի կիսաշրջանը բաժանված է վեց մասի և հարդարված է որմնակամարներով միացված զույգ կիսասյուների միջոցով։ Սրանում կարելի է նկատել Անիի Կաթողիկեի և Մարմաշենի 1029 թ. եկեղեցու աբսիդների հարդարման պարզեցված կրկնությունը։

Ծաղկոցաձորի վերին հոսանքում, նորից ձախ ափին, հայտնաբերված է շատ հետաքրքիր մի այր՝ բաղկացած թաղակապ երեք նավերից։ Ցավոք, դա այնքան ավերված է և լցված քարաբեկորներով ու ողողահարված ապարով, որ չհաջողվեց չափագրել և պարզել, թե ի՞նչ է այստեղ եղել, եռանավ բազիլի՞կ, թե՞ երեք ինքնուրույն եկեղեցիներ, քանի որ յուրաքանչյուր նավ արևելյան կողմից ավարտվում է աբսիդով։ Այրի արևմտյան ճակատային պատը քայքայված է մինչև հիմքը և այդ պատճառով հայտնի չէ մուտքերի թիվը՝ եղել է մե՞կ, թե՞ երեք։



4. Ծաղկոցաձոր. Կերկեմանոց. գմբեթավոր եկեղեցի

Այս եռանավ այրում ճարտարապետական լուծման հիմնական սկզբունքը երկու դեպքում էլ նույնն է, ինչ Անիի ստորգետնյա թաղամասերի բոլոր միանավ եկեղեցիներում։ Իսկ Ծաղկոցաձորի աջ ափին, Գագիկ Ա-ի տաճարի դիմաց, Տիգրան Հոնենցի արդեն հիշատակված դամբարանային մեծ համալիրում, պահպանվել է գմբեթավոր մի եկեղեցի՝ ստորգետնյա քաղաքի միակ մատչելի ավերակը (նկ. 4)։

Հատակագծի հիմքն այստեղ հանդիսանում է գմբեթատակ քառանկյունին, որը մոտ է քառակուսուն։ Արևելյան կողմից նրան հարում են ավագ խորանի շատ խոր աբսիդը և մնացած երեք կողմերից՝ հարթ խորշեր։ Արևմտյան կողմից հիշյալ խորշերի անկյունները կտրված են 45° անկյան տակ։ Խորշերի լայն կամարների և ավագ խորանի կամարի միջև, անկյուններում, ժայ-

ռի վրա վարպետորեն փորված են առագաստներ: Սրանց վերնամասը եզերված է քիվով, որը կազմում է պսակող գմբեթի ոչ բարձր թմբուկի օղակաձև «հիմքը»: Այս եկեղեցու ընդհանուր կառուցվածքը մոտենում է նրան խաչաձև գմբեթավոր փոքր եկեղեցիներին:



5. Ծաղկոցաձոր. Քարափ վանքով. ընդհանուր տեսք

Ծաղկոցաձորի աջ ափի, Իգիձորից մինչև Ախուրյան ընկած տեղամասի եկեղեցիները, ըստ երևույթին, չի կարելի համարել ծխական, քանի որ դրանք այստեղ կազմում էին բաղկացուցիչ մասը տարբեր նշանակության ժայռափոր կառուցվածքների և նույնիսկ անմիջականորեն չէին հաղորդակցվում արտաքին աշխարհի հետ: Վերին հարկաշարքերը զբաղեցնող այդ կառուցվածքները պատկանում էին նշանավոր քաղաքացիների, իսկ մի դեպքում էլ՝ փոքր վանքի: Դրանցից էլ սկսենք մեր պատմությունը:

Այդ բարդ այրը գտնվում է Անիի միջնաբերդի դիմացը և երկու խորը ձորակների միջև ընկած մի սրածայր քարափի մեջ (նկ. 5): Քարափն ամբողջ բարձրությամբ կտրտված է իրենց հատակագծով Անիի ստորգետնյա սովորական բնակարաններից էապես տարբերվող այրերի հարկաշարքերով: Այրը, որի մասին խոսում ենք, զբաղեցնում է վերին հարկաշարքի զգալի մասը: Այժմ դրան կարելի է հասնել ոչ առանց դժվարության, այրերի ներքին հարկաշարքերի միջոցով: Անցնելով ստորգետնյա միջանցքով, ընկնում ենք ոչ մեծ (2,5×2,45 մ, բարձրությամբ՝ 2,35 մ) քառակուսի մի սենյակ: Հնում այստեղ կարելի էր մտնել նաև այրի ճակատային պատի ուղղությամբ ձգված ժայռային բաց սրահից սկսվող մուտքով: Այժմ այդ սրահը փլված է և դուռը բացվում է ուղղակի դեպի ձորը: Ներքին դռան աջ և ձախ կողմերում կան ևս երեք դռներ, որոնք տանում են դեպի փոքր սենյակները (դրանցից փոքրագույնը ընդամենը 2,2 քմ մակերես ունի): Աջ պատում դուռ է, որը տանում է երկրորդ, նույնպես բավականին ընդարձակ, համարյա բոլորովին ավերված թաղակապ սենյակ: Դրանցից կարելի է անցնել դեպի պարզագույն տիպի մի եկեղեցի և այնուհետև՝ մի կարճ միջանցքով դեպի թաղա-




6. Ծաղկոցաձոր. Վանքի գլխավոր հատակագիծը. ա. սեղանատուն, բ. գավիթ, գ. եկեղեցի, դ. խուցեր

նակության ժայռափոր կառուցվածքների և նույնիսկ անմիջականորեն չէին հաղորդակցվում արտաքին աշխարհի հետ: Վերին հարկաշարքերը զբաղեցնող այդ կառուցվածքները պատկանում էին նշանավոր քաղաքացիների, իսկ մի դեպքում էլ՝ փոքր վանքի: Դրանցից էլ սկսենք մեր պատմությունը:

կապ սենյակը՝ պառկելու տեղով երկարավուն խորշի մեջ, որը գտնվում է սանդուղքից բացվող մուտքի աջ կողմում: Արդեն այրի այս մասի հետ ծանոթացումը բացառում է տարակուսանքն այն բանում, որ այստեղ ասկետիկ կյանքով ապրելիս է եղել միաբան եղբայրների փոքրաթիվ մի խումբ: Դրա մասին են վկայում սենյակների ողջ

կազմը—եկեղեցին գավթով, սեղանատունը և խցերը, որոնցից առաջինը, որ գավթի միջոցով անմիջականորեն կապված էր եկեղեցու հետ, ամենայն հավանականությամբ պատկանում էր վանահայրին կամ քահանային: Սեղանատնից ձախ, մեկը մյուսի հետևից գտնվում էին ևս երկու սենյակներ: Առաջինին կից թվով չորրորդ փոքրաչափ խուցն էր վերի կիսահարկով: Երկրորդ շատ ցածր (բարձր. 1,5) խցում, երկու պատերին կից սարքավորված են պառկելատեղերը:



7. Ծաղկոցաձոր. Աջ ափ. անֆիլադ՝ բաղկացած ժամատնից, տնային եկեղեցուց և խորանից

Բոլոր սենյակների խստությունը (բացի սեղանատնից և գավթից) ընդգծում են իրենց ոչ մեծ բարձրությունը— ընդամենը 1,7 մ: Հիշյալ սենյակների շարքը ավարտում է փոքր կիսավեր աղավնատունը: Միաբանության մի մասը կարող էր ապրել ներքին հարկաշարքի այրերում, որտեղ ըստ երևույթին կային նաև տնտեսական սենյակներ, ինչի մասին վկայում են այնտեղ գտնվող շրջանաձև եզակի աղավնատունը 6—7 հարյուր թռչունի համար:

Վերջին հարկաշարքում, վանքային մեծ այրից աջ, քարափի ծայրին, ոչ մեծ դամբարաններին կից, պահպանվել են երկու փոքր եկեղեցիներ: Դրանցից մեկը սովորական տիպի է, իսկ մյուսը, բացի ավագ խորանի աբսիդից, ունի երկրորդ կիսաշրջան խորանը նաև արևմտյան ծայրում:

Բագնայրի կիրճի ելքի մոտ, նրա ձախ ափին, որտեղ նրա և Ծաղկոցաձորի ծայրակցատեղում մի անկյունավոր ժայռազանգված է կազմված, դրա վերնամասում տեղավորված են անհայտ հարուստ անեցու պատկանող մերձքաղաքային դաստակերտի («Հովանոցի») ընդարձակ դահլիճները: Վերջիններս տեղավորված են ձորերի երկարությամբ մեկ շարքով: Բագնայրի կողմի վրա եղել են երկու դահլիճ և չպահպանված նախասրահ, հավանաբար դռնապանի սենյակով: Դահլիճների հետևում, ժայռի խորքում, փորված էր մի մեծ (9,2×9,3 մ) սեղանատուն: Ծաղկոցաձորի ափում գտնըվում էին երեք ժայռափոր դահլիճներ, իսկ Բագնայրի կիրճի պտույտի մոտ՝ տնային եկեղեցի՝ անֆիլադային կարգով դասավորված խորանով և գավթով (նկ. 7):

Սովորական տիպի ոչ մեծ եկեղեցին և նրա հարակից փոքր խորանը ոչնչով չեն առանձնանում Անիի ստորգետնյա եկեղեցիներից: Իսկ գավիթը, որ հարում է եկե-



8. Ծաղկոցաձոր. Գավիթ՝ տնային եկեղեցուն կից

ղեցուն հյուսիսից, պիտի դասվի մայրաքաղաքի ստորգետնյա դիտարժան կառուցվածքների շարքը: Այն ներկայացնում է հզոր մույթերով երկու մասի բաժանված մի սրահ, մույթերը կրում են ժայռափոր թաղերի մի բարդ համակցություն (նկ. 8): Հնում սրահի ափին ուղղահայաց նավերը լուսավորվում էին դեպի քաղաք նայող պատուհաններով: Հայաստանի վերգետնյա ճարտարապետության մեջ գոյություն ունեցող եկեղեցիներին կից գավիթների շինարարությունը լայն տարածում ստացավ Զաքարյանների ժամանակ: Ստորգետնյա պայմաններում հետևել այդ օրինակին հնարավոր չէր, որովհետև եկեղեցիների առջևում չկային բավականաչափ հարթակներ, իսկ կողքից նրանք «կառուցապատված» էին այրային բնակարանով: Այդ պատճառով էլ ստորգետնյա գավիթներն այստեղ հազվադեպ են: Նրանք բոլորը «կառուցված են» եկեղեցիների հետ միաժամանակ և ներկայացնում են պարզ քառանկյունի մի սենյակ: Գայլիձորի հիշատակված եկեղեցուն կից գավիթը կամարներով բաժանված է երկու անհավասար մասերի: Կամարները պատերից ձգված են մեջտեղում կանգնած սյան վրա: Ուշագրավ է վերջինիս խոյակը, որը նմանակում է Գագկաշենի խոյակին:

«Հովանոցի» տեղամասից հետո, Ծաղկոցաձորի աջ ափը զգալի երկարությամբ զբաղեցված է ստորգետնյա մի ընդարձակ գերեզմանոցով՝ ստորգետնյա միայնակ

գմբեթավոր եկեղեցիով հանդերձ։ Սրա մեջ մտնում են տեսքով բազմազան մի շարք սենյակներ՝ գերեզմաններով։ Ժայռի ճակատային մասը համարյա ամբողջ երկարությամբ փլվել է և այդ սենյակների ներսը լավ տեսանելի է ձորից ու քաղաքատեղից։ Գերեզմանոցի սկզբնամասը ներկայացնում էր մի սրահ կամ միջանցք, որի մի պատի մեջ փորված է բարձր և խորը խորշերի շարք, իր ժամանակ քարե կափարիչներով ծածկող արկղաձև սարկոֆագներով ներքնամասում։ Առաջին խորշը, որում Ն. Մառի կարծիքով թաղված էր 1215 թ. Անիի լավագույն եկեղեցիներից մեկը կառուցած



8. Ծաղկոցաձոր. Ժայռափոր գերեզմանոց. խորշ Տիգրան Հոնենցի գերեզմանով

Տիգրան Հոնենցը, ամբողջությամբ ծածկըված է մեր ժամանակներում վատ պահպանված որմնանկարներով։ Սրանց մասին գաղափար է տալիս լուսանկարը (նկ. 9), որը վերարտադրում է հավանաբար Անիի արշավախմբում աշխատող նկարիչներից մեկի գունավոր նկարը (նկարչի ազգանունը պարզել չհաջողվեց)։ Խորքում, հետին պատի վրա, պատկերված է Դեհիսուսը՝ Քրիստոսը նստած գահին, երկու կողմերում ունենալով Աստվածածինը և Մկրտիչը։ Թաղի վրա Միքայել (աջից) և Գաբրիել (ձախից) հրեշտակներն են թաղի գագաթին միմյանց մոտեցող գլուխներով։ Դեհիսուսից աջ հայերեն արձանագրություն է՝ բաղկացած 16 տողից (ձախ սյունակում բերված է Դ. Ղիփշիձեի դաշտային գրառումը, աջում՝ տողեր, որոնք տարբեր են խորշի նկարից վերցրած այդ գրառումից)։ Համապատասխան արձանագրություն ունեն նաև հրեշտակների պատկերները։ Որմնանկարների հետքեր նկատելի են միջանցքի պատին և հաջորդ խորշի մեջ։

Պտտվելով դեպի ձախ, միջանցքը բերում է նախասրահ՝ ընկած հատակին գերեզմաններով երկու ոչ մեծ սենյակների առջև։ Այնուհետև տեղավորված են թաղման բնույթով իրարից տարբեր երկու մեծ դահլիճներ։ Առաջինը, ըստ ճակատի 12,75 մ երկարությամբ, երեք պահպանված պատերի մեջ ունի 6 խորշեր, որոնցից երկուսը խորությամբ այնքան մեծ են, որ տեղավորում են մի քանի թաղում։ Երկրորդ դահլիճը, տեղավորված փոքր-ինչ ցածր (չափերը 11,40×4,95×2,80 մ), ամբողջությամբ զբաղեցված է հատակին փորված հինգ շարք գերեզմաններով։ Չորս շարքում զետեղված է 8-ական, իսկ հինգերորդում յոթ գերեզման։ Գերեզմանոցի սենեկաշարքը նրա հարավային մասում ավարտվում է մեզ արդեն ծանոթ գմբեթավոր եկեղեցով (նկ. 4)։

Անիի հնագիտական արշավախմբի տարիներին Ն. Մառի, Թ. Թորամանյանի, իրենց մասնակիցների և օգնականների աշխատությամբ հիմք էր դրվում Հայաստանի հնությունների սիստեմատիկ ուսումնասիրության։ Այն ժամանակ դեռևս հայտնի կամ ուսումնասիրված չէին շատ հուշարձաններ, այդ պատճառով այժմ, ավելի քան կես դար անց, երբ կուտակված է հսկայական նյութ, երբեմն կարիք է լինում վերանայել հաստատված կարծիքները։ Այդպես պատահեց Անիի երկու փոքր ստորգետնյա եկեղեցիների հետ[2]։

Այդ եկեղեցիները գտնվում են Իգիձորի վերին հոսանքում, Իգիձորյան դարպասներից Ծաղկոցաձոր իջնող ճանապարհից աջ։ Նրանք փորված են վերին կարծր ժայռաշերտում, իրար կողքի, միմյանցից 20 մ հեռավորությամբ հյուսիսից հարավ։ Ժայռն այստեղ ունի դեպի արևմուտք ուղղված ելուստ 3,95 մ բարձրությամբ, որի ուղղաձիգ հարթությունը՝ եկեղեցիներից յուրաքանչյուրի համար ծառայում է ճարտարապետորեն մշակված մուտք պարունակող արևմտյան ճակատ։

Հ. Ա. Օրբելին, հիշատակելով դրանք «Краткий путеводитель по городищу

[2] *Н. М. Токарский*, Из истории пещерного строительства в Ани. Պատմա-բանասիրական հանդես, № 1(82), 1969։

Ани»-ում (Անվո շարք, № 4, ս. Պետերբուրգ, 1910), հատկապես նշում է. «Եկեղեցիներում հետաքրքիր են ժայռի մեջ փորված մկրտության ավազանները՝ հաշված տարիքով մարդու համար»: Հինգ տարի անց նույնը իր գրառումներում կրկնում է Դ. Ղիփշիձեն:

Այդ երկու եկեղեցիները ճարտարապետությամբ և նույնիսկ չափերով այնքան նման են, որ կարելի է սահմանափակվել ծանոթանալով միայն մեկին՝ հյուսիսայինին, որպես տիպի առանձնահատկությունները առավել լրիվ բացահայտողի:



10. Իգիձոր. Հյուսիսային եկեղեցի-դամբարանը

Եկեղեցու հիմքը հանդիսանում է հատակագծում քառանկյունի թաղակապ ոչ մեծ (2,55×2,4 մ, բարձր.՝ 2,8 մ) մի տարածություն: Արևելքից նրան հարում է խորը աբսիդ, իսկ հյուսիսից և հարավից՝ ուղղանկյուն թաղակապ ընդարձակ խորշեր (նկ. 10): Խորշերի ներքնամասում, ժայռի մեջ, փորված են քարարկղեր՝ իրենց չափերով միանգամայն բավական տարեց մարդուն պառկած վիճակի մեջ տեղավորելու համար: Անտարակույս արկղները ծածկվում էին քարե սալերով, քանի որ նկարի վրա պարզորոշ երևում է երկայնական պատի վրայի ելուստը՝ նրանց ծայրերը պահելու համար: Առաջամասի պատերը, որոնց վրա հենվում էին սալաքարի մյուս ծայրերը, պահպանվել են միայն հիմքում: Այս քարարկղները սխալմամբ ընդունվել են մկրտելու ավազանի տեղ: Դրանց, ինչպես և այրերի իսկական նշանակությունը այլ էր: Այն անսխալ կերպով պարզվում է, երբ Իգիձորի այրերը համեմատում ենք Արագածի հարավ-արևմտյան փեշերին գտնվող Աղց գյուղի կիսաստորգետնյա դամբարանի հետ: Հայաստանի քրիստոնեական ճարտարապետության այդ հնագույն հուշարձանի գծագրերը Աշխարհբեկ Քալանթարի չափագրությամբ 1925 թ. կատարված են իմ կողմից, առաջին անգամ ցուցադրված են Լենինգրադում ունեցած իր գիտական զեկուցումների ժամանակ և հետագայում հրապարակված են մի շարք աշխատություններում (նկ. 11): Աղցի դամ-



11. Աղց. Դամբարան

բարանի ճարտարապետական հորինվածքը և Իգիձորի եկեղեցիները նույնն են: Մասնակի որոշ տարբերությունները առաջացել են այն տեղադրական պայմաններից, որոնցում գտնվում են այս հուշարձանները: Աղցի դամբարանը կառուցված է թեք սարալանջի վրա, և շինարարները ստիպված են եղել դրոմոսը դեպի մուտքը իջնող սանդուղքներով հանդերձ տեղավորել արևմուտքից: Աղցի դամբարանի հատկացումը թաղման նպատակի չի կարող կասկած առաջացնել, որովհետև Մովսես Խորենացին իր «Պատմության» մեջ հայտնում է, որ հենց այստեղ է կատարվել թաղումը հայ թագավորների անճուների՝ պարսիկների կողմից դրանց հայ նախարարներին հանձնելուց հետո: Այդ իրադարձությունները տեղի են ունեցել 4-րդ դարի երկրորդ կեսին, որպիսի ժամանակին պիտի վերագրվի նաև Աղցի դամբարանը: Այդպիսի թվագրում հաստատում է նաև դամբարանի մի տիպ՝ տարածված 4—5-րդ դդ. Սիրիայում, որտեղից կարող էր այն փոխառնվել քրիստոնեության հաստատումից հետո: Պետք է նշել, որ սիրիական դամբարանները չունեին աբսիդներ, դրա փոխարեն կար երրորդ խորշը սարկոֆագով: Ընդունելով ընդհանուր սխեման, հայերը մտցրել են խորան՝ դարձնելով սիրիական դամբարանը հայկական դամբարան-եկեղեցի: Այդ տիպին պիտի դասվեն Իգիձորի այրային եկեղեցիները: Կան բոլոր հիմքերը դրանք 4—5-րդ դդ. վերագրելու և համարելու Անիի (երբ այն դեռ ամրոց էր) հնագույն եկեղեցիները: Առաջին հայացքից կարող է թվալ, որ այսպիսի թվագրումը հերքվում է հարավային եկեղեցու ճակատին, մուտքի մոտ և 740=1291 թիվն ունեցող արձանագրությունը: Սակայն դատելով

նրանում «ախելքալաք» խոսքի առկայությունից, այստեղ խոսքը այլ եկեղեցու մասին է, որի կառուցման ավարտումը արձանագրության մեջ հիշատակված ամուսինները զանկացել են հավերժացնել ժայռի վրա, հավանաբար նրանց սեփականությունը կազմող հին կառուցվածքի մոտ: «Ախելքալաք» վրացերեն «ախալքալաք» աղավաղված խոսքը չի կարելի թարգմանել «Նոր քաղաք», որովհետև եկեղեցու տեղադրության նշումը հայերեն արձանագրության մեջ կլիներ հայերեն խոսքերով: Դա աշխարհագրական անուն է, հավանաբար հարևան Վրաստանի Ջավախքի նահանգի մի բնակավայրի, որը գոյություն ուներ արդեն 10-րդ դարում: Հիշեցնենք, որ Իգիձորի եկեղեցի-դամբարանները գտնվում էին քաղաքային պարիսպներից դուրս:

Վերջում անհրաժեշտ է մի քանի խոսք ասել ստորգետնյա կառուցողների աշխատանքի որակի մասին: Եկեղեցիների մեծ մասը քանդակված է ժայռերի մեջ մեծ վարպետությամբ: Խնամքով տաշված են անկյունները, սյունիկները, պատերի և թաղերի մակերևույթները, որոնք գործիքից հետո մեծամասամբ տառացիորեն հղկված են, հավանաբար բազալտե հղկիչով: Չափազանց նրբորեն են փորագրված աբսիդների ձևավոր թաղիկներով պսակված խորշիկները՝ եկեղեցական տարբեր սպասների համար:

ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ «ՀԱՒԱՔՈՒՄՆ ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ, ԶՈՐ ՅԱՌԱՋԱԳՈՅՆ ԱՐԱՐԵԱԼ Է ՍՐԲՈՅ ԼՈՒՍԱՒՈՐ ՀԱՐՑՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ*

## ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ «ՀԱՒԱՔՈՒՄՆ ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ....» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ինչպես արդեն ասացինք, Մովսես Երզնկացու Պատարագի մեկնությունը խմբագիր աշխատություն է:

Երզնկացին այն գրելիս օգտվել է շուրջ տասը աղբյուրներից:

Ձեռագրերի լուսանցքներում հաճախ հանդիպում ենք հետևյալ անուններին՝ Խոս. (=Խոսրով Անձևացի), Ներ. (=Ներսես Լամբրոնացի), Դիոնէսիոս (=Դիոնեսիոս Արիսպագացի), այլ, այլոյ, այլուստ (=Անանուն աշխատություններ):

Երբեմն հանդիպում ենք նաև հետևյալ անուններին՝ Սարգիս (=Սարգիս Շնորհալի), Եփրեմ (=Եփրեմ Խուրի), Սևեռ (=Սևերիոս Անտիոքացի), Ամոն (=Ամոն քհն. Աղեքսանդրացի)[18], Տիմոթէ, որոշ ձեռագրերում՝ Տիոթէ (=Տիմոթեոս Կուզ), Աստվածաբան (=Գրիգոր Աստվածաբան), Իգնատիոս (=Իգնատիոս Աստվածազգյաց հայրապետ), Նիւսացի (=Գրիգոր Նյուսացի), Կիւրէղ (=Կյուրեղ Աղեքսանդրացի՞, թե՞ Երուսաղեմացի)[19]:

Այս հիշատակությունները մեզ հնարավորություն տվեցին գտնելու սույն աշխատության հիմնական աղբյուրները:

Ստորև նշում ենք դրանք, խոսելով նաև յուրաքանչյուրի օգտագործման կերպի մասին:

Ա.—Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն Աղօթից Պատարագին (վերնագիրը ըստ Վենետիկյան հրատարակության):

Խոսրով Անձևացու Պատարագի մեկնությունը սկսվում է «Եւ ևս Հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք յԱստուծոյ» (Հավատամքից հետո) քարոզի մեկնությամբ:

Այս աշխատությունը Երզնկացին օգտագործել է ամբողջությամբ, և կարելի է ասել՝ բառ առ բառ:

Մեր խոսքը համոզիչ դարձնելու համար բերում ենք հետևյալ համեմատությունը.

**Խոսրով Անձևացի**
Պատարագամատույց:

«Տէր Աստուած զօրութեանց և արարիչ ամենայն լինելութեանց»: Բազում անգամ ասացաք յայլ աղօթսն, թէ տէրն անուն վասն տիրելոյն է. իսկ աստուածն վասն ստեղծանելոյն և յաստիս ածելոյ զեղեալքըս....[20]:

**Մովսես Երզնկացի**
Պատարագամատույց:

«Տէր Աստուած զօրութեանց և արարիչ ամենայն լինելութեանց»: Բազում անգամ ասացաք յայլ աղօթսն, թէ տէրն անուն վասն տիրելոյն է. իսկ աստուածն վասն ստեղծանելոյն և յաստիս ածելոյ զեղեալքըս....[21]:

---

* Տպագրված «Էջմիածին» ամսագրի 1973 թ. № Թ-ից:

[18] Տես Հ. Անասյան, «Հայկական մատենագիտություն», Ա, Երևան, 1959 թ., էջ 879—880:

[20] Տես Խոսրով Անձևացի, «Մեկնութիւն Պատարագի», Վենետիկ, 1869 թ., էջ 16:

[19] Առայժմ մեզ չի հաջողվել պարզել այս հարցը:

[21] Տես Մատենադարանի № 9282 ձեռագիրը, էջ 251ա:

Եվ այսպես Երզնկացին հաջորդաբար մեջ է բերում Անձնացու մեկնության ողջ տեքստը:
Վենետիկյան հրատարակության մեջ երբեմն տողատակերում տպագրված են ահանձին հատվածներ, որոնք չկան Անձնացու հին ձեռագրերում: Այդ հատվածները անծանոթ են նաև Երզնկացուն: Հետևաբար կարելի է վստահորեն ասել, որ դրանք հետագա դարերի հավելումներ են, և ոչ թե Անձնացու գրչի արդյունք:
Այստեղ պետք է նշել նաև հետևյալը.
Խոսրով Անձնացու Պատարագի մեկնության քննական տեքստը կազմելիս անհրաժեշտ է օգտագործել նաև Մովսես Երզնկացու Պատարագի մեկնության մեզ հասած ձեռագրերը:

Բ.—Տեառն Ներսեսի Լամբրոնացւոյ Խորհրդածութիւն Սրբազան Պատարագի (վերնագիրը՝ ըստ Երուսաղեմյան հրատարակության):
Եթե Երզնկացին Անձնացու երկը օգտագործել է ամբողջությամբ, ապա Լամբրոնացու երկից վերցրել է միայն առանձին հատվածներ:
Իսկ այդ հատվածները օգտագործել է երկու ձևով.

1.—Համառոտելով, օրինակ՝

**Ներսես Լամբրոնացի**

«Յիշեա տէր զԴաւիթ և....»: Դաւիթ անուամբ զորդին Դաւթի կոչեմք զՅիսուս, որ թագաւորեաց ի վերայ տան նորա ի յաւիտեան, և խնդրեաց ի նմանէ զհեթանոս ի ժառանգութիւն, յորժամ ծնաւ այսօր ըստ մարմնոյ, և հեզ երևեցաւ քան զամենայն որդիս մարդկան. մինչ զի ձայնել բարձրաձայն. «Ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ: Եկայք առ իս աշխատեալք, և առէք զլուծ իմ քաղցր՝ հանգերուք»: Առ նա ամրացաւ եկեղեցի, և այսպիսի քաղցր տեառն անուն կոչեցեալ է ի վերայ մեր, վասն այսորիկ համդերձեալ խօսել ընդ Աստուած Հայր և խնդրուածս ի նմանէ առնուլ, ոչ գիտ ինչ յիշէ առաջի նորա բարեգործութիւն, այլ զօծելոյ տեառն իւրոյ Յիսուսի՝ ասելով. յիշեա տէր Աստուած Հայր զՔրիստոս, որ ըստ մարմնոյ Դաւիթ, և տես զանչափ հեզութիւն նորա և զխոնարհութիւնն ի մարդանալն վասն մեր և վասն մերոյ փրկութեան: Եւ այս թէ որչափ բանիւ յայտնէ. «Որպէս երդուաւ տեառն և ուխտս եդ Աստուծոյ Յակովբայ»: Եւ ո՞ւր երդուաւ Քրիստոս, Աստուծոյ Հօր, թերևս ասիցէ ոք: Երդումն մարդկային ի մէջ համակամ աստուածութեանն ոչ է, բայց այս գործ տնօրէնութեան իւրու զուխտադրութիւն է Որդւոյ առ Հայրն, ըստ այնմ զոր ասէր, զգործն զոր ետ ինձ Հայր՝ պարտական եմ իւրն զուխտադիր առնել և կատարել[22]:

**Մովսես Երզնկացի**

«Յիշեա տէր զԴաւիթ և....»: Դաւիթ զՔրիստոս կոչէ՝

որ խնդրեաց զհեթանոսս ի ժառանգութիւն,

և ասէր. «Ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ»:

«Որպէս երդուաւ Տեառն և ուխտս եդ Աստուծոյ Յակովբայ»: Եւ ո՞ւր երդուաւ Քրիստոս, Աստուծոյ Հօր՝

ի մէջ համակամ աստուածութեանն երդումն մարդկային ոչ է, այլ զգործ տնօրէնութեանն կոչէ երդումն՝ զոր իւրն զուխտադիր ասէր՝ պարտ է կատարել[23]:

---

[22] Տես Ներսես Լամբրոնացի, «Մեկնութիւն Պատարագի», Վենետիկ, 1847, էջ 287—288:

[23] Տես Մատենադարանի № 6282 ձեռագիրը, էջ 223բ—224ա:

2.—ամբողջությամբ, օրինակ՝

**Ներսես Լամբրոնացի**

«Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծդ ես ողորմութեամբ, և առատ պարգեւօք բարերարութեան քո»: Զմեծութիւն ողորմութեան նորա առ մեզ ի պտղոյն սիրույն կարող եմք ճանաչել, ըստ որում ասէրն. այսպիսի սէր ոչ ոք ունիցի, որպէս և ես ցուցանեմ, զի զանձն իմ դնեմ ի վերայ բարեկամաց իմոց, ուստի և զայսպիսի առատութիւն բարերարութեան[24]:

**Մովսես Երզնկացի**

«Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծդ ես ողորմութեամբ, և առատ պարգևօք բարերարութեան քո»: Զմեծութիւն ողորմութեան նորա առ մեզ ի պտղոյ սիրոյն կարող եմք ճանաչել, ըստ որում ասէրն. այսպիսի սէր ոչ երբէք ոք ունիցի, զի զանձն իմ դնեմ ի վերայ բարեկամացդ իմոց[25]:

Նշենք նաև այն, որ Մովսես Երզնկացու Պատարագի մեկնության Հավատամքի մեկնությունը նույն՝ Ներսես Լամբրոնացու մեկնությունն է: Տես ձեռ. № 9292, էջ 227բ—241բ: Համտ. Ներսես Լամբրոնացու Պատարագի մեկնության Երուսաղեմյան հրատարակության էջ 52—65 հետ: Մեկնության Վենետիկյան հրատարակությունը չունի Հավատամքի մեկնությունը:

Գ.—Դիոնէսիոս Արիսպագացու Յաղագս Քահանայապետութեանց: Սույն գործը բաղկացած է երկու մասից

ա.—Յաղագս Երկնային քահանայապետութեան:

բ.—Յաղագս Եկեղեցական քահանայապետութեան:

Դիոնեսիոս Արիսպագացու գործերը հայերենի են թարգմանվել երկու անգամ, նախ Ստեփանոս Սյունեցու ձեռքով (Ը դար) և ապա Ստեփանոս Լեհացու ձեռքով (ԺԷ դար):

Բնականաբար Մովսես Երզնկացին օգտագործել է Ստեփանոս Սյունեցու թարգմանությունը:

Նա վերոհիշյալ երկու աշխատություններից վերցրել է հատվածներ և ամեն դեպքում տեղադրել իր աշխատության մեջ՝ առանց փոփոխության ենթարկելու:

Ստորև բերում ենք երկու համեմատություն, առաջինը «Յաղագս Երկնային», երկրորդը՝ «Յաղագս Եկեղեցական քահանայապետութեանց» աշխատություններից:

ա.—«Յաղագս Երկնային քահանայապետութեան»:

**Դիոնեսիոս Արիսպագացի**

Քանզի զմշտաշարժութիւնսն նոցա յաստուածայինսն և անդադար և ջեռուցիչ և սուրբ և գերագոյն եռանդն, զգուշացող և աներկյ և անխոտոր մշտաշարժութեան և նուաստագունիցն համբարձատար և ընբռնողապէս նմանական....[26]:

**Մովսես Երզնկացի**

Քանզի զմշտաշարժութիւնս նոցա յաստուածայինսն և անդադար և ջեռուցիչ և սուրբ և գերագոյն եռանդն, զգուշացող և աներկյ և անխոտոր մշտաշարժութեամբն և նուաստագունիցն համբարձչաբար և ըմբռնողապէս նմանական....[27]:

բ.—«Յաղագս Եկեղեցական քահանայապետութեան»:

**Դիոնեսիոս Արիսպագացի**

Իսկ աստուածայինն հաղորդութիւն հասարակացն և խաղարար միոյ, և նորին, և հացին և բաժակին հաղորդութիւն համակրօնութիւն աստուածային՝ որպէս համանից օրինադրէ նոցա զաստուածայնոյն ընթրեաց[28]:

**Մովսես Երզնկացի**

Իսկ աստուածայինն հաղորդութիւն հասարակացն և խաղարար միոյ և նորին և հացին և բաժակին հաղորդութիւն համակրօնութիւն աստուածային՝ որպէս համաընից օրինադրէ նոցա զաստուածայնոցն ընթրեաց[29]:

---

[24] Տես Ներսես Լամբրոնացի, «Մեկնութիւն Պատարագի», Վենետիկ, 1847, էջ 926:

[25] Տես ձեռ. № 9292, էջ 243բ—244ա:

[26] Տես Մատենադարանի № 5058 ձեռագիրը, էջ 80ա—80բ:

[27] Տես Մատենադարանի № 9292 ձեռագիրը, էջ 263բ—264ա:

[28] Տես Մատենադարանի № 5059 ձեռագիրը, էջ 85ա:

[29] Տես Մատենադարանի № 9292 ձեռագիրը, էջ 271բ:

Դ.—Հաւաքումն Մեկնութեան Եւթանեցունց թղթոցն Կաթողիկէից:

Երզնկացու Մեկնության չորրորդ աղբյուրը «Հաւաքումն Մեկնութեան Եւթանեցունց թղթոցն Կաթողիկէից» վերնագիրը կրող մի աշխատություն է: Մեր այս ուսումնասիրության համար օգտագործել ենք Մատենադարանի № 5787 ձեռագիրը:

Սույն ձեռագրում Կաթողիկե թղթերի մեկնությունից առաջ կա հետևյալ գրությունը.

«Մեկնութիւն կաթուղիկէից, որ Է թուղթ անուանի: Եւ արդ մեկնեցաւ Է թուխթս կաթուղիկէից ի ձեռն ԻԱ սուրբ յարանց կատարելոց: Եւ այս են անուանքն մեկնողացն, յատուկ-յատուկ: Նախ և յառաջին Դիուդիմոս: բ.—Յոհան Ոսկիբերանն:—գ. Կիւրեղ Աղեքսանդրացին: դ.—Պիմէ սուրբ հայրն: ե.—Յուսեփոս Կեսարացի: զ.—Սևերիոս արքեպիսկոպոսն Անտիոքայ: է.—Յնկոդիմոս: ը.—Հիսիքոս քահանայն: թ.—Թէոդորոս կրօնաւորն: ժ.—Բարսեղ Կեսարացի: ժա.—Մաքսիմոս: ժբ.—Եվսեբի արքեպիսկոպոսն Կեսարու: ժգ.—Թէոդորա Երակլացին: ժդ.—Թէոդիտոն: ժե.—Եփրեմի խորին Ասորին:—ժզ.—Տիմոթէոս: ժէ.—Ամոն քահանայն: ժը.—սուրբն յԱթանաս արքեպիսկոպոսն յԱղեքսանդրացին: ժթ.—Գրիգոր Աստուածաբանն: ի.—Եսայեա, որդին Սիրաքայ: իա.—Դիոնէսիոս յԱղեքսանդրացին: Այս ԻԱ մեկնողքն ոչ թէ իւրաքանչիւր յատուկ-յատուկ մեկնիչք արարին, այլ զամենեցուն մեկնած բանքն ի մի հաւաքեալ մի մեկնիչ արարին, լի և առատ բանիւք, քաղցր և յախորժ ի քիմս ամենայն լսողացն և յարդ ի մեկնիչս գեղեցիկ ուսուցանէ, զի իւրաքանչիւ[ր] ասացողի անունն ի գլուխ բանին իւրոյ գրեալ կայ: Եւ դու յուշիմ մտօք կարդայ և զմեսրոպս յիշեա ով սպասաւորք բանի: ՌԿՋ գրեցի զայս և ըստ իմ կարեացս դասուսի»[30]:

Այս հիշատակարանը շփոթության մեջ է գցել Մատենադարանի «Ցուցակ Ձեռագրաց»-ի կազմողներին, որոնք վերոհիշյալ գործի գրության թվականը համարել են 1617-ը, իսկ գրքի հավաքողին՝ (քանի որ այն խմբագիր աշխատություն է), վերոհիշյալ Մովսեսին: Տես «Ցուցակ Ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի»—Բ, էջ 184:

Նույն գործը պարունակող մի քանի այլ ձեռագրեր է հասել մեզ ավելի վաղ շրջանից, ինչպես օրինակ Մատենադարանի № 4150 ձեռագիրը (էջ 110ա—315բ): Այս ձեռագիրը գրվել է ԺԳ դարում, 1617 թ. շուրջ 350—400 տարի առաջ: Պետք է նշել նաև այն, որ մյուս ձեռագրերում չկա վերոտյալ հիշատակարանը: Սա նշանակում է, որ այդ Մովսեսը հեղինակն է միայն այդ հիշատակարանի և ոչ թե ողջ գործի:

[30] Տես Մատենադարանի № 5787 ձեռագիրը, էջ 1բ:

Իսկ ե՞րբ և ո՞վ է գրել այն:

Որ գործը գրվել է Մովսես Երզնկացուց առաջ, դա կասկած չի հարուցում:

Նախ ասենք, որ Երզնկացին օգտագործել է Կաթողիկե թղթերի մեկնությունից Ա Պետրոս Գ 19—20ա համարների մեկնությունը (Ձեռ. № 5787, էջ 69բ—74բ) հետևյալ տողերի մեկնությունը տալու համար. «Եւ իջեալ ի ստորին վայրս մահու՝ իւրով մարմնովն, զոր ընկալաւ ի մերմէս յազգիսկցութենէ: Եւ զնիգս դժոխոցն աղարտեալ հզօրապէս, ծանոյց զինքն հաւաստեաւ Աստուած կենդանեաց և մեռելոց» (Ձեռ. № 9292, էջ 274բ—275բ):

Երզնկացու մեկնության մեջ կան որոշակի կրճատումներ, որը և ենթադրում է, որ Երզնկացին է օգտվել Կաթողիկե թղթերի մեկնությունից և ոչ թե Կաթողիկե թղթերի մեկնության հեղինակը՝ Երզնկացուց: Որովհետև Կաթողիկե թղթերի մեկնության խմբագրողը եթե օգտվեր Երզնկացուց, ինչպե՞ս կարող էր իրենից ավելացնել Սևերի, Ամոնի, Կյուրեղի և մյուս հայրերի խոսքերը:

Եվ բացի այդ, Կաթողիկե թղթերի մեկնությունը ամբողջությամբ 21 հայրերի գրվածքների համադրություն է, իսկ Երզնկացու մեկնության մեջ միայն այս հատվածն է այսպես:

Երզնկացու մեկնության մեջ, նույն համարի տակ, կա նաև մի հատված Սարգիս Շնորհալու Կաթողիկե թղթերի մեկնությունից: Այս հատվածը և ընդհանրապես ոչ մի տող կամ հիշատակություն չկա խնդրո առարկա աշխատության մեջ Սարգիս Շնորհալու գործից:

Սա արդեն վկայում է, որ «Հաւաքումն մեկնութեան Եւթանեցունց թղթոցն Կաթողիկէից» աշխատությունը ավելի վաղ է գրվել Սարգիս Շնորհալու մեկնությունից, որովհետև Սարգիս Շնորհալու մեկնությունը շատ արժեքավոր և ստվարածավալ գործ է, և ոչնչով չի զիջում վերոհիշյալ 21 հայրերի գործերից և ոչ մեկին, և նույնիսկ շատերից էլ ավելի արժեքավոր է:

Եվ բնական է, որ այսպիսի կարևոր աշխատություն աչքաթող չէր լինի Կաթողիկե թղթերի մեկնության խմբագրողի կողմից:

Սա նույնպես հաստատում է այն, որ Երզնկացին է օգտվել Կաթողիկե թղթերի մեկնությունից:

Արդ, ե՞րբ և ո՞ւմ ձեռքով է խմբագրվել այս գործը:

Երուսաղեմի մի շարք ձեռագրերի նկարագրության մեջ, ինչպես օրինակ № 1072, № 1301 և այլն, իբրև թարգ-

մանիչ հիշվում է Գրիգոր Դպիրը, 1162 թվականին: Տես Նորայր եպիսկոպոս Պողոսյան, «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց»—Ի, էջ 528 և այլն: Մինչդեռ Զգոն եպս. Տեր-Հակոբյանը «Ներսես Շնորհալու մեկնություն կաթողիկե թուղթերու» հոդվածում այս գործի հեղինակ է համարում ս. Ներսես Շնորհալուն (Հիշյալ հոդվածը տպագրվելու է «Էջմիածին» ամսագրի՝ ս. Ներսես Շնորհալու հոբելյանին նվիրված բացառիկ համարում՝ 1973 թ. № ԺԲ):

Մեր այս ասածները հաստատելու համար շատ նպատակահարմար կլիներ, եթե տայինք Երզնկացու և Կաթողիկե թղթերի մեկնության վերոհիշյալ հատվածների համեմատությունը: Սակայն այդ այժմ հնարավոր չէ տեղի սղության պատճառով: Այստեղ միայն նշենք հետևյալը.

Երզնկացու մոտ, վերոհիշյալ հատվածում, կա մի փոքրիկ պարբերություն «աղուստ» վերադրումով: Այս պարբերությունը կա նաև Կաթողիկե թղթերի մեկնության մեջ, որը ամենայն հավանականությամբ այդ գործի խմբագրի գրչի արդյունքն է: Այսպիսի հատվածներ շատ կան այդ աշխատության մեջ: Այս կարծիքին է նաև Հ. Հակովբոս Վ. Տաշյանը: (Տե՛ս «Ցուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա»: Վիեննա, 1895 թ., էջ 234):

Ե.—Սարգիս Շնորհալւոյ Մեկնութիւն Եօթանց թղթոց կաթուղիկեայց:

Մովսես Երզնկացու Պատարագի մեկնության հինգերորդ աղբյուրը Սարգիս Շնորհալու Կաթողիկե թղթերի մեկնությունն է: Այս գործը տպագրվել է Կոստանդնուպոլսում, 1826 թվականին: Այն ունի հետևյալ վերնագիրը. «Մեկնութիւն եօթանց թղթոց Կաթուղիկեայց արարեալ երանելւոյն Սարգսի՝ Շնորհալից վարդապետի՝ Հայոց իմաստասիրի և քաջ հռետորի»:

Այս գործից Երզնկացին վերցրել է միայն մեկ հատված, որի մասին արդեն ակնարկվեց վերևում:

Ստորև տալիս ենք այդ հատվածի երկու խմբագրությունների համեմատությունը.

Սարգիս Շնորհալի

«Որով և ոգւոցն, որ էին ի բանտին, երթեալ քարոզեաց»: Անսահման և անոլորտ է բնութիւն աստուածութեանն և չիք ինչ այն տեղի որ թափուր է ի նմանէն, զի յամենայնի լի է և պատարուն: Սակայն և ի զգենուլ զմարմինն ամենայնիւ միաւորելով ընդ մարդոյն անձնաւորութեամբ բնութեամբ արար իւր ճանապարհ Միածինն Աստուծոյ ի ծոցոյ Հօր ի ծոց կուսին, և աթոռն հայրենի ոչ թափուր մնաց ի նմանէ, վասն զի էր լիով ոլորտացեալ յարգանդի կուսին՝ և լիով առ Հայր, և զամենայն կիրս խոնարհութեան մերոյ կրեաց՝ ըստ մեզ զիջանելով, և յիւրմէ աստուածութենէն և յաստուածավայելուչ կրիցն ոչ երբէք անկանէր: Նմանապէս և ի չարչարանսն և՛ ի մահն ոչ հեռանայր ի մարմնոյն ի չարչարանս և ի մահն և ոչ բաժանէր ի Հոգւոյն Աստուծոյ, այլ զմարդկեղէն հոգին աւանդէր ի ձեռս Հօր անմեկնելին ի Հօրէ և մարմնովն դնիր ունայնացուցանել զգերեզմանն և Հոգւովն իջանել ի դժոխս ազատել զհոգիսն....[31]:

Մովսես Երզնկացի

«Եւ իջեալ ի ստորին վայրս...»:

Անսահման և անոլորտ է բնութիւն աստուածութեանն, և չիք այն տեղի որ թափուր է ի նմանէ և յամենայնի լի է և պատարուն: Սակայն ի զգենուլ զմարմինն ամենայնիւ միանալով ընդ նմա, աթոռն հայրենի ոչ թափուր մնաց ի նմանէ:

Վասնզի էր լիով յարգանդի և ի ծոց Հօր, և զամենայն կիրս խոնարհութեան մերոյ կրէր՝ և յիւրմէն ոչ անգանէր:

Նմանապէս և չարչարանս և ի մահն ոչ հեռանայր ի մարմնոյն և ոչ բաժանէր ի հոգւոյն: Զմարդկեղէն հոգին աւանդէր նախ ի ձեռս Հօր, և զմարմնովն դնէր ի գերեզմանն զի սքանչելագործեսցէ ինչ մեծագոյնս: Մարմնովն ունայնացուցանէր զգերեզմանս և հոգւովն իջանելով ի բանտն ազ....[32]:

Զ.—Գրիգոր Նիւսացւոյ Մեկնութիւն Հայր Մերի:

Շատ արժեքավոր և հազվագյուտ մի գործ է:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի միայն երկու ձեռագրերում կա այս գործը:

ա.—№ 1500. գրվել է ԺԳ դարում, Միխիթար Այրիվանեցու ձեռքով:

բ.—№ 749. գրվել է ԺԴ դարում, Եսայի

[31] Տես անդ, էջ 321:

[32] Տես ձեռ. № 8292, էջ 274ա:

Նշեցու աշակերտ Վարդան Կիլիկեցու ձեռքով:

Այս գործը բավական ծավալուն է: № 1500 ձեռագրում գրավում է 712ա—723բ էջերը, իսկ № 749 ձեռագրում՝ 222ա—314բ, շուրջ 60 մեքենագիր էջ:

Այս գործից Երզնկացու մեկնության մեջ կան միայն հետևյալ երկու հատվածները.

ա.—«Հայր մեր որ յերկինս»:

Նախ քան զամենայն զայն ուսուցանէ՝ զաղաւթիցն հոգք ի մտի ունել. որով հոգին զաղաւթիցն հոգք ի մտի ունել. որով հոգին

բ.—«Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսաւր»

Ամենայն պահպանութիւն պատուիրանաց Աստուծոյ կերակուր է Ոգւոյ, որպէս հաց մարմնոյ, և որ արտաքոյ աւրինացն Աստուծոյ ընթանան՝ ի քարանց կերակրին և ոչ իմանան[34]:

է.—Երզնկացին օգտագործել է նաև մի շարք պատարագի և «Հայր Մեր»-ի սնանուն մեկնություններ, որոնք հայտնաբերելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել բոլոր Պատարագի և «Հայր Մեր»-ի մեկնությունները:

---

[33] Տես № 6202 ձեռագիրը, էջ 201բ:

[34] Տես նույնը, էջ 203ա:

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ* (1944—1973)

**2549. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ** Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Վրթանեսյանի մահվան առթիվ փոխանակված հեռագրերը: 1956, հուլիս., էջ 62:

**2550. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ** Սրբոց Հակոբյանց միաբանական ընդհանուր ժողովի դիվանի հեռագիրը Վեհափառ Հայրապետին: Էջմիածին: Նորին Վեհափառություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին: [Տ. Տիրան արքեպիսկոպոսին՝ տեղապահ և Սարգիս եպիսկոպոսին՝ պատրիարքության գործերի վարիչ ընտրվելու մասին]: 1956, հուլիս., էջ 22:

**2551. «ԷՋՄԻԱԾԻՆ»** ամսագիրը և իր ընթերցողները: (Նամակների տեսություն): [Նամակ Աստրախանից]: 1956, հուլիս, էջ 62—63:

Ստորագր.՝ «Էջմիածին» ամսագրի ընթերցող Մ. Ն.:

**2552. ԷՋՄԻԱԾՆԻ** Մայր Տաճարը ռուս գրողների և ճանապարհորդների օրագրերում: [Ալեքսանդր Գրիբոյեդով, Դենիս Դավիդով, Ալեքսանդր Մուրավյով, կնյազ Ա. Սալտիկով, ռուս պաշտոնակատար Ն. Նեփիդով]: 1956, հունվար, էջ 58—59:

Ստորագր.՝ Կ. Գ. [Կամսար Գրիգորյան]:

**2553. ԷՍԿԻՃՅԱՆ Մ[ԵՍՐՈՊ]**:—Հայրենի երկիր: [Բանաստեղծություն]: 1956, մարտ, էջ 58:

**2554. ԹԱՋԻՐՅԱՆ ՄԱՇՏՈՑ ԱԲԵՂԱ**:—Նահատակ կույսերը: [Քարոզ]: (Խոսված Ս. Ծաղկաբերի եկեղեցում, 1956 թ. մայիսի 31-ին): 1956, հունիս, էջ 15—16:

**2555. ԹԱՎԱՐԲԵԿՅԱՆ ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ**:—Նամակ խմբագրության: [Հրաչյա Աճառյանի «Էջմիածին»-ում տպագրված Մեսրոպ Մաշտոցի կենսագրության ուսումնասիրության կայենականք տեղանվան մասին]: 1956, ապրիլ-մայիս, էջ 115:

**2556. ԹՈՒՐՇՅԱՆ Հ[ԱՐՈՒԹՅՈՒՆ]**:—Հաբեշ կրոնական գործիչ Ս. Եվստաթեոսը և հայ եկեղեցին: 1956, ապրիլ-մայիս, էջ 97—103, հունիս, էջ 53—57, օգոստ.-սեպտ., էջ 86—92, հոկտ., էջ 77—81:

Բովանդ.՝ Հատվածներ հաբեշական կրոնական գործիչ Եվստաթեոսի վարքից և հրաշքներից:—Հայ-Հաբեշական եկեղեցական առնչությունները:

**2557. Լ[ԵՎՈՆ] Մ. Խաչիկյան**: «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Մասն Ա (1401—1450): [Գրախոսություն]: 1956, հունվար, էջ 62—63:

Ստորագր.՝ Ք. Չ.:

**2558. ԼԵՎՈՆՅԱՆ Գ[ԱՐԵԳԻՆ]**:—Պարարվեստը հին Հայաստանում: 1956, հունիս, էջ 37—41:

Բովանդ.՝ Ա. Հնագույն շրջան:

**2559. ԼՈՒՅՍ** տեսավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1957 թվականի գրպանի օրացույցը: [Հայտարարություն]: 1956, օգոստ.-սեպտ., էջ [109] ներդիր:

**2560. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ** պայքարի ճակատում: 1956, հունվար, էջ 43—45.

Բովանդ.՝ Դիմում: Խաղաղության համաշխարհային խորհրդի դիմումը: [Չորս տերությունների] «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակների կոմիտեում:—«Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» 1955 թվականի Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու մասին: ...Կոմիտեի 1955 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը:

**2561. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**:—(Պատրիարք Հայոց Թյուրքիո):—Մեկ մարմին և մեկ գլուխ: [Հայաստանյայց Առաքելական եկեղեցու միասնության մասին, գլխավորությամբ Էջմիածնի և Ամենայն Հայոց կաթողիկոսի: Հոդվածը գրված է Անթիլիասի կաթողիկոսական ընտրությունների առթիվ]: 1956, հուլիս, էջ 19—21:

**2562. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ** (Պատրիարք Հայոց Թյուրքիո):—Ոսկեդեն մեծ ոստը և Սուրբ Էջմիածին: 1956, հոկտ., էջ 42—48:

**2563. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ** (Պատրիարք Հայոց Թյուրքիո):—Պատասխան Տ. Զարեհ եպիսկոպոսին: [Անթիլիասի կաթողիկոսական ընտրությունների հարցի շուրջը]: 1956, օգոստ.-սեպտ., էջ 25—28:

**2564. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ** կողմից: [«Էջմիածին» ամսագրի տպաքանակը ավելանալու առթիվ խմբագրությունը ընդառաջում է արտասահմանյան հասարակայնությանը՝ ամսագրին բաժանորդագրվելու համար]: 1956, հունվար, էջ [65] ներդիր:

**2565. ԾԱՂԿԱՔԱՂ** շարականոցից: Սուրբ Աստվածածնին նվիրված շարականներ: 1956, օգոստ.-սեպտ., էջ 22:

**2566. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Գ[ՐԻԳՈՐ]**:—Սուրբ Էջմիածին և Ամենայն Հայոց հայրապետությունը: (Էջմիածնի տպարանի հանգանակության առթիվ): 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 109—112:

**2567. ԿԻՐԻԼ, ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ**:—Նորին Սրբություն Վազգեն Ա-ին: [Շնորհավորական հեռագիր Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 9:

**2568. ԿՈՏԱԼԱՔՅԱՆ ԷՏ[ՄՈՆ]**:—Արարատին և Ս. Էջմիածնին շունչը: [Վազգեն Ա-ի Բեյրութ կատարած ուղևորության առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 104—105:

**2569. ԿՈՐՅՈՒՆ**:—Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելւոյ սրբոյն Մեսրովպայ վարդապետի մերոյ թարգմանչի, ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին: [Հատված Կորյունի գրքից: Մաշտոցի դիմանկարով]: 1956, հունիս, էջ 10—11:

**2570. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ** ուրախություն Ամենայն Հայոց նորընտիր հայրապետ նորին Սուրբ օծություն

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1973 թվականի №№ Դ—Ժ-ից:

Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի ընտրության առթիվ: 1958, հունվար. էջ 25—28.

Նույն տեղում՝ շնորհավորական հեռագրերի ցանկ:

**2571. ՀԱՄԱՌՈՏ** լուրեր: (Մայր Հայրենիքում): 1958, հունվար, էջ 60—61.

Բովանդ.՝ Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը: [7-րդ դարի, Լմբաթավանքի եկեղեցու վերականգնման աշխատանքները, ինչպես նաև՝ Հաղպատի վանքի, Ծաղկաձորի, 10—13-րդ դարեր, Սեյիմ Քարվանսարայի, 13—14-րդ դարեր, (գտնվում է Իջևանի շրջանում), Մշավանքի (Նոյեմբերյանի շրջան), Մարմարաշենի (Ախուրյանի շրջան), 10—13-րդ դարեր, վերականգնման աշխատանքները]:—Հնագիտական նոր նյութերի հայտնաբերումը Գառնիում: [Պատմա-հնագիտական տեղեկություններ 3-րդ, 2-րդ հազարամյակների տնտեսության, կենցաղի, արհեստների վերաբերյալ]:—Վախթանգ Անանյանի ծննդյան 50-ամյակը:—Ուրուգվահայ տուրիստները Երևանում:

**2572. ՀԱՄԱՌՈՏ** լուրեր: (Մայր Հայրենիքում): 1958, փետրվար, էջ 58—59.

Բովանդ. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության 1958 թվի պետական բյուջեն: Հիգիենայի և էպիդեմիոլոգիայի ինստիտուտի 25-ամյակին նվիրված սեսիա: Երևանի կինոստուդիայում, [«Ոսկե ցլիկ» և «Սիրտը երգում է» կինոնկարների մասին]:—Խմբերգային ինքնագործունեության զարգացման հարցերին նվիրված խորհրդակցություն: Ստեփանավանի երաժշտական դպրոցի տասնամյակը: Հիշատակի երեկո և ցուցահանդես նվիրված նկարիչ Եղիշե Թադևոսյանին: [Մահվան 20-ամյակի առթիվ]:—Արտաշատի բարեկարգումը: Նոր հիվանդանոց գյուղում: Հանդիսավոր երեկո նվիրված Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50-ամյակին: Նոր ակումբներ: Հոկտեմբերյանի նորակառույցները: Սննդարդյունաբերության նոր ձեռնարկություններ: [Երևանում]: Արժեքավոր հետազոտություններ կուրորտոլոգիայի ասպարեզում: [Երևանի կուրորտոլոգիայի և ֆիզիկական մեթոդներով բուժման մասին]:—Ստորերկրյա ջերմության օգտագործման համար:

**2573. ՀԱՄԱՌՈՏ** լուրեր: (Մայր Հայրենիքում): 1958, մարտ. էջ 57—59.

Բովանդ.՝ Շքանշանների և պատվոգրերի հանձնում Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի Նախագահությունում: Երևանի Պետական համալսարանի ուսումնական նոր շենքը: [Ճարտարապետ՝ Էդմոնդ Տիգրանյան: Կենսաբանական, երկրաբանական և քիմիական ֆակուլտետների ուսումնական նոր շենքի շինարարության ավարտի մասին]:—Գրիգոր Եղիազարյանի «Անահիտ» բալետը Երևանի Սպենդիարյանի անվան թատրոնում: [Բեմադրման մասին]:—Կիրովականի թատրոնի 25-ամյակը: Հայկական կուլտուրայի ստուգատեսը: Պատվո երեկո նվիրված դերասան Օրի Բունիաթյանի ծննդյան 60-ամյակին: Բանաստեղծ Եղիշե Չարենցին նվիրված հուշ-երեկո Երևանի համալսարանում: Դերասան Ամո Խարազյանի ծննդյան 75-ամյա հոբելյանը: Գուսան Հավասու 60-ամյակին նվիրված երեկո: Նոր ցուցանմուշներ Պերճ Պռոշյանի անվան տուն-թանգարանում: [Գևորգ Բաշինջաղյանի «Արարատ լեռը» կտավը, որը նկարիչը նվիրել է գրողի քառասնամյա հոբելյանի օրերին: Նաև՝ Ղազարոս Աղայանի նվերներից]:

**2574. ՀԱՄԱՌՈՏ** լուրեր: (Մայր Հայրենիքում): 1958, ապրիլ-մայիս, էջ 108—111.

Բովանդ.՝ Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի տարեկան ժողովը: Բանվոր երիտասարդության դպրոցների տնօրենների ռեսպուբլիկական խորհրդակցություն: Մանկավարժական բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեսպուբլիկական խորհրդակցություն: Մանկավարժական գիտության խնդիրներին նվիրված խորհրդակցություն: Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը 1958 թվականին: Դպրոցական դասագրքեր: Մամուլի բաժանորդագրության աճը: [Վիճակագրական տվյալներ ընդհանուր տպաքանակով]:—Մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանի ծննդյան 80-ամյակը: [Հոբելյանական երեկո Երևանի Պետական համալսարանում]:—Նկարիչ Վարդգես Սուրենյանի մահվան 35-ամյակին նվիրված երեկո: [ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության ու տեսության բաժնում]:—Անգլիական գրողների ստեղծագործությունները հայերեն:—Բանաստեղծ Եղիշե Չարենցի անվան դպրոց Երևանում: Սովետական Հայաստանի պատանիների մասնակցությունը կերպարվեստի համամիութենական 10-րդ ցուցահանդեսին:—Կարմիր բլուրի հնագիտական պեղումները:—Արեգակնային էլեկտրակայան Արարատյան հարթավայրում: [ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի էներգետիկայի գիտա-հետազոտական ինստիտուտի և ՀՍՍՀ Գիտ. ակադեմիայի արեգակային էներգիայի օգտագործման հանձնաժողովի համատեղ ջանքերով Էջմիածնի շրջանում արեգակի ջերմությամբ աշխատող, ՍՍՌՄ-ում առաջին, էլեկտրակայանի կառուցման մասին]:—Նոր Բայազետի հանքային ջրերը: Օգնություն անհատական բնակարաններ կառուցողներին: Շինարարության հզոր թափը ռեսպուբլիկայում:—Մանկական նոր կինոթատրոն Երևանում:

**2575. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ** սովետական կարգերի հաստատման 38-րդ տարեդարձի կապակցությամբ փոխանակված հեռագրերը: 1958, նոյեմբ-դեկտ., էջ 15—16:

**2576. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ** սովետական կարգերի հաստատման 38-րդ տարեդարձին նվիրված հանդիսություն Հոգևոր ճեմարանում: 1958, նոյեմբ-դեկտ., էջ 20—24:

**2577. ՀԱՅԿԱԿԱՆ** արվեստի և գրականության տասնօրյակը Մոսկվայում: [1958-ի հունիսի 1-ից): 1958, հունիս, էջ 58—61:

Երեք լուսանկար:

**2578. ՀԱՅՄԱՐԻ ԱՐԱՐՈՂԱՊԵՏ**:—Հոռմ: Վազգեն Ա ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց: [Հեռագիր Բեյրութից: Լիբանանում տեղի ունեցած երկրաշարժի առթիվ]: 1958, ապրիլ-մայիս, էջ 17:

**2579. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ** բարձր գնահատություն: [Հունիսի 14-ին հայրապետական կոնդակով և Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշանով պարգևատրվել են մի շարք անձինք: 1958, հուլիս, էջ 82—83:

**2580. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ** բարձր գնահատություն: [Սեպտեմբերի 10-ի, 15-ի, 20-ի, հոկտեմբերի 7-ի թվակիր կոնդակներով Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշանով և օրհնության կոնդակով պարգևատրվել են մի շարք ազգայիններ]: 1958. հոկտ., էջ 67:

**2581. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ** հանդիսավոր պատարագ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում: [Մայիսի 22-ին, կիրակի օրը, Հոգեգալստյան տոնի առթիվ]: 1958, ապրիլ-մայիս, էջ 44—45:

**2582. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ** հանդիսավոր սուրբ պատարագ Մայր Տաճարում: [Օգոստոսի 12-ին Ս. Աստվածածնի վերափոխման տոնի օրը]: 1958, օգոստ.-սեպտ., էջ 15:

**2583. ՀԱՆԳԻՍՏ** արժանապատիվ Տ. Գևորգ քահանա Գևորգյանի: (1888—1958): [Մահախոսական-կենսագրական: 1958, նոյեմբ.-դեկտ., էջ 121:

Դիմանկարով:

**2584. ՀԱՆԳԻՍՏ** արժանապատիվ Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանի (1872—1958): [Մահախոսական-կենսագրական]: 1958, նոյեմբ.-դեկտ., էջ 120:

Դիմանկարով:

**2585. ՀԱՆԳԻՍՏ** Տ. Պարգև եպիսկոպոս Վրթա-

նեսյանի: [Մահախոսական-կենսագրական: Դիմանկարով]: 1956, հոկտ., էջ 63:

2586. ՀԱՆԳԻՍՏ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի: [Մահախոսական-կենսագրական]: 1956, հունիս, էջ 24—25:

2587. ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ Հոգևոր ճեմարանում վեհափառ հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ: [Հոկտեմբերի 7-ին]: 1956, հոկտ. էջ 36—41:

2588. ՀԱՆԴԻՍԱՎՈՐ սուրբ պատարագ և քարոզ Նորին սուրբ օծության վեհափառ հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ: [Հոկտեմբերի 7-ին, Մայր Տաճարում: Պատարագ և քարոզ՝ Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի]: 1956, հոկտ., էջ 23—25:

Լուսանկար՝ վեհափառ հայրապետը գահի վրա:

2589. ՀԱՐԱՎԱՅԻՆ Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը Շիրակի թեմում: 1956, հոկտ., էջ 50—51:

2590. ՀՈԳԵՇՆՈՐՀ Մեսրոպ աբեղա Անթաբյան: [Փայլուն սարկավագ: Կենսագրություն: Դիմանկարով: Աբեղայական ձեռնադրության առթիվ]: 1956, էջ 24:

2591. ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. Հարություն աբեղա Մատենջյան: [Կենսագրական տեղեկություններ աբեղայական ձեռնադրության առթիվ: Դիմանկարով]: 1956, օգոստ.-սեպտ., էջ 36:

2592. ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. Հուսիկ աբեղա Սանթուրյան: [Կենսագրական տեղեկություններ աբեղայական ձեռնադրության առթիվ: Նշանակվում է Մայր Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանի վարիչ: Դիմանկարով]: 1956, օգոստ.-սեպտ., էջ 37:

2593. ՀՈԳԵՎՈՐ ճեմարանում: 1956, հունիս, էջ 26:

Բովանդ.՝ Գրական վերջին հավաքույթը: [Տարեվերջյան: Բանախոս՝ Պարգև աբեղա Գևորգյան: Տպավորություններ արտասահմանյան ուղևորություններից]:—Տարեվերջի քննությունները: [1955—56 ուս. տարվա]:—Ուսանողական արշավ: Տարեշրջանի փակում:

2594. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ Սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի 39-րդ տարեդարձի կապակցությամբ փոխանակված հեռագրերը: 1956, նոյեմբ-դեկտ., էջ 13—14:

2595. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Ամանորի և Ս. Ծննդյան բարեմաղթությունները: Խմբագրական: 1956, հունվար, էջ 22—24:

2596. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Ամենայն Հայոց վեհափառ կաթողիկոս Նորին Ս. օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի ուղևորությունը արտասահման և վերադարձը Մայր Աթոռ Ս. Էջմիածին: [15 լուսանկարով]: 1956, ապրիլ-մայիս. էջ 22—42:

2597. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Առաջին տարին: Խմբագրական: [Վազգեն Ա-ի կաթողիկոսական ընտրության, օծման և գահակալության առաջին տարեդարձի տոնակատարությունը հոկտեմբերի 7-ին: Կաթողիկոսի կյանքի, գործունեության մասին]: 1956, հոկտ., էջ 3—8:

2598. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Արքության տվչություն: [Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանին: Դիմանկարով]: 1956, հոկտ., էջ 64—65:

2599. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Եկեղեցական սահմանադրություն: Խմբագրական: [Հայաստանյայց եկեղեցու սահմանադրության և եկեղեցական կանոնագրքի կազմության հարցի շուրջը]: 1956, օգոստ.-սեպտ., էջ 4—9:

2600. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Թափուր գերեզմանը: Խմբագրական: [Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 3—5:

2601. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Կահիրեի եպիսկոպոսական ժողովի պատմական նշանակությունը: (Խմբագրական): [Տեղի է ունեցել 1956-ի հուլիսի 5—8-ը Կահիրեում, նախագահությամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի, մասնակցությամբ 17 բարձրաստիճան հոգևորականների: Ժողովի բովանդակությունը շարադրված է տասը կետերի շուրջ]: 1956, հուլիս, էջ 7—10:

2602. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Հոգևոր ճեմարանի վերաբացումը: [Ուսումնական տարին սկսվելու առթիվ]: 1956, օգոստ.-սեպտ., էջ 38—41:

2603. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Մասնավոր վարդապետական իշխանության տվչություն: [Հոկտեմբերի 8-ին, վարդապետական իշխանություն ստացան Պարգև, Եղիշե, Վահան, Հայրիկ, Մուշեղ, Տիրայր, Մեսրոպ աբեղաները, նաև՝ կենսագրականներ]: 1956, հոկտ., էջ 66:

2604. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Մեր վերածնունդը և Անթիլիաս: Խմբագրական: 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 8—12:

2605. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Մի է Հայաստանյաց Առաքելական եկեղեցին, մի և անբաժան՝ հայոց հայրապետությունը: Խմբագրական: 1956, մարտ, էջ 3—5:

2606. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Ս. Լուսավորչի կանթեղը: Խմբագրական: 1956, փետրվար, էջ 9—11:

2607. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Սուրբ Էջմիածնի Հոգևոր ճեմարանն այսօր: 1956, հոկտ., էջ 56—61:

Բովանդ.՝ Հոգևոր ճեմարանի առօրյան:—Ճեմարանի ուսանողության թիվը և դասարանական տեղաբաշխումը:—Ճեմարանի դասախոսական կազմը և ուսումնական ծրագիրը:

2608. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Սուրբ Ստեփանոսի տոնը Մայր Աթոռում: 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 32—36:

Մեկ լուսանկար:

2609. [ՀԱՏԻՏՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի: Խմբագրական: 1956, հունիս, էջ 5—7:

2610. ՀԱՏԻՏՅԱՆ Գ[ԵՈՐԳ]:—Դանիել Վարուժան: «Բանաստեղծություններ»: Հայպետհրատ, Երևան, 1955, 447 էջ: [Գրախոսություն]: 1956, ապրիլ-մայիս, էջ 112—114:

2611. ՀՈՒՍՏԻՆԻԱՆ, ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ:—Գերագույն Հոգևոր խորհրդին: [Շնորհավորական հեռագիր Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 8:

2612. ՂՈՐՂԱՆՅԱՆ Կ[ԱՐԱՊԵՏ]:—Հայկական ՍՍՀ Պետական Մատենադարանն այսօր: [Ձեռագրերի ֆոնդի և գիտա-հետազոտական աշխատանքների մասին]: 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 104—108:

Երեք լուսանկար:

2613. ՃԱՇԿԵՐՈՒՅԹ վեհարանում Նորին սուրբ Օծության Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ: [Հոկտեմբերի 7-ին]: 1956, հոկտ., էջ 29—35:

Լուսանկար՝ Վեհափառ Հայրապետը շնորհակալության խոսք է ասում:

Շնորհավորանքի. բարեմաղթության խոսքեր՝ Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի, Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի, Շահե վարդապետ Աճեմյանի, Ավետիք Իսահակյանի, Ա. Տիրացյանի, Արահայոց թեմից՝ Վարդան եպիսկոպոսի, Շիրակից՝ Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանի, Նոր-Նախիջևանից՝ Հայրիկ վարդապետ Ավետիսյանի, Ադրբեջանից և Թուրքեստանից՝ Տիրայր վարդապետ Մարտիկյանի, Հմայակ Սեդգարյանի, Աշոտ Աբրահամյանի, Մարտիրոս Սարյանի, Սահմանյանի, Արթուն Հատիտյանի, Գր. Բեգմհայյանի և ուրիշների:

2614. Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ.»: (Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան,

1955 թ. 450 էջ)։ [Գրախոսություն]։ 1956, հունիս, էջ 62—68։

Ստորագր.՝ Վ. Վ.։

**2615. ՄԱՄՈՒԼԻ** տակ է։ «Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի ուղևորությունը»։ [Արտասահման՝ այց Սփյուռքի հայությանը։ Հայտարարություն գրքի հրատարակման մասին]։ 1956, օգոստ.-սեպտ., էջ [109] ներդիր։

**2616. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**։ [Լուրեր]։ 1956, հունվար, էջ 33—36։

Բովանդ.՝ Ամանորի հանդեսը Հոգևոր ճեմարանում։—Ս. Ծննդյան տոները Մայր Աթոռում։—Քահանայական ձեռնադրություններ։ — Կուսակրոնության պատրաստություն։—Եպիսկոպոսական նոր ձեռնադրություն։—Բարձրապատիվ տ. Կոմիտաս վարդապետը Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ։—Հնդիկ ականավոր գրող Կրիշան Չանդրը Մայր Աթոռում։—Վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ Մայր Աթոռում։ [Մայր Աթոռում բացվել են՝ 1. Եկեղեցական արծաթեղեն անոթների և իրերի վերանորոգման արհեստանոց։ 2. Եկեղեցական հանդերձանքների նորոգման և կարի սենյակ։ 3. Մայր տաճարի և Մայր Աթոռի նորոգման կարիքների համար մեկ ատաղձագործարան]։—Եկեղեցական թեմ։

**2617. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**։ [Լուրեր]։ 1956, փետրվար, էջ 19—21։

Բովանդ.՝ Ընդունելություն Մայր Աթոռում ի պատիվ Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի։ [Հունվարի 29-ին։ Ընդունելությանը ներկա է եղել Սվետլոզ Իսահակյանը]։—Մեծ պահքը Մայր Աթոռում։ [Փետրվարի 11-ից Քառասնորդական պահոց օրերը]։—Տյառնընդառաջի տոնը Մայր Աթոռում։ [Փետրվարի 14-ին հանդիսավոր պատարագ]։—Դասախոսություն Հոգևոր ճեմարանում։—Եկեղեցական թեմ։

**2618. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**։ [Լուրեր]։ 1956, մարտ, էջ 10—12։

Բովանդ.՝ Դասախոսություններ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանում։—Մաղկազարդը Մայր Աթոռում։—Չինական ժողովրդական ռեսպուբլիկայի նախագահի տեղակալ մարշալ Չժու Դեն Մայր Աթոռում։—Չեխոսլովակիան ռեսպուբլիկայի ազգային ժողովի պատվիրակությունը Մայր Աթոռում։—Եկեղեցական թեմ։

**2619. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**։ [Լուրեր]։ 1956, ապրիլ-մայիս, էջ 46—49։

Բովանդ.՝ Զատկական տոները Մայր Աթոռում։ Ապրիլի 1-ին՝ [Հարության տոնի օրը հանդիսավոր պատարագ]։ Ապրիլի 2-ին, Մայր Տաճարում պատարագ՝ նվիրված ննջեցելոց հիշատակին։—Ապրիլի 8-ին, Համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմների նահատակների հիշատակին մատուցվեց սուրբ պատարագ։—[Մայիսի 4-ին Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի մեկնումը Մոսկվա, նորաբաց հայկական եկեղեցու օծումը կատարելու և զատկական տոներին պատարագելու համար]։—[Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցու վերանորոգման և վերաբացման արարողությունների մասին։ Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ է նշանակվում Մայր Աթոռի միաբան՝ Պարգև աբեղա Գևորգյանը]։—[Մայիսի 10-ին, Քրիստոսի Համբարձման] և [Մայիսի 13-ին Երկրորդ Ծաղկազարդի տոնի առթիվ պատարագ։ Պատարագից հետո՝ հայրապետական մաղթանք, նվիրված Հայրապետական Աթոռը Սսից ս. Էջմիածին տեղափոխելու հիշատակին]։—[Մայիսի 27-ին Մայր տաճարում կարդացվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անդրանիկ կոնդակը]։ — Արտասահմանյան պատվիրակությունները Մայր Աթոռում։ [Շվեդիայի պրեմիեր-մինիստր Տագե Էրլանդերի այցելությունը։ Ապրիլի 7-ին՝ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Քրիստիան Պինոյի այցելությունը]։

**2620. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**։ 1956, հունիս. էջ 22—23։

Բովանդ.՝ [Հունիսի 2-ին «Սրբոյն Գրիգորի Լուսավորչին մերոյ ելն ի վիրապէն» տոնի առթիվ պատարագ Մայր տաճարում]։—[Հունիսի 8-ին, Մայր տաճարում Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի առթիվ հանդիսավոր պատարագ]։—[Հունիսի 21-ին, Մայր Աթոռում՝ «Սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ» տոնը]։—[Հունիսի 24-ին «Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի» տոնի]։—[Պարգև աբեղա Գևորգյանի նշանակումը Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ]։

**2621. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**։ [Լուրեր]։ 1956, հուլիս, էջ 34—36։

**2622. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ** [Լուրեր]։ 1956, օգոստ.-սեպտ., էջ 31—35։

Բովանդ.՝ [Սեպտեմբերի 29-ին, շաբաթ օրը հոգեհանգիստ Գևորգ Զ կաթողիկոսի շիրմի վրա]։—Քահանայական ձեռնադրություններ։ Օգոստոսի 5-ին, կիրակի օրը։ [Երևանի Ս. Սարգիս եկեղեցում]։—Օգոստոսի 19-ին, կիրակի օրը։ [Երևանի Ս. Սարգիս եկեղեցում քահանայական ձեռնադրություն]։—Այցելություններ։

**2623. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**։ [Լուրեր]։ 1956, հոկտ., էջ 47—49։

Բովանդ.՝ Հոկտեմբերի 6-ին, [Մայր Աթոռի ընդհանուր սեղանատանը հյուրասիրություն, մասնակցությամբ Վեհափառի, արտասահմանյան հյուրերի, միաբանության անդամների]։—Հոկտեմբերի 13-ին, շաբաթ [«Տօն Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց» և «յիշատակ գիւտի նշանագրացն Հայոց և թարգմանութեան Ս. Գրոց»]։—Հոկտեմբերի 21-ին, կիրակի [Մայր տաճարում պատարագ և Հոգեհանգիստ՝ Երուսաղեմի միաբան Պարգև եպիսկոպոս Վրթանեսյանի և Ստեփան Կամսարականի մահվան առթիվ]։

**2624. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**։ [Լուրեր]։ 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 27—31։

Բովանդ.՝ Նոյեմբերի 5-ին, երկուշաբթի [Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի և Շահե վարդապետ Աճեմյանի մեկնումը Մայր Աթոռից]։—Նոյեմբերի 17-ին, շաբաթ [Մայր Աթոռ ժամանեցին Հոգևոր ճեմարանում սովորելու համար Սիրիայից և Լիբանանից եկած ուսանողների 6 հոգուց բաղկացած առաջին խումբը]։—Քահանայական ձեռնադրություններ։ Դեկտեմբերի 9-ին, կիրակի [Երևանի Ս. Սարգիս եկեղեցում]։

**2625. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆ**։—Սփյուռքի բոլոր թեմերին։ [Հեռագրեր Վազգեն Ա-ի արտասահմանյան ուղևորությունից հայրենիք վերադառնալու մասին]։ 1956, ապրիլ-մայիս, էջ 21։

**2626. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ** դիվանատան կողմից։ [Հայտարարություն։ Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի և Շահե վարդապետ Աճեմյանի Մայր Աթոռից մեկնելու մասին]։ 1956. նոյեմբ.-դեկտ., էջ 122։

**2627. ՄԱՆԱՆԴՅԱՆ ՀԱԿՈԲ** ակադեմիկոս։—Համառոտ տեսություն Հին Հայաստանի պատմության։ 1956, հունիս, էջ 30—36, հուլիս, էջ 54—58, օգոստ.-սեպտ., էջ 54—58, հոկտ.-նոյեմբ., էջ 48—56. 1957, հունվար, էջ 51—56։

**2628. ՄԱՆՎԵԼՅԱՆ Ս[ՈՒՐԵՆ]**։—Նպատակը Մայր Աթոռի տպարանի հաստատման։ 1956. նոյեմբ.-դեկտ., էջ 112—113։

**2629. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ** (Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի հայոց)։—Վարդավառ։ Լույսի տոնը։ [Քարոզ]։ 1956, հուլիս. էջ 22—24։

**2630. ՄԱՏԵՆՋՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԲԵՂԱ**։—Այրի վանք կամ Գեղարդա վանք։ [Պատմական տեղեկություններ։ 1956, օգոստ.-սեպտ., էջ 70—72։

Մեկ լուսանկարով։

**2631. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ**։—

Հայաստանի պետական երգչային խմբի եկեղեցական համերգը Հոգևոր ճեմարանում: [Ղեկավարությամբ Արամ Տեր-Հովհաննիսյանի]: 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 87—88:

Տե՛ս՝ Հայաստանի Պետական երգչային խումբը:

2632. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ, Համայն Վրաց պատրիարք կաթողիկոս:—Ամենայն Հայոց Մայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Ա-ին: [Շնորհավորական հեռագիր Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 8:

2633. ՄԵԾԻ ՏԱՆՆ Կիլիկիո կաթողիկոսական ընտրության առնչությամբ փոխանակված հեռագրեր: 1956, հունիս, էջ 8—9:

Բովանդ.՝ Վազգեն Ա Մայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց:—Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի հեռագիրը Կիլիկիո կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Խորեն եպիսկոպոսին: [Անթիլիասի կաթողիկոսական Աթոռի եպիսկոպոսներին և աշխարհական ներկայացուցիչներին Ս. Էջմիածին, Մայր Աթոռ հրավիրելու և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի օծումը Մայր Տաճարում կատարելու մասին: Նույն բովանդակությամբ հեռագիր է առաքվում Կոստանդնուպոլսի պատրիարքին]:—Գարեգին պատրիարք:—Ամենապատիվ Տ. Գարեգին պատրիարքի հեռագիրը Նորին Սուրբ Օծություն Վեհափառ Հայրապետին: [Համաձայնություն հրավերին]:—Խորեն եպիսկոպոս Տեղապահ:—Կաթողիկոսական տեղապահ Տ. Խորեն եպիսկոպոսի պատասխանը Նորին Սուրբ Օծություն Վեհափառ Հայրապետին: [Մերժում՝ Էջմիածնի Մայր Տաճարում Անթիլիասի կաթողիկոսի օծումը կատարելուն: Հրավեր Մայր Աթոռի ներկայացուցիչներին Անթիլիաս ուղարկելու համար]:—Վազգեն Ա.:—Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի երկրորդ հեռագիրը կաթողիկոսական տեղապահ Տ. Խորեն եպիսկոպոսին: [Որպեսզի Տանն Կիլիկիո Աթոռը վերագտնի իր ներքին խաղաղությունը կրկին հրավեր Էջմիածին Մայր Աթոռ գալու համար]:

2634. ՅԱՆ ԿԻՅՎԻՏ, ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ:—Գերագույն Հոգևոր խորհրդին: [Շնորհավորական հեռագիր Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 9:

2635. ՆԻԿՈԼԱՅ ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ:—Գերագույն Հոգևոր խորհրդին: [Շնորհավորական հեռագիր Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 10:

2636. ՆՈՐ մատռան շինություն Սոֆիայում: [Հայոց գերեզմանատան մեջ]: 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 113—114:

Տե՛ս՝ Սոֆիայի հայոց գերեզմանատան մատռան հիմնարկեքի արարողությունը:

2637. ՆՈՐԻՆ Սուրբ օծություն Վեհափառ Հայրապետը Մոսկվայի հայոց Վաղարշապատ Սուրբ Հարություն եկեղեցում: [Մայիսի 5-ին, Զատկի Ծրագալույցին]: Մայիսի 13-ին պատարագից հետո Վեհափառ Հայրապետի նախագահությամբ՝ հոգեհանգստյան արարողություն նահատակների հիշատակին: 1956, հունիս, էջ 39—40:

2638. ՆՈՐԻՆ Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը Սովետական Հայաստանի քաղաքացի: 1956, փետրվար, էջ 15:

2639. ՆՈՐԻՆ Սուրբ Օծություն Վեհափառ Հայրապետի մոտ ճարտարապետների խորհրդակցություն: [Մայր Աթոռի, Վեհարանի և մյուս վանքերի վերանորոգման և շինարարական աշխատանքների մասին]: 1956, հունիս, էջ 20—21:

2640. ՆՈՐԻՆ Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի մեկնումը արտասահման: [Լիբանան: Մասնակցելու համար Անթիլիասում Կիլիկիայի կաթողիկոսի ընտրությանն ու օծմանը]: 1956, փետրվար, էջ 16—17:

2641. ՆՈՐԻՆ Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա պատարագի զգեստավորումով: [Լուսանկար]: 1956, փետրվար, էջ 2 [ներդիր]:

2642. ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ: 1956, հուլիս, էջ 44—45:

Բովանդ.՝ 1. Երևանի պետական գրական թանգարանին: [Արտասահմանյան ուղևորության ժամանակ Վազգեն Ա-ի ջանքերով, Լոնդոնում Րաֆֆու որդի Արշակ Մելիք-Հակոբյանի այրի Ալեքսանդրա Կորմիկ Մելիք-Հակոբյանից ստացվել են Րաֆֆուն պատկանող մի շարք անձնական իրեր և հանձնվել Երևանի գրական թանգարանին]:—2. Մայր Աթոռի թանգարանին: [Տարագրոս Տեր-Մովսիսյանի հարազատները Մայր Աթոռի թանգարանին են նվիրել արվեստագետի ութ գործերը: Լուսանկար՝ Ս. Էջմիածին: (Ցուղանկ Տարագրոսի, 1904 թ.)]:—3. Երևանի թատերագիտական թանգարանին: [Միջանորդությամբ դերասան Օվի Սևումյանի այրիից ստացվել է դերասանի զանազան դերերում նկարված 17 լուսանկար: Նկարները հանձնված են Երևանի թատերական թանգարանին]:

2643. ՇԻՐԱԿՅԱՆ խրոնիկա: [Լենինականի եկեղեցական երգչային խմբի մասին]: 1956, հուլիս, էջ 42—43:

Լուսանկար՝ Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու երգչային խումբը:

2644. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ընդունելություն և շնորհավորություն Վեհարանի ծաղկյա դահլիճում Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ: 1956, հոկտ., էջ 26—28:

Լուսանկար՝ վարպետը [Ավետիք Իսահակյան] շնորհավորում է Վեհափառ Հայրապետին:

2645. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ընդունելություններ: 1956, ապրիլ-մայիս, էջ 43:

Բովանդ.՝ ՍՍՌՄ Մինիստրների սովետի նախագահ Ն. Ա. Բուլգանինը ընդունեց Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ին:—Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Ա. Ե. Քոչինյանը ընդունեց Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ին:

2646. ՊԻՏԻՐԻՄ՝ ՄԻՆՍԿԻ ԵՎ ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ:—Ամենայն Հայոց Մայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին Ս. Օծություն Վազգեն Ա-ին: [Շնորհավորական հեռագիր Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 10:

2647. ՋԵՈՖՐԻ, ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ:—Նորին Սրբություն Վազգեն Ա-ին: [Շնորհավորական հեռագիր Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 8:

2648. ՌՈՒԺԻՑԿԻՅ՝ ՄՈՍԿՎԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ, ԴՈԿՏՈՐՍՈՎ՝ ՏԵՍՈՒՉ:—Ամենայն Հայոց Մայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին Ս. Օծություն Վազգեն Ա-ին: [Շնորհավորական հեռագիր Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 10:

2649. ՍԱՀԻՆՅԱՆ ԱԼ[ԵՔՍԱՆԴՐ]:—Նոր նյութեր Էջմիածնի Մայր Տաճարի կառուցվածքի վերաբերյալ: 1956, օգոստ.-սեպտ., էջ 60—69. նոյեմբ.-դեկտ., էջ 56—67:

Իմ լուսանկարով: Ուսումնասիրություն:

2650. ՍԱՐԳՍՅԱՆ Գ[ԵՂԱՄ]:—Շխմուրատի վանքը: Շամշադինի շրջան:—Վիմագրությունը: 1956, մարտ, էջ 20—29:

Երկու լուսանկարով:

2651. ՍԱՐԳՍՅԱՆ ԵՂԻՇԵ ԱԲԵՂԱ:—Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյանը Երևանի թեմում: 1956, օգոստ.-սեպտ., էջ 43:

2652. ՍԱՐԳՍՅԱՆ ԵՂԻՇԵ ԱԲԵՂԱ:—Մայր Աթոռի վերակազմված թանգարանը: [Թանգարանը բաղկացած է երեք մասից, ունի 800 ցուցանմուշ: Տեղե-

կություններ են տրված 43 ցուցանմուշների մասին: [Երեք լուսանկարով]: 1956, փետրվար, էջ 26—28:

2653. ՍԵՓԳԱՐՅԱՆ Հ[ՄԱՅԱԿ]:—Շինարարական ծավալուն աշխատանքներ Մայր Աթոռում: [Երկու լուսանկարով]: 1956, հուլիս, էջ 47—52:

2654. ՍԵՐՈՒՆՅԱՆ Կ.:—«Թագավոր Հայոց և Վրաց»: 1956, մարտ, էջ 46—47:

Ըստ վիմական տարեգրության 10-րդ դարի մի քանի թագավորներ՝ Գագիկ Ա, Աշոտ Գ Ողորմածը, Հովհաննես-Սմբատը, Աշոտ Գ թագավորի դուստր Սոփին, կրում էին «Հայոց և Վրաց Շահնշահ» կոչումը: Ըստ մեր պատմագիրներ Հովհաննես կաթողիկոսի և Ասողիկի այդ կոչումը լոկ պատվանուն չէր, այլ ուներ իրական նշանակություն:

2655. ՍՈՎԵՏԱԿԱՆ Հայաստանի 35-րդ տոնակատարությունը Փարիզի մեջ: 1956, փետրվար, էջ 60—61:

2656. ՍՈՎԵՏԱԿԱՆ Միության քրիստոնեական եկեղեցիների պատգամավորությունը Ամերիկայի Միացյալ Նահանգներում: [Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ներկայացուցիչ՝ Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը]: 1956, հունիս, էջ 27—30:

Երկու լուսանկար:

2657. ՍՍՌՄ Մինիստրների սովետին կից կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Իվան Վասիլևիչ Պոլյանսկու մահվան առթիվ փոխանակված հեռագրերը: 1956, հոկտ., էջ 31:

2658. ՍՐԲՈՑ թարգմանչաց տոնը Հոգևոր ճեմարանում: 1956, հոկտ., էջ 52—55:

2659. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Հոգևոր ճեմարանը հայտարարում է ուսանողների ընդունելություն 1956—1957 ուսումնական տարեշրջանի համար: 1956, հունիս, էջ [65] ներդիր:

2660. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Հոգևոր ճեմարանում: 1956, ապրիլ-մայիս, էջ 50:

Բովանդ.՝ Զատկի տոնական օրերը:—Զատկի արձակուրդները:—Քննական այցելություն:—Մշակութային արշավ:

2661. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Մայր Տաճարի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Շողակաթի տաճարների և նրանց շրջակա շենքերի վերանորոգումն ու բարեկարգումը: 1956, հուլիս, էջ 46—47:

2662. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ուխտավորները Մայր Աթոռում: 1956, օգոստ.-սեպտ., էջ 45—47:

Նկ.՝ Ամերիկահայ ուխտավորները Վեհափառ Հայրապետի հետ:

2663. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—[Լուսանկար]: 1956, հոկտ., էջ [1], ներդիր:

2664. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Ամենայն Հայոց Մայրագույն պատրիարք Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի քարոզը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում: [Հուլիսի 15-ին, Վարդավառի երկրորդ կիրակի]: 1956, հուլիս, էջ 13—16:

2665. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Անթիլիաս: Գերապատիվ Տ. Խորեն եպիսկոպոս Բարոյանին: Կիլիկիո կաթողիկոսարան: [Հեռագիր արտասահմանյան ուղևորությունից հայրենիք վերադառնալու մասին]: 1956, ապրիլ-մայիս, էջ 20:

2666. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Անթիլիաս-Բեյրութ: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական տեղապահ ամենապատիվ Տ. Խորեն եպիսկոպոս Բարոյանին: [Հեռագիր Հռոմից Լիբանանում տեղի ունեցած երկրաշարժի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 17:

2667. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Բեյրութ: Լիբանանի հանրապետության նախագահ Նորին գերազանցություն պ. Քամիլ Շամունին: [Հեռագիր Հռոմից: Լիբանանում տեղի ունեցած երկրաշարժի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 17:

2668. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Էջմիածին: Գերագույն հոգևոր խորհրդին: [Հեռագիր Փարիզից: Փրկչի Ս. Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 6:

2669. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Էջմիածին: Գերագույն հոգևոր խորհրդին: Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսի հեռագրական կարգադրությունը [Փարիզից] Տ. Տիրայր արքեպիսկոպոսի մահվան առթիվ: 1956, ապրիլ-մայիս, էջ 18:

2670. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Լոնդոն: Քենտերբերիի արքեպիսկոպոս Ջոֆֆրիին: Լամբեթի պալատ: [Շնորհավորական հեռագիր Փարիզից: Ս. Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 7:

2671. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կահիրեի, Փարիզի, Լոնդոնի և Միլանի հայոց առաջնորդներին: [Հեռագրեր արտասահմանյան ուղևորությունից հայրենիք վերադառնալու մասին]: 1956, ապրիլ-մայիս, էջ 20:

2672. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Հայաստանեայց եկեղեցվո երիտասարդաց կազմակերպության վարիչներուն և անդամներուն, ողջույն հայրական և օրհնություն հայրապետական: Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց եկեղեցվո երիտասարդաց կազմակերպության: 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 3—5:

2673. [ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ]:—Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Քրիստոսի հրաշափառ և սուրբ ծննդյան տոնի առթիվ Մայր Տաճարում: 1956, հունվար, էջ 29—30:

2674. [ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ]:—Հայրապետական քարոզ ամանորի առթիվ Մայր Տաճարում: 1956, հունվար, էջ 27—28:

2675. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ գերապատիւ Տ. Սիոն արքեպիսկոպոսի Մանուկեան, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, ողջոյն հայրական եւ օրհնութիւն հայրապետական: Նորին սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյանին արքության պատիվ շնորհելու առիթով: 1956, հուլիս, էջ 3—4:

2676. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Հոգեւոր հովուին հայոց Անգլիոյ գերաշնորհ Տ. Պսակայ եպիսկոպոսի Թումայեան, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, ողջոյն հայրական եւ օրհնութիւն հայրապետական: Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը՝ Գերաշնորհ Պսակ եպիսկոպոս Թումայանին Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ նշանակելու մասին: 1956, օգոստ.-սեպտ., էջ 3—4:

2677. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Մեծարգոյ Տիար Վահանայ Մալէզեան, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, ողջոյն հայրական եւ օրհնութիւն հայրապետական: Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Հայկական բարեգործական ընդհանուր միության վարիչ-պատվիրակ Վահան Մալեզյանի ու-

սունհինգամյա հոբելյանի առիթով: 1956, հուլիս, էջ 5—6:

**2678. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:**—Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Պիտիրիմին: [Շնորհավորական հեռագիր Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 7:

**2679. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:**—Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Հայկական բարեգործական Ընդհանուր Միության հիսնամյա հոբելյանի առիթով: 1956, հունիս, էջ 3—4:

**2680. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:**—Նորին սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Մայր Տաճարի լուսարարապետ գեր. Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանին արքության պատիվ շնորհելու մասին: 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 6—7:

**2681. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:**—Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի հեռագիրը Լիբանանի հանրապետության նախագահ նորին վսեմություն պ. Քամիլ Շամունին Անթիլիասի վերջին իրադարձությունների առնչությամբ: [Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական ընտրությունների ժամանակ ծագած անախորժությունների մասին]: 1956, օգոստ.-սեպտ., էջ 10—11:

**2682. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:**—Վեհափառ Հայրապետի քարոզը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում: (Խոսված սեպտեմբերի 2-ի կիրակի օրը): 1956, օգոստ.-սեպտ., էջ 16—19:

**2683. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:**—Երուսաղեմ: Հայոց Պատրիարքարան: Սուրեն եպիսկոպոս Քեմհաջյանին: Վեհափառ Հայրապետի հեռագիրը Երուսաղեմի հայոց պատրիարքարանին՝ պատրիարքական ընտրության հարցի կապակցությամբ: 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 17:

**2684. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:**—Վազգեն ծառայ Յիսուսի Քրիստոսի, ողորմութեամբն Աստուծոյ եւ կամօքն ազգիս եպիսկոպոսապետ եւ կաթողիկոս Ամենայն Հայոց, ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական մայր եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ Էջմիածնի: Քրիստոսաւանդ սիրոյ ողջոյն եւ օրհնութիւն հայրապետական՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, պատրիարքութեանց հայոց սրբոյ Երուսաղեմայ եւ Կոստանդնուպոլսոյ, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, քահանայից եւ սարկաւագաց, թեմական երեսփոխանական ժողովոց, թեմական եւ թաղական խորհրդոց եւ պաշտօնէից եւ սիրեցեալ համայն հաւատացեալ ժողովրդեան հայոց: Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի անդրանիկ կոնդակը: 1956, փետրվար, էջ 3—8:

**2685. ՎԱՐԴԱՆԱՆՑ** հիշատակը և Նորին Ս. օծություն Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը Մայր Աթոռում: 1956, փետրվար, էջ 18:

**2686. ՎԱՐԴԱՆԱՆՑ** տոնը Հոգևոր ճեմարանում: 1956, փետրվար, էջ 22—23:

**2687. ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ.:**—Ազգային մեծ բանաստեղծ Ռափայել Պատկանյանը: (Ծննդյան 125-ամյակի առիթով): 1956, մարտ, էջ 48—54:

Պատկանյանի դիմանկարով:

**2688. [ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ.]:**—Գրախոսություն: 1956, մարտ, էջ 60—63:

Բովանդ.՝ «Աղվեսագիրք», Երևան, 1955, 80 էջ:—Արագի «Երկերի ժողովածու», հտ. 1-ին, Երևան, 1955, 367 էջ:—Աշոտ Հովհաննիսյան: «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ», Երևան, 1955, 121 էջ:—Արիստոտել: «Պոետիկա», Երևան, 1955, 252 էջ:—Մկրտիչ Խերանյան: «Պոեմներ», 1955, 122 էջ:—Վաչե Նալբանդյան: «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը»: Երևան, 1955, 250 էջ:—Անահիտ Սահինյան: «Մարավ», Երևան, 1955, 487 էջ.—Ռաբինդրանաթ Տագորի «Պարտիզպանը» հայերեն:

**2689. ՎՐԱՀԱՅՈՑ** թեմի առաջնորդ գերապատիվ Տ. Վարդան եպիսկոպոսը Ախալքալակում: [Հովվական այցելություն]: 1956, հուլիս, էջ 41—42:

**2690. ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ն. (բժիշկ):**—Ադրբեջանի թեմն այսօր: 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 100—103:

Նկ.՝ Կիրովաբադի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:—Առաջնորդական տեղապահ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը Բաքվի քահանա հայրերի և եկեղեցական խորհրդի անդամների հետ:—Նկարչուհի Թամարա Սաթյանը Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում վերանորոգում է Քրիստոսի Հարության նկարը:

**2691. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ** Գերագույն Հոգևոր խորհրդի նախագահող:—Փարիզ: Սերովբե եպիսկոպոս Մանուկյանին:—Նյու-Յորք: Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանին:—Ներքին թեմերին: (Տ. Տիրայր արքեպիսկոպոսի մահվան առթիվ Ս. Էջմիածնի Հոգևոր խորհրդի հեռագրերը): 1956, ապրիլ-մայիս, էջ 18—19:

**2692. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ:**—Ձեր նահատակները: Քարոզ: (Խոսված փետրվարի 9-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Վարդանանց տոնի առթիվ): 1956, փետրվար, էջ 12—14:

**2693. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ:**—Փարիզ: Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Նորին Ս. օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ին: [Շնորհավորական հեռագիր Հարության տոնի առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 6:

**2694. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ:**—Խաչի խորհուրդը: Քարոզ: 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 18—19:

**2695. Տ. ՏԻՐԱՅՐ** արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան: [Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի նախկին առաջնորդ: Հայտարարություն մահվան առթիվ]: 1956, ապրիլ-մայիս, էջ 18:

**2696. ՑԱՆԿ** «Էջմիածին» ամսագրում 1956 թվականի ընթացքում տպագրված նյութերի: 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 123—127:

**2697. ՓԱՓԱԶՅԱՆ Ժ.:**—Հայրենիքիս: [Բանաստեղծություն]: 1956, մարտ, էջ 55:

**2698. ՓՐԿՉԻ Ս.** Հարության տոնի առթիվ Նորին Վեհափառության անունով Փարիզում ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները: 1956, ապրիլ-մայիս, էջ 11—13:

**2699. ՓՐԿՉԻ Ս.** Հարության տոնի առիթով թեմերից ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները: 1956, ապրիլ-մայիս, էջ 14—16:

**2700. ՔԱՂՎԱԾՔՆԵՐ** Գերագույն Հոգևոր խորհրդի նիստերի արձանագրություններից: 1956, հուլիս, էջ 37—38:

Բովանդ.՝ 1956 թ. հունիսի 8-ի նիստից: [1956—57 ուս. տարում մեծացնել ճեմարան ընդունվելիք ուսանողների թիվը]:—1956 թ. հունիսի 22-ի նիստից: [Վեհափառ Հայրապետի հաղորդումը՝ Միացյալ Նահանգների հայ գաղութը ուղարկել է 100.000 դոլարի հանգանակություն հօգուտ Մայր Աթոռին նվիրվելիք տպարանի: Նաև՝ Մոսկվայի հայոց նորաբաց Ս. Հարություն եկեղեցու վերանորոգման համար հատկացվում է 10.000 ռուբլի]:—1956 թ. հունիսի 29-ի նիստից: [Եղիշե աբեղա Սարգսյանին Ռումինիայի հայոց թեմի ժամանակավոր տեղապահ նշանակելու մասին]:—1956 թ. հուլիսի 18-ի նիստից: [Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ Պարգև աբեղա Գևորգյանի և

եկեղեցական խորհրդի զեկուցագիրը Մոսկվայի հայոց եկեղեցու վերանորոգման աշխատանքների մասին]:

2701. ՔԱՂՎԱԾՔՆԵՐ Գերագույն Հոգևոր խորհրդի նիստերի արձանագրություններից: 1956, օգոստ.-սեպտ., էջ 29—30:

Բովանդ.՝ 1956 թ. օգոստոսի 10-ի նիստից: [Գերագույն հոգևոր խորհրդի եզրակացությունը՝ Զարեհ եպիսկոպոսը ոչ կաթողիկոս է, ոչ տեղապահ և զուրկ է կաթողիկոսական հոգևոր և վարչական իշխանությունից: 2. Անթիլիասի դեպքերին միջամտել է ոստիկանությունը: 3. Անթիլիասի միաբանական ընդհանուր ժողովը հուլիսի 29-ին իր օրինական մեծամասնությամբ տեղապահ է ընտրել Խադ արքեպիսկոպոսին: Հեռագիր է հղել Լիբանանի կառավարությանը, խնդրելով նրա աջակցությունը, որպեսզի տեղում հարգվեն հայ եկեղեցու կանոնները ու ավանդությունները: Գերագույն հոգևոր խորհուրդը իր գոհունակությունն է հայտնում Խադ արքեպիսկոպոսի տեղապահ ընտրվելու առթիվ:—Հոկտեմբերի 7-ը համարել Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի գահակալության տարեդարձ և այդ առթիվ Մայր Աթոռ հրավիրել Թուրքիո հայոց պատրիարք՝ Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանին, Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ՝ Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանին, Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանին, Երուսաղեմի Աթոռի միաբան՝ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանին:—Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հաղորդումը՝ Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի, Միջին Ասիայի և Ուկրաինայի հայկական եկեղեցիների վերանորոգման և վերաբացման մասին:—Հայաստանի մի շարք գործող եկեղեցիների վերանորոգման մասին:—Ադրբեջանի և Թուրքեստանի հայոց թեմակալ առաջնորդ Եզնիկ եպիսկոպոս Աղնավուրյանին ազատել իր պարտականություններից հրավիրելով Մայր Աթոռ, թեմակալ գործերը հանձնել՝ Տիրայր աբեղա Մարտիկյանին:

2702. ՔԱՂՎԱԾՔՆԵՐ Գերագույն հոգևոր խորհրդի նիստերի արձանագրություններից: 1956, նոյեմբ.-դեկտ., էջ 25—28:

Բովանդ.՝ 1956 թվականի հոկտեմբերի 28-ի, նոյեմբերի 2-ի, դեկտեմբերի 14-ի նիստերից. [Երուսաղեմի հայոց պատրիարքական աթոռի կացության մասին: Նաև՝ Մայր Աթոռի վերատեսուչ հանձնաժողովի հաշվետվություն]:

2703. [ՔՈԼԱՆՋՅԱՆ ՍՈՒՐԵՆ]:—(Գրախոսություն): [ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի 1955 թ. ընթացքում լույս տեսած մի շարք գրքերի]: 1956, փետրվար, էջ 62—63:

Բովանդ.՝ Խաչատուր Աբովյան: «Երկերի լիակատար ժողովածու», հատոր 6-րդ տեքստով, ծանոթագրություններով, անձնանունների բառարանով և անվանացանկով, 1955 թ. 336 էջ:—Պիոն Հակոբյան: «Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը», 1955 թ. 254 էջ:—Արամ Ինճիկյան: «Ավետիք Իսահակյան», մենագրություն բանաստեղծի կյանքի և գրական ստեղծագործության մասին», 1955, 290 էջ:—Արամ Ղանալանյան: «Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ակունքները»: 1955, 105 էջ:

Ստորագր.՝ Ք.:

## 1957

2704. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ:—Հերմեսի փիլիսոփայական աշխատության հին հայերեն թարգմանությունը: [Ուսումնասիրություն]: 1957, դեկտ., էջ 41—47, 1958, հունվար, էջ 46—59:

Բնագրեր՝ Հերմես եռամեծք առ Ասկղեպիոս սահմանք, էջ 46—59:

Սկ.՝ Աստուած իմանալի աշխարհից...

2705. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ:—Էջմիածին երեկ և այսօր: 1957, դեկտ., էջ 23—27:

2706. ԱՄԱՆՈՐԻ առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և պետական անձնավորությունների միջև փոխանակված ողջույնի հեռագրերը: 1957, հունվար, էջ 13—14:

2707. ԱՄԱՆՈՐԻ հանդեսը Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանում: 1957, հունվար, էջ 38—40:

2708. ԱՄԱՆՈՐԻ և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և նվիրապետական աթոռների առաջնորդարանների ու թեմական-եկեղեցական խորհուրդների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1957, հունվար, էջ 19—25:

2709. ԱՄԱՆՈՐԻ և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և ազգային մարմինների, Մայր Աթոռի բարերարների և ազգային ծանոթ անձնավորությունների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1957, հունվար, էջ 26—30:

2710. ԱՄԱՆՈՐԻ և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1957, հունվար, էջ 15—18:

2711. ԱՄԵՆԱՅՆ Հայոց ծայրագույն պատրիարք-կաթողիկոս Նորին սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի, Համայն Վրաստանի պատրիարք-կաթողիկոս Նորին սուրբ օծություն Մելքիսեդեկ Գ-ի, Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքի ներկայացուցիչ Նորին սրբազնություն Սերգեյ եպիսկոպոսի խաղաղության կոչը: [Կոչը ընդունված է Ս. Էջմիածնում Վազգեն Ա-ի կաթողիկոսական օծման երկրորդ տարեդարձին]: 1957, հոկտ., էջ 10—11:

2712. «ԱՄԵՆԱՅՆ Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի ուղևորությունը»: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1956. Լույս տեսավ: [Հայտարարություն]: 1957, հունվար, էջ [65], ներդիր:

2713. ԱՄԵՆԱՅՆ Հայոց Հայրապետի շնորհակալության հեռագիրը Վրաստանում կատարված այցելությունից հետո: 1957, հուլիս-օգոստ., էջ 34—35:

2714. ԱՆԹԱԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ:—Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: 1957, սեպտ., էջ 17—25:

2715. ԱՆԹԱԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ:—Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և մայր Հայաստանում: 1957, սեպտ., էջ 26—29:

2716. ԱՆԹԱԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ:—Նորին սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հովվապետական այցելությունը Արարատյան թեմին: 1957, դեկտ., էջ 13—19:

Երկու լուսանկարով:

2717. ԱՆԹԱԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ:—Նորին սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հովվապետական այցելությունը Վրահայոց թեմին: [11 լուսանկար]: 1957, հուլիս-օգոստ., էջ 8—33:

2718. [ԱՅՆԹԱԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ].— Սիամը: [Բանաստեղծություն]: 1957, հունվար, էջ 46—47:

2719. ԱՆԹԱԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ.— Վեհարանի նոր շենքի պաշտոնական հանձնումը: (Ի կատարումն ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ Ն. Ա. Բուլգանինի կարգադրության, Հ. Գ. Ինջիկյանը, իբրև Սովետական Հայաստանի կառավարության ներկայացուցիչը, հանձնեց և Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն ընդունեց Էջմիածին քաղաքում գտնվող վեհարանի երկհարկանի շենքը, կառուցված 1914 թվականին, հատկապես Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանի համար, բաղկացած 67 դահլիճներից և սենյակներից, շուրջ 1020 քառակուսի մետր օգտագործելի տարածությամբ): 1957, հունվար, էջ 41—43:

Նկ.՝ Վեհարանի նոր շենքի հանձնման արձանագրության ստորագրումը:—Վեհարանի նոր շենքը:

2720. ԱՆԹԱԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ.— Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի հանդիսությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:—Պաշտոնական ճաշկերույթ Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ: [Ութ լուսանկար]: 1957, հոկտ., էջ 34—57:

2721. ԱՍՏՎԱԾ մեզի հետ: [Կրոնական: Արտատպված «Սիոն», 1956, դեկտեմբեր]: 1957, փետրվար-մարտ, էջ 17—18:

2722. ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ընթերցումներ: Խաչի խորհուրդը: 1957, սեպտ., էջ 12:

2723. ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆԱԿԱՆ ընթերցումներ: 1957, մայիս, էջ 15—16:

Բովանդ.՝ Մարգարէութիւն Եսայեայ: (Գլուխ ԿԴ, 1—6):—Սաղմոս: (Սաղմոս ԽԶ (ԽԷ), 2—10):—Գործք Առաքելոց: (Գլուխ Ա, 1—14):

2724. ԱՎԵՏԻՍՅԱՆ Ա.:— Գլաձորի դպրոցի մեծ մանրանկարիչ Թորոս Տարոնացին: [ԺԴ դարի առաջին կեսի Գլաձորի մանրանկարչության դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ]: 1957, հուլիս-օգոստ., էջ 64—70, սեպտեմբեր, էջ 52—58. 1958, ապրիլ, էջ 53—58, մայիս, էջ 45—49, հունիս, էջ 58—61:

25 լուսանկար մանրանկարչություններ:

2725. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ.— Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հովվապետական այցելությունը Ադրբեջանի հայոց թեմին: [1957-ի սեպտեմբերի 20-ին]: 1957, հոկտ., էջ 12—35:

2726. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ.— Սիմեոն Երևանցի կաթողիկոսի պայքարը Աղվանից կաթողիկոսական և Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռների կենտրոնախույս ձգտումների դեմ: 1957, մայիս, էջ 31—34:

2727. ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ հայ գաղութը: [Տեղեկություններ Հեռավոր Արևելքի եկեղեցական համայնքների գործունեության մասին]: 1957, դեկտ., էջ 53—54:

2728. ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. Հովհաննես քահանա Դանիելյան: [Կենսագրություն: Դիմանկարով]: 1957, նոյեմ., էջ 71:

2729. ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանի քահանայության քառասնամյակը: 1957, հունիս, էջ 62:

2730. ԲԱՂԻՐՅԱՆ Ս[ՏԵՓԱՆ].— Հուշեր Կոմիտաս վարդապետի մասին: (1902—1908 թթ.): [Կոմիտասի լուսանկարով]: 1957, հուլիս-օգոստ., էջ 58—63, սեպտեմբեր, էջ 46—51, նոյեմբեր, էջ 66—68:

2731. ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ.— Ներսես Ե Աշտարակեցի: (Մահվան 100-ամյակի առթիվ): 1957, փետրվար-մարտ, էջ 48—51:

2732. ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ.— Վահան ծայրագույն վարդապետ Բաստամյան: 1957, հունիս, էջ 39—42:

2733. ԳԱԼԵՆՏԵՐ ՄԱՏԹԵՈՍ Ա.:— «Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի կյանքը և գործունեությունը»: [Գրախոսություն նույնանուն գրքի մասին]: 1957, փետրվար-մարտ, էջ 44—45:

2734. ԳԱԼԻԿՅԱՆ Ա[ՐԾՐՈՒՆ] Գ. (Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ):— Շինարարությունը և նրա հեռանկարները Մայր Աթոռում:—1957 թվականի ընթացքում Մայր Աթոռում կատարված շինարարական աշխատանքների ընդհանուր պատկերը:—1958 թվականի ընթացքում Մայր Աթոռում կատարվելիք վերակառուցման և նոր շինարարական աշխատանքների ծրագիրը: [Չորս լուսանկարով]: 1957, դեկտ., էջ 34—40:

2735. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ.— 1957, հունիս, էջ 13:

Բովանդ.՝ 1957 թ. հունիսի 14-ի նիստից: Գերագույն հոգևոր խորհրդի նիստում: [Մայր Աթոռի հաշվապահության 1955 թ. երկրորդ կիսամյակի հաշիվների ստուգման արդյունքները:—Քահանայական թոշակների հաստատում:—Երևանի Ս. Զորավար եկեղեցու նորոգման հարց]:

2736. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ.— Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1956 թվականի տարեկան հաշվեկշիռը: Ա) Բալանս առ 31-ը դեկտեմբերի 1956 թ.:—Բ) 1956 թվականի գործունեության արդյունքները:—Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1957 թվականի նախահաշիվը: 1957, ապրիլ, էջ 52—57:

2737. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ.— Սուրբ Էջմիածնի Հոգևոր ճեմարանը հայտարարում է ուսանողների ընդունելություն 1957—1958 ուսումնական տարեշրջանի համար: 1957, ապրիլ, էջ 69:

2738. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ.— Քաղվածքներ Գերագույն հոգևոր խորհրդի նիստերի արձանագրություններից: 1957, փետրվար-մարտ, էջ 36—37:

Բովանդ.՝ 1957 թ. փետրվարի 8-ի նիստից: [Վեհափառ Հայրապետի հաղորդումը Երուսաղեմի հայոց պատրիարքարանի շուրջը տեղի ունեցող իրադարձությունների մասին: Հաղորդում՝ վեհարանի նոր շենքը, կառավարության կողմից, Մայր Աթոռին վերադարձնելու մասին]:—1957 թ. փետրվարի 22-ի նիստից: [Վեհափառ Հայրապետի հաղորդումը՝ Պետական պատկերասրահից և Բնագիտական թանգարանից Մայր Աթոռին հանձնվելիք սրբապատկերների և եկեղեցական այլ իրերի մասին: Նաև՝ Մայր Աթոռի տպարանի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին]:

2739. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ.— Քաղվածքներ Գերագույն հոգևոր խորհրդի նիստերի արձանագրություններից: 1957, ապրիլ, էջ 32—33:

Բովանդ.՝ 1957 թ. մարտի 25-ի նիստից: [Գլխավոր հաշվապահ Գառնիկ Քեհյանի զեկուցումը Մայր Աթոռի ներքին թեմերի և եկեղեցիների 1956 թ. տարեկան հաշվետվությունների և 1957-ի նախահաշիվների հաստատման մասին:—Հաղորդում Երուսաղեմի հայոց պատրիարքական ընտրության մասին: Որոշում՝ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի ընտրությունը հաստատել որպես Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ]:—1957 թ. մայիսի 24-ի նիստից: [Վրաստանի թեմի առաջնորդ նշանակել Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանին]:

2740. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ. Քաղվածքներ Գերագույն հոգևոր խորհրդի արձանագրություններից: 1957, մայիս, էջ 27—28:

Բովանդ.՝ 1957 թ. մայիսի 6-ի նիստից: [Ընթերցում «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության Կենտրոնական խնամակալության 1957-ի 27 ապրիլի թվակիր հայտարարության]:

2741. ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը Մայր Աթոռում: 1957, հունվար, էջ 44—45:

Տ. Դերենիկ եպիսկոպոսի նկարով:

2742. ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փո-

լատյանը Շիրակի թեմում: 1957, փետրվար-մարտ, էջ 41—42:

**2743. ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ.** Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանի և հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ *Լազարյանի ժամանումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: 1957, հոկտ., էջ 72—76:
[*Խմբանկարով]:

**2744. ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ.** Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի այցելությունը Ադդիս-Աբեբայի և Խարթումի հայ գաղութներին: 1957, հուլիս-օգոստ., էջ 85—87:

**2745. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ:** Խաչը: [Չափածո]: (Արտատպված Գրիգոր Տաթևացի «Քարոզգիրք», հատոր ամառան) աշխարհաբար թարգմանությամբ: 1957, սեպտ., էջ 16:

**2746. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.:**—Մոզաիկ նկարչության արվեստը Հայաստանում: 1957, փետրվար-մարտ, էջ 59—63, ապրիլ, էջ 58—62, մայիս, էջ 44—49, հունիս, էջ 49—55, հուլիս-օգոստ., էջ 71—75:
Բովանդ.՝ Ակնարկ մոզաիկ նկարչության ընդհանուր պատմության:—Հայ մոզաիկ նկարչության ակունքները:—Գառնիի հեթանոսական մոզաիկան:—Դվինի մոզաիկան:—Զվարթնոցի մոզաիկան:—Երուսաղեմի մոզաիկաները:—Հայկական մոզաիկան Կոստանդնուպոլսում:—Մոզաիկաներ Անիում:—Հախճապակյա մոզաիկա:

**2747. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ:**—Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանատան հաղորդագրությունը: 1957, նոյեմբ., էջ 19—20:
Բովանդ.՝ Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց:—Բեյրութ: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական աթոռակալ ամենապատիվ Տ. Զարեհ եպիսկոպոսին, [Հեռագիր: Ամերիկահայ էջմիածնական թեմի մի շարք եկեղեցիներ Կիլիկյան Աթոռի իշխանության ներքո առնելու մտադրության դեմ]:

**2748. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Հ[ՈՎՍԵՓ]:**—Մարմաշենի վանքը և նրա վիմագրությունները: 1957, մայիս, էջ 35—43:
Բովանդ.՝ Ա. Պատմական համառոտ ակնարկ:—Բ) Պեղումները:—Գ) Հուշարձանների նկարագրությունը:—Դ) Մարմաշենի վիմագրությունները:—Ե) Տապանագրություններ:
Նկ.՝ վանքի ընդհանուր տեսարանը. վանքը վերանորոգումից առաջ և հետո:

**2749. ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ** ձեռնադրություն Մայր Աթոռում: 1957, նոյեմբ., էջ 49—55:
Չորս լուսանկար:

**2750. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ** հայոց նորընտիր պատրիարք ամենապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի ընտրության առթիվ փոխանակված հեռագրերը: 1957, ապրիլ, էջ 26:
Բովանդ.՝ Քեմհաճյան Սուրեն եպիսկոպոս:—Էջմիածին: Նորին սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին:—Վազգեն Ա:—Երուսաղեմ: Նորին ամենապատվություն Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան, պատրիարք Երուսաղեմի հայոց: [Շնորհավորանք ընտրության առթիվ]:—Ներսոյան Տիրան արքեպիսկոպոս՝ պատրիարք Երուսաղեմի հայոց:—Էջմիածին: Նորին սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին: [Շնորհակալական պատասխան հեռագիր]:

**2751. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ** հայոց պատրիարքարանի վերջին իրադարձությունների շուրջ: [Քաղվածներ Սփյուռքահայ թերթերից: Պատրիարքական ընտրության մասին]: 1957, հունվար, էջ 48:
Բովանդ.՝ Ճանաչում Տեղապահի ընտրության:—Պատրիարքական ընտրության ձեռնարկ:—Դատ Պատրիարքարանի դեմ:

**2752. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ** տոնը Հոգևոր ճեմարանում: 1957, հոկտ., էջ 79—81:

**2753. ԹԵՔԵՅԱՆ ՎԱՀԱՆ:**—Խորհուրդ Վարդանանց: [Բանաստեղծություն]: 1957, փետրվար-մարտ, էջ 81:

**2754. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ:**—Երկու հայր: [Մանրապատում Խրիմյան Հայրիկի և հայկական կոտորածներին գերդաստանը կորցրած Տ. Սարգիս քահանայի միջև]: 1957, նոյեմբ., էջ 38:

**2755. ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ:**—Խրիմյան Հայրիկը: [Հուշեր]: 1957, նոյեմբ., էջ 40—48:
Խրիմյանի դիմանկարով:

**2756. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ:**—Լուսավորչի աջը: Շողակաթի տոնին առիթով: 1957, դեկտ., էջ 20—22:

**2757. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ:**—Փոքր խորհրդածություն մը Հայրապետական կոնդակի առթիվ: [Վազգեն Ա-ի 1957 թ. հունվարի 14-ի, «Համայն հայ հոգևորականությանը» ուղղված կոնդակի առթիվ: Արտատպված՝ «Շողակաթ», 1957, փետրվար-մարտ համարից]: 1957, մայիս, էջ 10—11:

**2758. ԽՈՍՔ** տիար Հ. Խաչմանյանին: [Բանավեճ Անթիլիասի կաթողիկոսական ընտրությունների շուրջը]: 1957, փետրվար-մարտ, էջ 6—14:
Ստորագր.՝ «Էջմիածին» ամսագրի խմբագրություն:

**2759. ԽՐԻՄՅԱՆ** Հայրիկի մահվան հիսնամյակին նվիրված հանդիսություն Հոգևոր ճեմարանում: 1957, նոյեմբ., էջ 48:

**2760. ԾԱՂԿԱՔԱՂ** շարակնոցից: 1957, հունիս, էջ 10—11:
Բովանդ.՝ Շարական Էջմիածնի:—Շարական եկեղեցւոյ:—Մաղթանք ի տօնի Սուրբ Էջմիածնի:—Հայրապետական օրհներգ:

**2761. ԾԱՂԿԱՔԱՂ** շարակնոցից: Շարական համբարձման: 1957, մայիս, էջ 17:

**2762. ԾԱՂԿԱՔԱՂ** շարակնոցից: Շարականք սրբոյ խաչի: 1957, սեպտ., էջ 13:

**2763. ԿԱՐԾԻՔՆԵՐ** Խրիմյան Հայրիկի մասին: 1957, նոյեմբ., էջ 34—37:
Բովանդ.՝ Դուրյան Եղիշե արքեպիսկոպոս:—Գուշակյան Թորգոմ արքեպիսկոպոս:—Աղայան Ղազարոս:

**2764. ՀԱԿՈԲՅԱՆ Գ[ՐԻԳՈՐ]:**—Ներսես Շնորհալին և իր ժամանակաշրջանը: [Ուսումնասիրություն]: 1957, սեպտ., էջ 38—45, 1958, հունվար, էջ 59—68, փետրվար-մարտ, էջ 82—95, ապրիլ, էջ 39—44:
Բովանդ.՝ Ներսես Շնորհալու համառոտ կենսագրությունը:—Շնորհալուն վերագրվող շարականները:—«Այսօր անճառ»:—«Նայեաց սիրով» և «Ի քէն հայցեմք» երգերը:—Շնորհալու ավագ շաբաթվա և հարության շարականները:—Ավագ օրհնություն վառ ձայն:

**2765. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ:** Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչների ժամանման մասին: [Սըր Սիդնի Քեյն և ճարտարապետ Էդվարդ Ութուճյան]: 1957, հուլիս-օգոստ., էջ 79:

**2766. ՀԱՅ** գրողները հայ և վրաց ժողովուրդների և մշակույթների փոխհարաբերության մասին:—[Հովհաննես Թումանյան: («Թումանյանը քննադատ», Երևան, 1939 թ., էջ 442—445) [գրքում]:—Ավետիք Իսահակյան: (Ա. Իսահակյան «Երկերի ժողովածու», Երևան, 1951 թ., 4-րդ հտ., էջ 102—104):—«Սովետական Վրաստան», Թբիլիսի, 18 փետրվարի 1941 թ.]: 1957, հուլիս-օգոստ., էջ 96—99:

**2767. ՀԱՅ** և Անգլիկան եկեղեցիների փոխհարաբերությունների շուրջ Վեհափառ Հայրապետի և Քենտրբերիի արքեպիսկոպոսի միջև փոխանակված գրություններ: 1957, մայիս, էջ 7—9:

**2768. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ** Սովետական կարգերի հաստատման 37-րդ տարեդարձի առթիվ Ամենայն Հայոց Հայրապետի հղած հեռագիրը և ստացված պատասխանները: 1957, նոյեմբ., էջ 16—17:

**2769. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ** բարձր գնահատություն: 1957, ապրիլ, էջ 51:

